«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2023

ՆԱԽԱԲԱՆ

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան» համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի (այսուհետ՝ ՄԳՀ, Համալսարան, բուհ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է ուսումնական հաստատության նախաձեռնությամբ և նրա կողմից ներկայացված դիմում-հայտի հիման վրա: Հավատարմագրման գործընթացը կազմակերպվել և համակարգվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ) և 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած է եղել 4 տեղացի և 1 միջազգային փորձագետից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանն, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, փորձագետների առջև դրված էր երկու խնդիր՝

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,
2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու բուհի հավակնությունների տեսանկյունից:

Սույն Զեկույցը պարունակում է Մխիթար Գոշ համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային դիտարկումները ԵԲԿՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 10

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 12

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 12

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 12

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 15

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 15

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 18

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 21

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 27

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 32

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 40

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 46

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 50

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 55

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 60

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 62

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 67

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 68

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 68

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 70

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 73

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 76

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 77

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 78

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Փորձագիտական խումբը բարձր է գնահատում վերջին մեկ տարվա ընթացքում բուհի իրականացրած աշխատանքները: Ներքին աուդիտի և փորձագետների խորհրդատվությունների հիման վրա բուհին հաջողվել է իրականացնել հակաճգնաժամային քաղաքականություն: ՄՈՒՀ-ը գիտակցելով առկա խնդիրները համախմբվել է դրանց լուծման շուրջ ներգրավելով բուհի աշխատակիցներին, դասախոսներին և ուսանողներին:

ՄՈՒՀ-ը նպատակ ունենալով թողարկել միջազգային չափանիշներով բարձր որակավորմամբ շրջանավարտներ, իրականացրել է բենչմարքինգ նմանատիպ ծրագրերի իրականացնող համալսարանների հետ, որի արդյունքում ՄԿԾ-ները վերանայվել են ինչպես փաստաթղթային հենքով՝ այնպես էլ ապահովվել է ժամանակին համահունչ նյութատեխնիկական բազայով, որի համար հատկացվել են անհարժեշտ ֆինանսական ռեսուրսներ: Հարկ է նշել, որ այս համալրումները արտահայտվում են առավելապես բժշկական մասնագիտությունների ծրագրերում: ՄՈՒՀ-ը ընդհանուր առմամբ ապահովում է անհարժեշտ ուսումնական միջավայր, այսուհանդերձ փորձագիտական խումբը կարծում է, որ բժշկական մասնագիտությունների դրական փորձը անհարժեշտ է տարածվել նաև մյուս մասնագիտություններով կրթական ծրագրերի վրա:

Այս բոլոր գործընթացները դրական են անդրադարձել մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման որակական բաղադրիչի բարելավմանը և նպաստել արժանահավատ որակավորումների շնորհմանը, որոնք և գտնվել են իրականացված բարեփոխումների առանցքում:

Մյուս կրթական ծրագրերը իրականացվում են միայն հեռակա ուսուցման ձևով, քանի որ առկա ուսուցմամբ իրականացումը ՄՈՒՀ-ը մրցունակ չի համարում, հաշվի առնելով այլ պետական բուհերի հետ մրցակցությունը: «Բուժական գործ» կրթական ծրագիրը իրականացվում է միայն անգլերեն լեզվով, օտարերկրացի ուսանողների համար՝ իսկ «Ստոմատոլոգիան» հայերեն և անգլերեն լեզուներով: Օտարերկրացի ուսանողների առկայությունը և տվյալ կրթական ծրագրերի շարունակական իրականացումը ներկա փուլում ՄՈՒՀ-ի զարգացման և ֆինանսական միջոցների ներգրավման հիմնական ուղղությունն է: Այս տեսանկյունից ֆինանսական միջոցների դիվերսիֆիկացիան և այլընտրանքային աղբյուրների որոնումը թույլ կտան հիմնվել ոչ միայն արտաքին վեկտորի (օտարերկրացի դիմորդներ) այլև ներքին ռեսուրսների վրա ապահովելով կայուն զարգացումը և բոլոր ՄԿԾ-ների շարունակականությունը:

Փորձագիտական խումբը բարձր է գնահատում բուհի ղեկավարության ջանքերով ձևավորված ուսանողակենտրոն միջավայրը: Ուսանողները բուհի զարգացման կարևոր ներուժն են, փորձագիտական այցի ընթացքում ակնառու էր, որ ակտիվ դիրքորոշմամբ և իրենց առնչվող գործընթացներում ներգրավված ուսանողությունը, արդեն իսկ մեծ դերակատարություն ունի ՄԳՀ-ի հեռանկարային զարգացման մեջ:

Կարևոր է ընդգծել բարձր որակավորումներ ունեցող հետազոտության մեջ ներգրավված պրոֆեսորադասախոսական կազմի առկայությունը, որը ներկա փուլում բուհի ուժեղ կողմերից մեկն է: Դասախոսները մեծ դերակատարություն ունեն նաև ուսումնառության և հետազոտության փոխկապակցման գործընթացներում, ինչպես հետազոտության արդյունքները ներդնելով կրթության մեջ, այնպես էլ ներգրավելով ուսանողներին համատեղ հետազոտական նախագծեր կատարելիս:

Հետազոտության շարունակական փոխկապակցումը ուսումնառության հետ առաջիկայում կարող է նպաստել բուհի կայուն զարգացմանը: Այս գործընթացներում կարևոր դերակատարություն կարող է ունենալ նորաստեղծ գիտահետազոտական կենտրոնը, որը նախատեսում է միավորել բուհի աշխատակազմը հետազոտության շուրջ, իրատեսական դարձնելով բուհի հետազոտական կենտրոն դառնալու հեռանկարը: Վերոնշյալ գործընթացները սկզբնավորման փուլում են, սակայն փորձագիտական խմբի հանդիպումները ցուց տվեցին, որ ՄՈՒՀ-ը ունի համապատասխան ներուժ իր հետազոտական ռազմավարությունը կյանքի կոչելու համար, ներդնելով համապատասխան մեխանիզմներ, ինչպես ուսանողների այնպես էլ դասախոսների հետազոտական գործունեությունը խրախուսելու և խթանելու համար:

Այս համատեքստում կարևոր է բուհի արտաքին կապերը՝ համագործակցության հուշագրերը, և պայմանագրերը կլինիկական բազաների և գործընկեր համալսարանների հետ ինչպես հայաստանում, այնպես էլ արտերկրում, որոնք անշուշտ նպաստում են միջազգայնացման գործընթացների դրական դինամիկային և հետագա զարգացմանը: Արտաքին հարաբերությունների զարգացման անհրաժեշտության վրա ազդող ամենակարևոր գործոնը օտարերկրյա քաղաքացիների համար անգլերենով իրականացվող կրթական ծրագրերի առկայությունն է:

ՄՈՒՀ-ի հասարակության հետ կապերի, հետադարձ կապի միջոցների և մեխանիզմների ուսումնասիրության արդյունքում կարելի ընդգծել, որ վերջին տարիներին բազմաթիվ քայլեր են իրականացվել այդ կապերը ամրապնդելու, ՄՈՒՀ-ի վարկանիշը բարձրացնելու ուղղությամբ, որ անշուշտ իր դրական ազդեցությունն է ունեցել: Բուհը առավել մեծ հնարավորություններ ունի հասարակությանը օգտակար արժեքներ տրամադրելու տեսանկյունից, այս ուղղությամբ նպատակային աշխատանքների իրականացումը ուսանողների և դասախոսների ներգրավմամբ, կնպաստեն բուհի վարկանիշի բարձրացմանը ինչպես Հայաստանում այնպես էլ միջազգային հարթակներում, որը կապահովի բուհի կողմից սահմանված տեսլականի և զարգացման ընթացքի արդյունավետ իրականացումը:

Իհարկե Համալսարանի՝ տարածաշրջանի առաջատար մշակութային կենտրոններից մեկը դառնալու հեռանկարը բավական համարձակ և հավակնոտ ձգտում է, հաշվի առնելով, որ բուհը ապահովում է բազմամշակութային և բազմաէթնիկ միջավայր, որտեղ սոցիալականացվում և կրթություն են ստանում տարբեր ազգերի ներկայացուցիչներ: Բացի գիտահետազոտական աշխատանքներից սովորողները ներգրավված են նաև երգի և պարի խմբակներում, մասնակցում են սպորտային և մարզամշակութային միջոցառումների և մրցույթների, թեև փորձագիտական խմբի այցելության արդյունքներից դատելով պետք է արդարացիորեն փաստել, որ բուհի մարզամշակութային ենթակառուցվածքները և մասնավորապես մարզադահլիճը արդիականացման լուրջ կարիք ունեն: Ուստի տարածաշրջանային առաջատար մշակութային կենտրոն դառնալու համար մասնավոր և տեղային բնույթի ծրագրերը, անշուշտ չեն կարող բավարար լինել: Հարկավոր է բուհի շարունակական վերազինման, միջազգային հեղինակությանն ու վարկանիշի բարձրացմանն ուղղված նույնքան հավակնոտ քայլեր և ծրագրեր: Այս առումով դրական գնահատելով տարածաշրջանի առաջատար մշակութային կենտրոններից մեկը դառնալու անկեղծ մղումը պետք է արձանագրել վերջինիս իրատեսական լինելու խոցելիությունը՝ առնվազն կարճաժամկետ հեռանկարում: Նույնը կարող ենք ասել նաև բուհի նպատակներին հասնելու համար կանոնադրությամբ սահմանված առաջին խնդրի՝ այն է տարածաշրջանային ուսումնական կենտրոնի վերածվելու վերաբերյալ:

Կարևոր է ընդգծել կառավարման համակարգում տեղ գտած դրական փոփոխությունները, որոնք փոխկապակցվել են բուհում որակի մշակույթի ձևավորման անհրաժեշտության հետ:

Համալսարանի կանոնակարգող ու նորմատիվային փաստաթղթերի ամբողջությունը, ինչպես նաև փորձագիտական այցի արդյունքները համոզմունք են ձևավորում, որ կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին լիարժեք մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը: Աշխատանքներ են տարվում նաև արտաքին շահակիցների ակտիվությունը բարձրացնելու, նրանց ներգրավվածությունը մեծացնելու ուղղությամբ, սակայն մեխանիզմները դեռևս կանոնակարգված չեն: Հիմնադրի, ռեկտորի և կառավարման կոլեգիալ մարմինների փոխհամաձայնեցված համագործակցությունը ապահովել է բուհի արդյունավետ ինքնակառավարումը, այս առումով բուհի մասնավոր (ոչ պետական) կարգավիճակը թույլ է տալիս ճկուն կառուցակարգեր ներդնել, նոր արտաքին շահակիցներ ներգրավվել և բուհը տանել ռազմավարական զարգացման ճանապարհով:

Չնայած Որակի ապահովման համակարգը գտնվում է իր ձևավորման փուլում, սակայն փորձագիտական խումբը կարևոր է համարում ընդգծել, որ որակի կենտրոնի աշխատանքների շնորհիվ հնարավոր է դարձել իրականացնել պլանավորված բարեփոխումները, մասնավորապես կարճ ժամանակահատվածում կենտրոնը ապահովել է տվյալների հավաքագրման գործընթացները, նպաստել է արտաքին փորձագետի ներգրավմամբ ներքին աուդիտի իրականացմանը, որը և հիմք է հանդիսացել բուհի ՌԾ իրականացման աշխատանքների վերանայման և հակաճգնաժամային քայլերի ձեռնարկման համար: Բնականաբար, այս կարճ ժամանակահատվածը (մեկ տարի) բավարար չէր բուհում ՈԱ մշակույթի լիարժեք ձևավորման համար, սակայն ՈԱԿ-ը կարող է ստեղծել բոլոր հնարավոր նախադրյալները որակի մշակույթի հետագա տարածման և կայացման համար, որը հնարավոր միայն ՈԱ գործընթացներում շահակիցներին ներգրավելու կառուցակարգերի առկայության և բուհի ղեկավարության և աշխատակազմի ակտիվ համագործակցության պայմաններում:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1) Վեր հանված խնդիրներին արագ արձագանքումը և սեփական թույլ կողմերի քաջ գիտակցումը:
2) Կառավարման համակարգի ճկունությունը և հակաճգնաժամային գործողությունների իրականացումը:
3) Վերանայված ՄԿԾ-ների առկայությունը, համահունչությունը նմանատիպ այլ կրթական ծրագրերին:
4) ՄԿԾ-ների նպատակների իրագործման համար համապատասխան ուսումնական միջավայրի, ենթակառուցվածքների և ռեսուրսային բազայի առկայությունը և դրանց շարունակական բարելավման ձգտումը:
5) Դիմորդների հավաքագրման ժամանակակից գործիքակազմի կիրառությունը, հիմնվելով աշխատաշուկայի և իր վրա ազդող գործոնների ուսումնասիրության վրա:
6) Ակտիվ, պահանջատեր և իր կրթական կարիքներով հետաքրքրված ուսանողության առկայությունը:
7) Բուհի ուսանողակենտրոն գործունեությունը, ուսանողների բավարարվածությունը ուսումնական միջավայրից և իրենց տրամադրվող աջակցությունից
8) Մասնագիտական անհրաժեշտ որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի (հատկապես պրակտիկ ոլորտից) առկայությունը:
9) Ուսումնական գործընթացի և հետազոտության փոխկապակցվածությունը և հետազոտական կենտրոնի առկայությունը:

10) Օտարերկրյա բուհերի հետ արդյունավետ համագործակցությունը, միջազգային ծրագրերում ընդգրկվածությունը, դասախոսների և ուսանողների շարժունության հնարավորությունները:

Հաստատության թույլ կողմերն են.

1) ՌԾ վերջնարդյունքների գնահատման արդյունարար ցուցիչների անկատարությունը
2) Կառավարման համակարգում (ՌԾ պլանավարված գրեթե բոլոր գործընթացներում) ՊԻԳԲ շրջափուլի դեռևս ոչ ամբողջական լինելը:
3) Արտաքին շահակիցների թույլ ներգրավվածությունը կառավարման և ՄԿԾ-ների բարելավման կրթական գործընթացներում:
4) Ուսանողներին և դասախոսներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու և խրախուսելու մեխանիզմների բացակայությունը:
5) Հատուկ կարիքներ ունեցող շահակիցների համար նախատեսված հարմարությունների բացակայությունը÷
6) Դասախոսների մասնագիտական առաջընթացի ապահովման մեխանիզմների անկատարությունը՝ վերապատրաստումների չպլանավորվածությունը:
7) Տվյալահենք որոշումների կայացման համար քանակական և որակական վերլուծական բաղադրիչի թույլ արտահայտվածությունը հաշվետվություններում
8) Ներքին և արտաքին շահակիցների առջև ՄՈՒՀ-ի հաշվետվողականությունը ապահովող հրապարակային և թափանցիկ գործունեության միջոցների և գործիքակազմի թերի կիրառությունը
9) Ներքին և արտաքին շահակիցների թույլ ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներին
10) Որակի ապահովման ներքին համակարգի ձևավորման փուլում լինելը և դրա թույլ ազդեցությունը որոշումների կայացման վրա:

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1) Նպատակների սահմանման հարցում հավակնոտ ձգտումները հնարավորինս համադրել առկա հնարավորությունների և իրողությունների հետ, դրանց մեջ շեշտադրել իրատեսականության գործոնը:
2) Առաքելության և նպատակների անշեղ իրականացման առումով առավել մեծ ուշադրություն դարձնել փաստաթղթային հենքին, դրանց համակարգմանը և կանոնակարգմանը:
3) Մեծ ուշադրություն դարձնել անկախ արտաքին շահակիցներ ներգրավման շարունակականությանը և գործատուների շրջանակի ընդլայնմանը:

Կառավարումն ու վարչարարությունը

4) Մշակել կառավարման համակարգի արդյունավետության գնահատման հստակ համակարգ:
5) Ակտիվացնել արտաքին շահակիցների (ոչ միայն ի դեմս համատեղությամբ աշխատող դասախոսների) ներգրավվածությունը և ազդեցության հնարավորությունները կառավարման և այլ գործընթացներում:
6) Մշակել իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման հստակ և չափելի որակական ու քանակական ցուցիչներ:

Մասնագիտության կրթական ծրագրերը

7) ՄԿԾ-ների մշակման գործընթացում ավելի ակտիվ ներգրավել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցներին:
8) Բարելավել ՄԿԾ-ների մշտադիտարկման և արդյունավետության գնահատման մեխանիզմները, սահմանել գնահատման արդյունարար ցուցիչներ:
9) Բարելավել հեռակա համակարգի դասընթացների կազմակերպումը և այն հարմարեցնել հեռակա ուսուցման ձևին:

Ուսանողները

10) Ակտիվացնել տեղացի դիմորդների հավաքագրման ուղղված միջոցառումները:
11) Նպաստել տեղացի և օտարերկրյա ուսանողների առավել սերտ հաղորդակցմանը և համագործակցությանը:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

12) Հստակեցնել երիտասարդ կադրերի ներգրավման քաղաքականությունը՝ վերլուծել առանձին մասնագիտությունների համար ՊԴ կազմի համալրվածության տվյալները / սեռ, տարիք, աշխատանքային փորձ և այլն/:
13) Ապահովելով ՊԴ կազմի սահուն սերնդափոխության մեխանիզմներ,
14) Վերանայել և գործարկել ՊԴ կազմի վարկանիշավորման կարգը՝ գնահատման հիմքում դնել հստակ վերլուծական տվյալներ:

Հետազոտությունը և զարգացումը

15) Հստակեցնել Գիտահետազոտական կենտրոնի դերն ու ապահովել ազդեցությունը գիտահետազոտական գործընթացների զարգացման վրա:
16) Ապահովել ուսումնական և հետազոտական գործընթացների փոխկապակցման կայուն մեխանիզմների առավել արդյունավետ կիրառումը՝ գնահատելով արդյունքները և բարելավելով դրանք:
17) Ապահովել ՊԴ կազմի և ուսանողների ներգրավվածությունը գիտահետազոտական աշխատանքներում՝ ներդնելով խրախուսման և խթանման գործուն մեխանիզմներ:
18) Նախատեսել և հատկացնել համապատասխան միջոցներ հետազոտական ոլորտում ներբուհական դրամաշնորհների ֆինանսավորման համար:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

19) Բազմազանեցնել ֆինանսական ներհոսքերը, գտնել այլընտրանքային աղբյուրներ:
20) Մշակել ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ:
21) Ապահովել ռեսուրսների համաչափ բաշխումը ըստ ՄԿԾ-ների և նյութատեխնիկական բազայի արդիականացման միասնական մոտեցումները:
22) Ստեղծել հատուկ կարիք ունեցողների համար համապատասխան միջավայր:
23) Շարունակաբար բարելավել ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրը:

Հասարակական պատասխանատվությունը

24) Վերանայել ՄՈՒՀ-ի հաշվետվողականության համակարգը, ներդնելով հաշվետվությունների կատարման հստակ ցուցանիշներ՝ ապահովելով

քանակական և որակական վերլուծությունների իրականացումը, փոխկապակցելով դրանք ՌԾ ԳԱՑ-երի հետ:

25) Ապահովել ՄՈՒՀ-ի ընթացակարգերի և գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը հասարակությանը:
26) Վերանայել և բազմազանեցնել հասարակության հետ հետադարձ կապի մեխանիզմները:
27) Բարելավել հասարակությանը գիտելիքների փոխանցման մեխանիզմները, օգտագործելով ՄՈՒՀ-ի ռեսուրսները և հնարավորությունները, այդ գործընթացներում շարունակաբար ներգրավելով դասախոսներին և ուսանողներին:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

28) Մշակել արտաքին կապերի և միջազգայնացման ոլորտի կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրեր, սահմանելով արդյունքների գնահատման չափելի ցուցանիշներ:
29) Շարունակաբար աշխատանքներ իրականացնել ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունության ակտիվացման ուղղությամբ բոլոր մասնագիտությունների գծով:
30) Բժշկական մասնագիտություններում առկա փորձը ներդնել և կիրառել նաև բուհում իրականացվող մյուս մասնագիտություններում՝ ուշադրություն դարձնելով օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը,

Որակի ներքին ապահովման համակարգը

31) Ապահովել ներքին և արտաքին շահակիցների մոտիվացված ներգրավվածությունը որակի ներքին ապահովման գործընթացներում:
32) Ապահովել բոլոր գործընթացների իրագործման համար ՊԻԳԲ շրջափուլով իրականացումը:
33) Մշակել և կիրառել համալսարանի բոլոր գործընթացների որակի գնահատման ցուցիչներ և պարբերաբար վերլուծել գործընթացների արդյունավետությունը:
34) Մշակել բուհի գործունեության բոլոր ուղղությունների վրա ազդող գործոնների ուսումնասիրության ընթացակարգեր և գործիքներ:

_____

Ասյա Սիմոնյան

Փորձագիտական խմբի ղեկավարի

22 սեպտեմբերի 2023թ.

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Դիտարկումներ

Համալսարանը լուրջ տեղ է հատկացնում ԵԲԿՏ-ին ինտեգրվելու անհրաժեշտությանը: Անցած 2 տարիների ընթացքում ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքում իրականացվել են արմատական բարեփոխումներ, մշակվել են երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորման փաստաթղթեր, ձևավորվել է Որակի վերահսկման կենտրոն, և աշխատանք է սկսվել շահակիցների գոհունակության գնահատման ուղղությամբ: ՄԿԾ-ները վերանայվել են, կատարվել են կառուցվածքային փոփոխություններ՝ հիմք ընդունելով Եվրոպայի և Միացյալ Նահանգների առաջատար համալսարանների կրթական ծրագրերի (հեռակա ՄԿԾ-ներ), ինչպես նաև ազգային ու ռուսական բժշկական ՄԿԾ-ների հետ բենչմարքինգը, այդ թվում՝ Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիայի (WFME) չափանիշներին համապատասխան հավատարմագրված համալսարանների հետ: Հավատարմագրված կազմակերպությունների (IAAR (Ղազախստան), AQCECD (Ռուսաստան) պրոֆեսիոնալ փորձագետների կողմից իրականացվել են արտաքին անկախ աուդիտներ, որոնց հիման վրա մշակվել և իրականացվում են գործողությունների ծրագրեր: Համալսարանում ստեղծվել է գիտահետազոտական կենտրոն, որը թույլ կտա նյութական և մարդկային ռեսուրսները կենտրոնացնել գիտական հետազոտությունների ամենաարդյունավետ անցկացման, ստացված տվյալների կրթական գործընթացում ներդնելու վրա: Այս ամենը վկայում է համալսարանի ղեկավարության մտադրության մասին՝ ՄՈՒՀ-ի աշխատանքը կառուցել Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) ուղեցույցների, չափանիշների և չափորոշիչների պահանջներին համապատասխան, որոնք ձևակերպվել են Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում բարձրագույն կրթության որակի ապահովման ստանդարտների և ուղեցույցների հիման վրա: ՄՈՒՀ-ը կարևորում է կրթական ծառայությունների միջազգայնացումը և արտահանումը և հռչակում է դրանք որպես զարգացման կարևորագույն ուղղություններից մեկը: Տարեցտարի ավելանում է արտասահմանցի ուսանողների թիվը: Մի շարք շրջանավարտներ ցանկանում են հետագայում ուսումը շարունակել ոչ միայն իրենց հայրենիքում (օտարերկրյա ուսանողները հիմնականում Հնդկաստանի քաղաքացիներ են), այլ նաև եվրոպական համալսարաններում, ինչը ստիպում է ՄՈՒՀ-ին ձգտել մասնագետներ պատրաստել ԵԲԿՏ-ի պահանջներին համապատասխան: Համագործակցության հուշագրեր են ստորագրվել նաև Չեխիայի և Բելգիայի բուհերի հետ, համագործակցության պայմանագրեր են կնքվել ռուսաստանյան բուհերի հետ, մեկնարկել են ուսանողների ակադեմիական փոխանակման ծրագրերը (Պերմի պետական բժշկական համալսարան): ՄՈՒՀ-ը նախատեսում է մասնակցել Erasmus ծրագրին:

Համալսարանի կայքը գտնվում է արդիականացման և լրացման փուլում, դեռևս ներկայացված չեն շատ կարևոր տեղեկություններ (օրինակ՝ բուհի առաքելությունը, կրթական ծրագրերի հավելվածները ուսումնական պլանի տեսքով և այլն), ինչը դժվարացնում է կամ նույնիսկ անհնարին դարձնում արտաքին շահակիցների և հասարակության մասնակցությունն ու տեղեկացվածությունը:

Այնուամենայնիվ, այս պահին ՄՈՒՀ-ի որակի ապահովման մշակույթը և կառավարման համակարգը ձևավորման փուլում են: Որակի ապահովման ՊԻԳԲ մոտեցման ապահովման հիմնական սկզբունքը ներդրվել է պլանավորման և մասնակի իրականացման մակարդակում, չկան կատարված գործողությունների գնահատման արդյունավետ մեխանիզմներ և մինչ օրս չկան մշակված ուղղիչ միջոցառումներ:

Խորհրդատվություն

ՄՈՒՀ-ի նախատեսվող ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ է կատարել համապատասխան համալրումներ ըստ կազմակերպական կառուցվածքի: Առանցքային կետերից է միջազգային կապերի գծով պրոռեկտորի թափուր պաշտոնում պրոֆեսիոնալ աշխատակցի նշանակումը:

ԵԲԿՏ-ին հաջող ինտեգրվելու համար համալսարանը պետք է դրսևորի ավելի բաց մոտեցում, ինչը հիմնականում իրականացվում է կազմակերպության լիարժեք գործող պաշտոնական կայքի միջոցով:

Անհրաժեշտ է նաև համակարգել ակադեմիական փոխանակումները, այդ թվում՝ հեռավար եղանակով: Covid-19-ի համաճարակը հանգեցրել է նրան, որ աշխարհի բոլոր համալսարանները մշակել են առցանց ուսուցման մեխանիզմներ, ուստի այս բաղադրիչի ներդրումը կարող է բավականին արագ իրականացվել: Եվրոպական համալսարանների, հարևան երկրների՝ Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիայի (WFME) կողմից հավատարմագրված համալսարանների դասախոսներին որպես դասախոս հրավիրելը հզոր խթան կլինի կրթական ծրագրերի մշտադիտարկման և մշտական արդիականացման համար թե՛ բովանդակային, թե՛ կառուցվածքային առումով:

ՄՈՒՀ-ի կողմից սկսված աշխատանքները, որոնք ուղղված են դասավանդման և գնահատման ժամանակակից մեթոդների հետ կապված դասախոսական կազմի վերապատրաստմանը, պետք է շարունակվեն և ավարտվեն դասախոսական անձնակազմի 100 տոկոս ընդգրկմամբ: Որակավորումների բարձրացման միջոցառումները պետք է իրականացվեն ոչ միայն Հայաստանում, այլև արտասահմանյան բուհերում, որոնք կարող են անցկացվել նաև հեռակա կարգով՝ ֆինանսական ռեսուրսների ծախսման տնտեսապես մոտեցմամբ: Սա սերտ կապված է դասախոսների՝ օտար լեզուների իմացության խնդրի հետ, ինչին ՄՈՒՀ-ը նույնպես ուշադրություն է դարձրել վերջին տարիներին:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[1] կողմից.

1. Փորձագիտական խմբի ղեկավար՝ **Ասյա Սիմոնյան –** ՇՊՀ-ի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, գեղարվեստական մարմնամարզության մարզիչ, Հայաստան:
2. **Գուրգեն Հովհաննիսյան –** ԵՊՀ Գիտական քաղաքականության վարչության առաջատար մասնագետ,_աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայաստան:
3. **Վահե Թորոսյան –** Հայաստանի եվրոպական համալսարանի գիտական խորհրդի քարտուղար, իրավաբանության ամբիոնի դասախոս, իրավագիտության թեկնածու, դոցենտ, Հայաստան:
4. **Ալեքսեյ Կրյուկով** /միջազգային փորձագետ/ - Կուրսկի պետական բժշկական համալսարանի միջազգային բժշկական ինստիտուտ, ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ռուսաստանի Դաշնություն:
5. **Էդգար Մանուչարյան** – Եվրասիա միջազգային համալսարանի ուսանող, Հայաստան:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ և հաստատվել ՈԱԱԿ տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ քարտուղարության ղեկավար՝ ***Անահիտ Ութմազյանը***

Թարգմանությունը կատարել է՝ ***Քրիստինե Օհանյանը***

Արձանագրությունները կազմել է՝ ***Լիանա Ալավերդյանը***

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, համակարգողը և թարգմանիչը ստորագրել են գաղտնիության պարտավորագիր և շահերի բախման բացառման հայտարարագիր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար:

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանը դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և ՄԳՀ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հավատարմագրման գործընթացի ժամանակացույցով սահմանված ժամկետներում համալսարանը, ըստ Հավատարմագրման կարգով հաստատված ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության հայերեն և ռուսերեն տարբերակները, ինչ պես նաև ուղեկցող փաստաթղթերի փաթեթները:

[1] Հավելված 1. Փորձագիտական խմբի ինքնակենսագրականներ

Համալսարանի ինքնավերլուծությունն իրականացրել է հատուկ այդ նպատակով ռեկտորի ժ/պ հրամանով ձևավորված աշխատանքային խումբը:

Խմբում ներգրավված են եղել ներկայացուցիչներ բուհի վարչական, ուսումնական, պրոֆեսորադասախոսական համակազմից, ինչպես նաև՝ ուսանողներ:

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է ինքնավերլուծությունը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Հիմք ընդունելով համակարգողի եզրակացությունը, կայացվել է որոշում ինքնավերլուծությունն ընդունելու մասին:

Այնուհետև ինքնավերլուծությունն ու կից փաստաթղթերի փաթեթը և համալսարանի կողմից լրացված էլեկտրոնային հարցաշարը տրամադրվել են փորձագիտական խմբին:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ը փորձագետների հետ քննարկել են ՀՀ հավատարմագրման կարգը, չափանիշներն ու չափորոշիչները, փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները, նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները, հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով բուհի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ սահմանված ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի[2], ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև, փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[3]: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն և այլն:

Նախնական այց

2023 թվականի հունիսի 26-ին տեղի է ունեցել հանդիպում Համալսարանի ղեկավար կազմի հետ: Հանդիպման ժամանակ քննարկվել և համաձայնեցվել է փորձագիտական այցի ժամանակացույցը, ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Քննարկվել են ֆոկուս խմբային հանդիպումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված պայմանները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցի նախորդ օրը փորձագիտական խումբն իրականացրել է համալսարանի ռեսուրսների ու ենթակառուցվածքների[4] դիտարկում, այցելել է բազային կլինիկաներ, ինչպես նաև որպես դիտորդ մասնակցել ամփոփիչ ատեստավորման քննություններին: Այնուհետև, ՈԱԱԿ-ում տեղի է ունեցել փորձագիտական խմբի փակ հանդիպում, միջազգային փորձագետի հետ քննարկվել և համաձայնեցվել են փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում

[2] Հավելված 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ

[3] Հավելված 2. Փորձագիտական այցի ժամանակացույց

[4] Հավելված 4. Ուսումնասիրված ռեսուրսներ

ուսումնասիրման ենթակա խնդիրները, ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցվել են հետագա քայլերը:

Փորձագիտական այցն իրականացվել է 2023թ. հուլիսի 5-ից 8-ը ընկած ժամանակահատվածում: Այցին մասնակցել են փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը, թարգմանիչը և համակարգողի օգնականը:

Փորձագիտական այցը սկսվել է համալսարանի ռեկտորի հետ հանդիպմամբ և ավարտվել ՄԳՀ-ի ղեկավար կազմի հետ հանդիպմամբ: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների դասախոս և ուսանող մասնակիցները, դեկանները, ամբիոնի վարիչները, գործատուներն ու շրջանավարտներն ընտրվել են բուհի կողմից նախապես տրամադրված ցանկից: Իրականացվել են ժամանակացույցով նախատեսված բոլոր հանդիպումները:

Այցի ընթացքում տեղի են ունեցել մասնագիտական հանդիպումներ ընտրված 3 կրթական ծրագրի շրջանակներում՝ «Բուժական գործ», «Իրավագիտություն» և «Ստոմատոլոգիա»: Փորձագետներն՝ ըստ իրենց մասնագիտական ուղղվածության, զուգահեռ հանդիպումներ են ունեցել տվյալ կրթական ծրագրի պատասխանատուի, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ:

Տարբեր հանդիպումների ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրության և դիտարկումների հիմնական արդյունքներն ամփոփվել են յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում և այցի ավարտին կազմակերպված փորձագիտական խմբի ամփոփիչ հանդիպումների ժամանակ: Խումբը քննարկել է հիմնական արդյունքները և եկել ընդհանուր համաձայնության նախ հավատարմագրման չափորոշիչների, հետո նաև չափանիշների պահանջների բավարարման վերաբերյալ: Չափանիշների բավարարման վերաբերյալ վերջնական եզրակացությունները ձեռք են բերվել խմբի բոլոր անդամների կողմից բաց քննարկման արդյունքում՝ կիրառելով փոխհամաձայնության սկզբունքը:

Փորձագիտական գնահատումը կատարվել է՝ ըստ Հավատարմագրման պետական չափանիշների, գնահատման երկաստիճան սանդղակով՝ բավարար և անբավարար:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը զեկույցի նախնական տարբերակը պատրաստել է համալսարանի ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա խմբի ղեկավարը ՈԱԱԿ-ի համակարգողի օժանդակությամբ պատրաստել է փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Միջազգային փորձագետը պատրաստել է իր եզրակացությունը և գործընկերային գնահատման առանձին կարծիք ու խորհրդատվություններ: Փաստաթղթերը թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբին: Գործընկերային գնահատման կարծիքն ամբողջությամբ ներառվել է զեկույցի տեքստում:

Փորձագիտական նախնական զեկույցի վերաբերյալ ԳՄՀ-ն դիտարկումներ չի ներկայացրել:

Փորձագիտական խումբը վերջնականացրել է զեկույցը և տրամադրել բուհին 2023 թվականի սեպտեմբերի 22-ին:

Անահիտ Ութմազյան
Փորձագիտական խմբի համակարգող

22 սեպտեմբերի 2023 թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Պատմություն.

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանը, բարձրագույն մասնագիտական կրթություն տրամադրող մասնավոր ուսումնական հաստատություն է: Համալսարանը հիմնադրվել է 1996 թվականին և կրում է միջնադարյան հայ մեծանուն իրավաբան **Մխիթար Գոշի** անունը:

Համալսարանի առանձնահատկությունը շարունակական կրթությունն է. քոլեջն ավարտելուց հետո ԲՈՒՀ-ում կրթությունը շարունակելու հնարավորությունը՝ բակալավրիատից մինչև մագիստրոսական կրթություն, ինչպես նաև՝ բժշկական և հումանիտար մասնագիտությունների ինտեգրումը:

Այս պահին ՄԳՀ-ի կրթական գործունեության առաջնային ուղղությունը աշխատաշուկայում պահանջված բարձր որակավորում ունեցող մասնագետի պատրաստումն է:

«Մխիթար Գոշ» համալսարանը երիտասարդ, բայց արագ զարգացող համալսարան է: Արտաքին աուդիտներ անցնելուց հետո, 2022 թվականին Համալսարանի գործունեության միջանկյալ արդյունքների հիման վրա, թարմացվել է ԲՈՒՀ-ի առաքելությունը, ինչպես նաև վերանայվել է Համալսարանի կառուցվածքը: Համալսարանի կառուցվածքը համալրվել է նոր ստորաբաժանումներով և կադրային հաստիքներով (օրինակ՝ ստեղծվեցին Ընդհանուր բաժինը (Փաստաթղթաշրջանառության) և Գիտահետազոտական կենտրոնը) :

Համալսարանը նպատակ ունի դառնալ միջազգայնորեն ճանաչված առաջատար տարածաշրջանային կրթական և գիտական հաստատություն, որն իրականացնում է բարձրորակ բազմալեզու կրթական ծրագրեր, ծավալում գիտահետազոտական գործունեություն՝ ուղղված բժշկության, իրավագիտության, կառավարման զարգացմանը և դրանց միջոցով նպաստում տարբեր սոցիալական խնդիրների հաղթահարմանը

2. Կրթություն.

ՄԳՀ-ն իրականացնում է բարձրագույն, միջին մասնագիտական, ինչպես նաև լրացուցիչ կրթական ծրագրեր: Համալսարանը կրթական ծառայություններ է մատուցում Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, ինչպես նաև օտարերկրյա ուսանողներին: Օտարերկրյա ուսանողների մեծ մասը սովորում են բժշկական ֆակուլտետում՝ «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտություններով: Միջազգային ուսանողների 90%-ը Հնդկաստանի քաղաքացիներ են: Ֆակուլտետներում սովորում են նաև արտասահմանյան այլ երկրների ուսանողներ՝ Ռուսաստանից, Շրի Լանկայից, Իրանից, Վրաստանից, Եգիպտոսից, Բրազիլիայից, ԱՄՆ-ից:

ՄԳՀ կրթական ծրագրերն ուղղված են սովորողների և շրջանավարտների անհրաժեշտ կարողությունների ձևավորման ապահովմանը, ինչն արտացոլված է ինչպես ՄԳՀ առաքելության, այնպես էլ ռազմավարական ծրագրում.

1. Մշտադիտարկված և վերամշակված մասնագիտական կրթական ծրագրերի առկայություն՝ եվրոպական և ազգային չափորոշիչների պահանջներին, աշխատաշուկայի կարիքներին համապատասխան:
2. Նոր ՄԿԾ-ների ներդրում ելնելով աշխատաշուկայի պահանջներից և համալսարանի ֆինանսատնտեսական կայունության ապահովման պահանջներից:
3. Շրջանավարտների, գործատուների բավարարվածություն ՄԿԾ-ներից:

Մշտապես թարմացվում են ներքին կանոնակարգերը, ուսումնական պլանները և առարկաների աշխատանքային ծրագրերը: Այսպիսով, համեմատական վերլուծությունների /բենչմարքինգ/ արդյունքում 2022 թվականին վերանայվել է «Բուժական գործ» մասնագիտության կրթական ծրագիրը, «Ստոմատոլոգիա» մասնագիտության կրթական ծրագիրը՝ 2023 թվականին:

Համալսարանի հաջողության կարևոր գրավականներից և երաշխիքներից է որակյալ ՊԴ կազմի առկայությունը և մշտական համալրումը նոր, պրոֆեսիոնալ, երիտասարդ կադրերով: Կադրերի և, առաջին հերթին, պրոֆեսորադասախոսական կազմի որակական ցուցանիշների ապահովումը համարվում է բուհի հետագա զարգացման կարևորագույն պայմաններից մեկը: Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի պատրաստվածության բարձր մակարդակն անմիջականորեն կապված է ուսումնական գործընթացի բարձր որակի հետ, ինչը նպաստում է աշխատաշուկայում անհրաժեշտ գիտելիքների և մասնագիտական հմտությունների ձևավորմանը:

Համալսարանի ռազմավարական նպատակներից է ուսանողակենտրոն ուսուցման հետագա զարգացումը: Համալսարանը կարևորում է ուսանողների ձեռքբերումները կրթության և գիտահետազոտական ոլորտում, նրանց բավարարվածությունը մատուցվող կրթական ծառայությունների որակից, նպաստում է նրանց ինքնուրույն մտածողության, հետազոտական և ստեղծագործական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը՝ հոգալով սովորողների արդյունավետ սոցիալական աջակցության և ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացման մասին:

Վերջին 3 տարիների ընթացքում համալսարանի նյութատեխնիկական բազան զգալիորեն բարելավվել է. վերանորոգվել են լսարանները, ձեռք են բերվել սարքավորումներ սիմուլյացիոն կենտրոնի և լաբորատորիաների համար, թարմացվել է գրադարանային ֆոնդը, կնքվել են նոր պայմանագրեր կլինիկաների, դպրոցների, իրավաբանական գրասենյակների հետ, հիմնադրվել է «Երիտասարդ դասախոսի դպրոց»:

3. Հետազոտություն.

ՄԳՀ-ը պարտադիր ուշադրություն է դարձնում հետազոտական և նորարարական գործունեության բարելավմանը: ՄԳՀ-ի զարգացման ռազմավարական ծրագիրը հստակ սահմանում է գիտահետազոտական գործունեության բարելավման և ամրապնդման նպատակները՝ բարձրացնելով այս ոլորտում համալսարանի կարգավիճակը Հայաստանում և տարածաշրջանում. «Ընդլայնել և խորացնել համագործակցությունը Հայաստանի և արտերկրի առաջատար գիտակրթական հաստատությունների հետ»:

Համալսարանի ենթակառուցվածքը վերջին մի քանի տարիների ընթացքում զգալի փոփոխություններ է կրել: ՄԳՀ-ը ձգտում է իրականացնել իր ռազմավարական ծրագիրը, որն ընդգծում է համալսարանի ռեսուրսային բազայի զարգացման և կրթական ու գիտական գործունեության իրականացման համար ժամանակակից պայմաններ ստեղծելու անհրաժեշտությունը:

4. Միջազգայնացում.

Ռազմավարական ծրագրում նշված համալսարանի հիմնարար արժեքների շարքում նշվում է պրոֆեսիոնալիզմը՝ Համալսարանը ձգտում է կրթության, հետազոտությունների և անձնակազմի կառավարման ոլորտներում կիրառել միջազգային լավագույն տեխնոլոգիաներն ու նվաճումները:

Միջազգային հարաբերությունների ընդլայնումն ու խորացումը ՄԳՀ-ի առաջատար նպատակներից է, քանի որ համալսարանի ուսանողների կեսից ավելին օտարերկրյա քաղաքացիներ են, և ՄԳՀ-ի երկու կրթական ծրագրեր իրականացվում են միջնորդ լեզվով:

5. Որակի ապահովում.

Համալսարանի ռազմավարական ծրագիրը նախատեսում է.

- վերափոխել համալսարանի կառավարման համակարգը, հստակեցնել կառուցվածքը՝ ռազմավարական ծրագրի նպատակներին և խնդիրներին համապատասխան,
- համալսարանի որակի ներքին ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը, կարգերն ու կանոնակարգերը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային գործակալության պահանջներին,
- վերանայել բուհ-ի աշխատակիցների պաշտոնների անձնագրերը, հստակեցնել նրանց գործառույթները,
- համալսարանի կառավարման բոլոր ստորաբաժանումներում և բաժիններում իրականացնել ՊԻԳԲ ցիկլը, ներդնել պարտադիր հաշվետվողականության նորմ,
- ներդնել որակի ներքին ապահովման համակարգի գնահատման և կատարելագործման մեխանիզմներ՝ հիմնվելով դրանց շարունակական կատարելագործման և արդյունքների հավաստիության վրա,
- բարձրացնել որակի մշակույթը համալսարանում:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին: Փաստեր

1.1 ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

Մխիթար Գոշ հայ-ռուսական միջազգային համալսարանը իր գործունեությունը իրականացնելիս առաջնորդվում է բուհի կանոնադրությամբ (ընդունվել է՝ 22.08.2022թ.) և 2021-2025 թթ. ռազմավարական ծրագրով: ՄՈՒՀ-ը ունի հստակ ձևակերպված առաքելություն որն է՝ անընդհատ ու ինտեգրացված, մագիստրոսի, բակալավրի, միջին մասնագիտական կրթական ծրագրերով պատրաստել բժշկագիտության, իրավագիտության, մանկավարժության, կառավարման ոլորտների որակյալ մասնագետներ՝ մշտապես կարևորելով թողարկվող մասնագետների գործնական կարողություններն ու հմտությունները՝ հայրենական և արտերկրի աշխատաշուկաների կարիքներին և արդի գիտական նվաճումներին համահունչ:

Բուհի կանոնադրական և ռազմավարական նպատակները համահունչ են միմյանց և իրենց բովանդակությամբ արտացոլում են առաքելությունը: ՄՈՒՀ-ը սահմանել է 12 ռազմավարական նպատակներ, որոնցից են՝ կատարելագործել համալսարանի կառավարման արդյունավետությունն ու որակը, կատարելագործել իրականացվող կրթական ծրագրերը՝ բոլոնյան գործընթացի պահանջներին համահունչ, ապահովել բարձրակարգ ՊԴ կազմով համալսարանի ամբիոնների համալրումը, զարգացնել համալսարանի ռեսուրսային բազան, ձևավորել կրթական և հետազոտական գործունեության իրականացման արդիական պայմաններ, ընդլայնել շահակիցների ներգրավվածությունը համալսարանի կրթական, հետազոտական, հանրային գործունեությանը, բարձրացնել ուսանողական ինքնակառավարման մարմինների, կարիերայի կենտրոնի, շրջանավարտների միության ներգրավվածությունը հաստատության առջև կանգնած խնդիրների լուծման աշխատանքներում, ընդլայնել ու խորացնել համալսարանի միջազգային կապերը, խթանել սովորողների և դասավանդողների շարժունությունը, բարձրացնել որակի մշակույթը համալսարանում, կատարելագործել կրթության որակի ներքին ապահովման համակարգը, զարգացել ուսումնական և գիտահետազոտական գործունեության որակի կառավարումը և այլն:

ՌԾ-ում յուրաքանչյուր նպատակի համար սահմանվել են խնդիրներ և առաջընթացի գնահատման ցուցիչներ:

Բուհի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագրում բուհն իր կանոնադրական և հասարակական նպատակների իրականացման հետ մեկտեղ որպես ուղղություն մատնանշում է՝ ազգային և համամարդկային ոգով ուսանողների դաստիարակումը, իսկ առաքելության իրականացման հիմքում դնում է ազգային և համամարդկային արժեքներն ու որակի մշակույթը:

Բուհը հիմնարար արժեքներ է սահմանել՝ ուսանողի հաջողությունը, որակը, նորարարական, ստեղծագործական միտքը, պրոֆեսիոնալիզմը, ժողովրդավարությունը, բարձրակարգ ՊԴ կազմը, մրցունակությունը, սոցիալական գործընկերությունը և պատասխանատվությունը, մատչելի կրթությունը, մարդու արժանապատվության հարգանքը, ակադեմիական ազատությունը և ազնվությունը, նվիրվածությունը:

1.2. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

ՄՈՒՀ-ը իր նախորդ հավատարմագրման գործընթացների (АККОРК РФ) և արտաքին փորձագետի ներգրավմամբ իրականացված ներքին աուդիտի արդյունքների հիման վրա մշակել և վերանայել է իր նորմատիվ հիմքերը, մշակվել է 2021-2025 ՌԾ-ը, որը արտացոլում է վերոնշյալ գործընթացների արդյունքում բացահայտված ներքին և արտաքին շահակիցների կարիքներն ըստ ռազմավարական կարևոր ուղղությունների:

Իրականացված կառուցվածքային փոփոխությունների և ներքին կանոնակարգող փաստաթղթերի լավարկման արդյունքում ՄՈՒՀ-ն ապահովել է ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը և հետադարձ կապի մեխանիզմները՝ կարիքների վեր հանման տեսանկյունից:

Բուհի ինքնավերլուծության և ներքին իրավական փաստաթղթերի ուսումնասիրությունից, ինչպես նաև փորձագիտական խմբի այցից պարզ դարձավ, որ բուհի արտաքին և ներքին շահակիցները հիմնականում ներգրավված են բուհի առաքելության, նպատակների և խնդիրների սահմանման, դրանց վերանայման կամ փոփոխության գործում: Օրինակ՝ 2022 թվականին (ԳԽ թիվ 2/22 նիստում) հաշվի առնելով բուհի պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի, ուսանողության, ինչպես նաև աշխատաշուկայի ներկայացուցիչների տեսակետներն ու մոտեցումները վերանայվել ու հաստատվել է 2021-2025 ՌԾ-ը:

1.3 ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Բուհի կանոնադրությունը (4.10 կետ) անհրաժեշտության դեպքում նախատեսում է 5 տարին մեկ թարմացնել բուհի առաքելությունը, նպատակներն ու խնդիրները բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:

Ռեկտորատը՝ որպես ռեկտորին կից խորհրդակցական մարմին կարող է առաջարկություններ ներկայացնել Գիտական խորհրդին բուհի կանոնադրության և վերջինիս փոփոխությունների և լրացումների վերաբերյալ (կանոնադրություն, 3.5.1. կետ):

Ըստ սահմանված ընթացակարգի ՄԳՀ Գիտական խորհուրդը՝ որտեղ ընդգրկված են ներքին և արտաքին շահակիցները, քննարկում է բուհի կանոնադրության և վերջինիս փոփոխությունների և լրացումների (կանոնադրություն, 3.5.1. կետ), ինչպես նաև բուհի առաքելության, ՌԾ նպատակների և խնդիրների վերանայման ու բարելավման վերաբերյալ հարցերը, վերջնական որոշումը կայացնում են կառավարման խորհուրդը և բուհի հիմնադիրը:

2021-2025 ՌԾ-ի իրագործման համար ՄՈՒՀ-ը մշակել է ՌԾ պլան ժամանակացույց, որտեղ նշված են միայն պլանավորված գործողությունները, պատասխանատուները և կատարման ժամկետները, սակայն տեսանելի չէ, թե պլանավորված գործողությունը ՌԾ-ի որ նպատակից բխող խնդրի լուծմանն է ուղղված, միևնույն ժամանակ նշված չեն իրականացման համար պահանջվող ռեսուրսները, իսկ ՌԾ-ում սահմանված արդյունքների գնահատման ցուցիչները (ԳԱՑ) հիմնականում հստակեցված չեն ըստ քանակական և որակական ցուցանիշների, և փոխկապակցված չեն ՌԾ պլան ժամանակացույցի հետ:

ՌԾ-ի իրականացման մշտադիտարկման մեխանիզմ կարելի է համարել ՄՈՒՀ-ի ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները, որոնք հիմնականում վերլուծական չեն:

Դատողություններ:

ՄՈՒՀ-ի իրականացրած գործունեությունը լիովին համապատասխանում է իր կանոնադրական նպատակներին և սահմանված առաքելությանը: Բուհը ունի Որակավորումների ազգային շրջանակին համահունչ և հստակ ձևակերպված առաքելություն, որտեղ արտացոլված են

բուհի նպատակներն ու խնդիրները, որտեղ իր հերթին, հստակ արտացոլված են բուհի ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Փորձագիտական խումբը կատարված ուսումնասիրությունների արդյունքներով բարձր է գնահատում բուհի գործադրած ջանքերը և ձեռնարկած քայլերը առաքելությամբ սահմանված նպատակներն ու խնդիրները կյանքի կոչելու ուղղությամբ, դրական է նաև նախորդ հավատարմագրման գործընթացից հետո ՄՈՒՀ-ի կատարած առաջընթացի քայլերը՝ աշխատաշուկայի ուսումնասիրություն, որակյալ մասնագետների ներգրավում, նյութատեխնիկական բազայի արդիականացում, մասնագիտական կրթական ծրագրերի վերանայում և այլն: Փորձագիտական այցը ցույց տվեց, որ ՄՈՒՀ-ը որդեգրել է զարգացման և առաջընթացի հստակ ուղեգիծ, իր առջև դնելով կրթության որակի ապահովման բարձր նշաձող, որը արտահայտվում է ՌԾ-ում սահմանված նպատակներում, օրինակ՝ նպատակ դնելով կրթություն իրականացնել նաև օտարերկրյա ուսանողների համար, կարողացել է գրավիչ դառնալ նրանց համար՝ տրամադրելով որակյալ և մատչելի կրթություն, ինչի մասին փաստում էին թե՛ ուսանողները, թե՛ շրջանավարտները: Վերոնշյալը ցույց է տալիս, որ ՄՈՒՀ-ը կարողունակ է իր կողմից սահմանված խնդիրները լուծելու՝ ներգրավելով անհարժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ: Կարևոր է ընդգծել, որ բուհի առաքելության իրականացման գործում առանցքային դերակատարություն ունի բուհի հիմնադիրը, հանդիսանալով օտարերկրյա քաղաքացի, ունի կրթության կազմակերպման և կառավարման բնագավառում մեծ փորձ և այն հաջողությամբ ծառայեցնում է բուհի նպատակների իրագործմանը, միջազգայնացմանը, գործընկերային կապերի հաստատմանը և հեղինակության բարձրացմանը: Փորձագիտական այցը ցույց տվեց, որ ՄՈՒՀ-ը իր հեղինակության բարձրացումը տեսնում է առավելապես որակյալ և պահանջված մասնագետներ թողարկելու միջոցով, թե ներքին թե արտաքին աշխատաշուկայի համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում բուհի արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածությունը բուհի կառավարման, կրթության բովանդակության բարելավման և այլ հարցերում: Արտաքին շահակիցների ներգրավվածության վառ վկայությունն է բուհի կառավարման մարմիններում նրանց անդամությունը և ներկայությունը, որոշումների ընդունման գործընթացում ակտիվ մասնակությունը: Այս ամենը նպաստում է մի կողմից թափանցիկ և օբյեկտիվ որոշումների կայացմանը, մյուս կողմից բարձրացնում է ներքին շահակիցների մոտիվացիան ապահովելով որակի ապահովման գործընթացներին նրանց ներգրավվածությունը, վերոնշյալը կարևորվում է ՄՈՒՀ-ում որակի ապահովման մշակույթի ամրապնդման տեսանկյունից:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ի կողմից վերջին տարիներին իրականացրած փոփոխությունները, որոնք ըստ էության հիմնված են արտաքին օբյեկտիվ գնահատականների վրա, ինչպես նաև վերահաստատում են ՄՈՒՀ-ի պատրաստակամությունը կատարելու գործուն քայլեր իր առաքելության, նպատակների և խնդիրների լուծման ուղղությամբ: Այսուհանդերձ ՄՈՒՀ-ին անհրաժեշտ է սահմանել հստակ չափանիշներ առաջընթացի գնահատման արդյունարար ցուցիչների համար, որոնք առավել չափելի կդարձնեն ձեռք բերված արդյունքները իրենց քանակական և որակական ցուցանիշներով, միևնույն ժամանակ բարելավել առկա գործիքակազմը դարձնելով դրանք առվել տեղեկատվական և վերլուծական, վերոնշյալը կարևոր է ՄՈՒՀ-ի զարգացման դինամիկայի մշտադիտարկման և ՌԾ-ի իրագործման արդյունավետության բարձրացման համար:

Այս համատեքստում կարևոր է նաև ՄՈՒՀ-ի պլանավորման գործիքակազմի շարունակական լավարկումը, մասնավորապես ՌԾ-ի պլան ժամանակացույցի մշակման ժամանակ անհարժեշտ է կարևորել նպատակների, խնդիրների և գործողությունների փոխկապակցումը, որտեղ

կպլանավորվեն նաև անհրաժեշտ ռեսուրսները կամ դրանց ձեռքբերման աղբյուրները, ինչպես նաև կսահմանվեն կատարման համար իրատեսական ժամկետներ, վերոնշյալ քայլերի համակարգումը կնպաստի մշտադիտարկման և գնահատման արդյունավետ մեխանիզմների ներդրմանը, ինչպես նաև թույլ կտա ՄՈՒՀ-ին ապահովել իր կայուն առաջընթացը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որը ՄՈՒՀ-ն ունի Որակավորումների ազգային շրջանակին համահունչ, հստակ ձևակերպված առաքելություն, սահմանված նպատակները և խնդիրները լիովին արտահայտում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները, առաքելության և նպատակների իրագործման համար տրամադրվում են անհարժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ, առկա են ՌԾ-ի իրագործման արդյունավետության մշտադիտարկման մեխանիզմներ և ընթացակարգեր, արագ արձագանքում և լուծումներ է տալիս վեր հանված խնդիրներին, փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանը բավարարում է չափանիշ 1-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՄԳՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է, սահմանված էթիկայի կանոններին համապատասխան, որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Համալսարանը գործունեություն է իրականացնում Երևան և Վանաձոր քաղաքներում: Վանաձորում գործում են բժշկական քոլեջը, միացյալ ֆակուլտետը, որն իրականացնում է իրավագիտության, կառավարման, տարրական մանկավարժություն և մեթոդիկա, ստոմատոլոգիա մասնագիտությունները: Երևանում ուսումնական գործունեություն է իրականացնում Բժշկական ֆակուլտետում «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» կրթական ծրագրերով, ինչպես նաև միացյալ ֆակուլտետում, որն իրականացնում է իրավագիտության, կառավարման, տարրական մանկավարժություն և մեթոդիկա կրթական ծրագրերով:

Համալսարանի կառավարումը հիմնված է իր ինքնավարության վրա՝ զուգորդված միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների հետ: Կառավարման բարձրագույն մարմինը՝ կառավարման խորհուրդն է, այն ձևավորվում է 5 տարի ժամկետով և բաղկացած է առնվազն հինգ և ոչ ավելի, քան ինը անդամից, կազմում ընդգրկված են նաև ներքին և արտաքին շահակիցներ:

Կառավարման խորհուրդն աջակցում է ՄԳՀ ղեկավարությանը, մասնավորապես, ֆինանսական, տեղեկատվական և նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, աշխատանքային պայմանների բարելավմանը, գիտական գործընթացի նյութական և կազմակերպամեթոդական բազայի մշակմանը, ուսանողների, ասպիրանտների և աշխատողների սոցիալական աջակցության հարցերին, նոր ուղղություններով մասնագետների պատրաստման ու որակավորման բարձրացմանն ուղղված առաջարկների մշակմանը, ՄԳՀ արտաքին և ներքին գործընկերային հարաբերությունների ընդլայնմանը և համալսարանի գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածմանը:

Համալսարանի կառավարումը կանոնադրության համաձայն հիմնված է ինքնակառավարման և կոլեկտիվ առաջնորդության սկզբունքների համադրման վրա: Համալսարանի գործունեությունը ղեկավարում է ռեկտորը: Համալսարանի կոլեկտիվ կառավարման մարմին է հանդիսանում գիտխորհուրդը, որը նախագահում է ՄԳՀ ռեկտորը: Ռազմավարական ծրագրի իրականացման և ընթացիկ կառավարման համար պատասխանատու են ռեկտորը և գիտական խորհուրդը:

Նախորդ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի (AKKORK) ինչպես նաև արտաքին փորձագետի մասնակցությամբ ներքին աուդիտի արդյունքում տրված խորհրդատվությունների համաձայն փոփոխվել է ինչպես ՄԳՀ կառուցվածքը, այնպես էլ լրամշակվել և հաստատվել են ստորաբաժանումների կանոնադրությունները, պաշտոնի անձնագրերը: Փորձագիտական վերլուծությունից պարզ դարձավ, որ ՄԳՀ կառավարման կառուցվածքը կրել է դինամիկ փոփխություններ վերջին տարիների ընթացքում: ՄՈՒՀ-ը փորձել է գտնել արդյունավետ տարբերակներ սահմանված նպատակների և խնդիրների իրագործման համար: Հաշվի առնելով 2022թ. իրականացված արտաքին փորձագետի մասնակցությամբ ներքին աուդիտի ընթացքում վեր հանված գործող՝ 2021-2025 ՌԾ-ի թույլ կողմերը, 2023թ-ին. ՄՈՒՀ-ը ճշգրտել է նաև կազմակերպչական կառուցվածքը՝ օպտիմալացնելով իր մարդկային և նյութական ռեսուրսները: Կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ավելացվել են օրինակ՝ մարքեթինգի և հասարակայնության հետ կապերի, կրթական տեղեկատվական տեխնոլոգիաների, փաստաթղթաշրջանառության բաժինները, ստեղծվել է գիտահետազոտական կենտրոնը և այլն:

ՄՈՒՀ-ի կառավարումը Երևանում և Վանաձորում իրականացվում է միասնական ձևով, Վանաձորի հասցեում գործող միասնական ֆակուլտետը և քոլեջը ըստ կառուցվածքի ենթարկվում են Ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով պրոռեկտորին, ամբիոնների գործունեությունը նույնպես միասնական է երկու հասցեների համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերոնշյալ հանգամանքը որևիցէ կերպ չի խոչընդոտում ՄՈՒՀ-ում որոշումների կայացմանը և տարածմանը, Վանաձորի միասնական ֆակուլտետի դեկանը մշտական կապի մեջ է բոլոր պրոռեկտորների և ռեկտորի հետ, առկա կամ հեռավար ձևաչափով ի պաշտոնե անդամակցում է գործող կոլեգիալ մարմիններին և մասնակցում է ընթացիկ նիստերին: Ամբիոնների գործունեությունը նույնպես իրականացվում է երկու հասցեներում մեկ անձի ղեկավարության ներքո:

Ընդհանուր առմամբ ՄԳՀ կազմակերպական կառուցվածքը ապահովում է կառավարչական հորիզոնական և ուղղահայաց կապերը: Կրթության կազմակերպմանը առնչվող բոլոր ստորաբաժանումները (ուսումնական մաս, ֆակուլտետ, ամբիոն) ենթակա են Ուսումնական և դաստիարակչական աշխատանքների (ՈՒԴԱ) գծով պրոռեկտորին, իսկ պրակտիկայի բաժինը՝ Բժշկական մասնագիտությունների և գիտական աշխատանքների գծով պրոռեկտորին: Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ նախկին կառուցվածքում բժշկական մասնագիտությունների ուսումնական աշխատանքները համակարգվել են վերոնշյալ պրոռեկտորի կողմից, որը հետո միասնականացվել է ՈՒԴԱ գծով պրոռեկտորի ղեկավարությամբ, սակայն կլինիկական բազաների հետ համագործակցության առանձնահատկություններով պայմանավորված նպատակահարմար է եղել պրակտիկայի բաժինը (բոլոր մասնագիտությունների համար) թողնել Բժշկական մասնագիտությունների և գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի ենթակայության ներքո:

Մեկ տարի շարունակում է թափուր մնալ Միջազգային գործունեության գծով պրոռեկտորի պաշտոնը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ միջազգային գործունեության գծով պրոռեկտորի պաշտոնի հիմնական գործառույթները ներկա փուլում իրականացվում են ռեկտորի կողմից պրոռեկտորների աջակցությամբ:

ՄՈՒՀ-ը ներդրել է «Էթիկայի և բժշկական դեոնթոլոգիայի կանոնակարգ»-ը (2022թ.), որում սահմանվել են ՄԳՀ-ի գործարար հաղորդակցության և վարքագծի սկզբունքները, կանոններն ու նորմերը: Այս փաստաթղթի հիմնական նպատակն է հաստատել էթիկական չափանիշներ և պաշտոնական վարքագծի կանոններ, ամրապնդել համալսարանի կորպորատիվ մշակույթը, պահպանել առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի կայունությունը: Հաստատվել է նաև ՄԳՀ-ի էթիկայի, բժշկական դեոնթոլոգիայի, ակադեմիական ազնվության և կոռուպցիոն ռիսկերի հարցերի հանձնաժողովի կանոնակարգը, ինչպես նաև ստեղծվել է էթիկայի հանձնաժողով, որում դեռ հարցեր չեն քննարկվել:

ՄԳՀ ֆինանսական գործունեությունը ներառում է աշխատավարձի, կրթաթոշակի վճարման, ուսման վարձի մասնակի փոխհատուցման, ուսանողական նպաստների տրամադրման, բուհի ռեսուրսների պահպանման և զարգացման, ուսումնամեթոդական գործունեությանը նպաստող ծախսերի կատարման ուղղությունները:

Բուհն իր ռեսուրսների կառավարումն իրականացնում է «Ռեսուրսախնայողության և առկա միջոցների արդյունավետ օգտագործման քաղաքականության» (2022թ) միջոցով:

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

ՄԳՀ կանոնադրությունը և գործող կանոնակարգերը ներքին շահակիցներին հնարավորություն են տալիս որոշակի մակարդակներում մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացման գործընթացներին:

Կանոնակարգերի համաձայն ՄԳՀ կառավարման, գիտական և ֆակուլտետների խորհուրդների և ռեկտորատի կազմում ընդգրկված են ուսանողներ, որոնք առաջադրվում են ՈՒԽ-ի կողմից: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ նրանց մասնակցությունը ֆորմալ չէ և որ նրանք հնարավորություն ունեն բարձրաձայնել իրենց խնդիրները, մասնակցել ընտրություններին (դեկանների, ամբիոնի վարիչների և այլն): Բոլոր նիստերից առաջ ՈՒԽ նախագահը հանդիպում է ուսխորհրդի անդամների հետ, առաջիկա նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ կարծիքները և առաջարկությունները քննարկելու համար:

Ուսանողները մասնակցում են նաև կրթության որակի ապահովմանն ուղղված միջոցառումներին՝ գնահատելու դասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը և այլն:

ՄԳՀ-ի կառավարման տարբեր մակարդակներում (ֆակուլտետի խորհուրդ, ռեկտորատ, գիտական խորհուրդ) ներկայացված են նաև ՊԴ անձնակազմի ներկայացուցիչները, ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դասախոսները ընդգրկված չեն միայն Կառավարման խորհրդի գործող կազմում (փորձագիտական այցի դրությամբ): Կառավարման խորհրդի կանոնակարգում չկա դասախոսների անդամակցության վերաբերյալ հիշատակում, կամ սահմանված պահանջ:

Փորձագիտական այցից պարզվեց, որ բուհի որոշ ուսանողներ և դասախոսներ, իրենց նախաձեռնությամբ, աշխատանքային կապի մեջ են ՄԳՀ-ի Որակի ապահովման կենտրոնի հետ, ցույց տալով իրենց շահագրգռվածությունը կրթության որակի համար:

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

ՄԳՀ-ում պլանավորումն իրականացվում է երկու մակարդակով՝ ռազմավարական (երկարաժամկետ) և մարտավարական (կարճաժամկետ): Բուհը որպես երկարաժամկետ (5 տարվա

կտրվածքով) պլանավորում դիտարկում է 2021-2025 թվականների ռազմավարական ծրագիրը և դրա իրականացման գործողությունների պլանը:

2021-2025 թվականների ռազմավարական ծրագրի հիման վրա ՄԳՀ ստորաբաժանումներն իրականացնում են իրենց պլանավորումը, և ինչպես ցույց տվեց փորձագիտական այցը՝ գլխավորապես կարճաժամկետ, մեկ տարվա կտրվածքով, նաև պարզ դարձավ, որ տարեկան պլանները կարող են վերանայվել կախված ընթացիկ հանգամանքներից:

ՄՈՒՀ-ի որպես երկարաժամկետ պլանավորման մշտադիտարկման մեխանիզմ դիտարկում է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը, ինչպես նաև ներքին աուդիտը (իրականացվել է 2022թ. մայիսին)՝ կարճաժամկետ պլանավորման համար: Որպես մշտադիտարկման մեխանիզմ ՄՈՒՀ-ը դիտարկում է հաշվետվողականությունը՝ կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվությունները, առանձին գործընթացների արդյունավետությունը ներկա փուլում մշտադիտարկվում է ՈԱԿ հարցումների միջոցով, որը որպես գործող մեխանիզմ դեռևս կայացման փուլում է:

2021-2025 ՌԾ հաստատումից հետո, 2022թ.-ին ՄՈՒՀ-ն իրականացրել է ներքին աուդիտ արտաքին փորձագետի ներգրավմամբ: Հաշվի առնելով վեր հանված խնդիրները և տրված խորհրդատվությունները, կազմվել է բարելավման հակաճգնաժամային գործողությունների պլան (ՄԳՀ զարգացման կարճաժամկետ պլան 2022թ.) 2022թ. մայիս-դեկտեմբեր ամիսների համար: որի հիման վրա նաև մշակել է «ՄԳՀ հավատարմագրած փորձագետների դիտողությունների վերացման 2022թ գործողությունների պլանը», սույն պլանի 13-րդ կետով նախատեսված է՝ բոլոր ստորաբաժանումների ռազմավարական ծրագրերի (ռազմավարական պլանների) ու աշխատանքային պլանների կազմում, պարտադիր հաշվի առնելով որակի ապահովման բաղադրիչը

Փորձագիտական այցի դրությամբ ստորաբաժանումներն իրենց պլանավորումն իրականացնելիս հաշվի են առնում համալսարանի ՌԾ-ը և դրանից բխող միջոցառումները, մասնավորապես համաձայնեցնելով ՄԳՀ զարգացման կարճաժամկետ պլանի հետ (2022թ., 2023թ.): Մշտադիտարկման գործող մեխանիզմներ են բոլոր ստորաբաժանումների ամենամյա հաշվետվությունները, որոնք լսվում և քննարկվում են գիտական խորհրդում: Հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանց վերլուծական բաղադրիչը դեռևս թույլ է արտահայտվում, հիմնականում կատարված աշխատանքների վերաբերյալ փաստերն են արձանագրվում:

Բուհի պլանավորման, գործունեության բարելավման գործիքակազմ է դիտվում 2021-2025 թվականների ռազմավարական ծրագրում բերվող առաջընթացի գնահատման ցուցիչները, որոնք ներկայացված են միայն վերջնարդյունքների թվարկմամբ, ինչպես նաև ՌԾ հավելվածում տրված ռազմավարական զարգացման պլանը, որտեղ էլ նշված են ժամկետներն ու պատասխանատուները:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

ՄԳՀ-ում ներքին գործոնների ուսումնասիրության մեխանիզմներ են դիտարկվում հարցումները ներքին շահակիցների շրջանում, որն իրականացվում է ՄԳՀ-ի հարցումների անցկացման կարգի համաձայն, իսկ հարցման բոլոր ձևերը տեղակայված են ՄԳՀ-Ի Google Platform էջում: Իսկ բուհի ՈԱԿ-ի կազմում կա առանձնացված հաստիք, որը կոչվում է շահագրգիռ կողմերի կարիքների ուսումնասիրության և վերլուծության մասնագետ, ով զբաղվում է հարցումների իրականացման և վերլուծման հարցերով: Հարցումների արդյունքների վերլուծությունների հիման վրա մշակվում են համապատասխան առաջարկություններ և երաշխավորություններ, դրանք ներկայացվում են գիտական խորհրդում, դառնում են որոշումների կայացման հիմք:

Համալսարանում սոցիոլոգիական հարցումներն իրականացվում են ՄԳՀ-ի հարցումների անցկացման կարգի համաձայն, որում նշված են հարցումների թիրախային խմբերը, քննարկվող հարցերը, հարցումների անցկացման ժամկետները և այլն, սակայն նշում չկա հարցման վավերականության վերաբերյալ մասնակցության տոկոսաչափի մասին:

Նույն կարգում տեղեկատվության ստացման այլ միջոցներ են սահմանվել նաև ֆոկուս խմբերի, կլոր սեղանների կազմակերպումը, ուսանողական հասարակական կազմակերպությունների հետ հանդիպումների անցկացումը, որոնք դեռևս իրականացված չեն:

Վերջին մի քանի տարիների ընթացքում ՄԳՀ-ն ուսումնասիրում է նաև իր գործունեության վրա ազդող արտաքին գործոնները, մասնավորապես իրականացնում է շահագրգիռ կողմերի կարծիքների, աշխատաշուկայի ոլորտային ուսումնասիրություններ և այլն:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Փորձագիտական ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՄԳՀ-ն իր համար սահմանել է տարբեր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի իրականացումը: Նախորդ հավատարմագրման փորձագիտական խորհրդատվությունների հիման վրա բարելավվել է պլանավորման գործընթացը, բոլոր ստորաբաժանումները առաջնորդվում են մշակված պլաններով և հաշվետվություններ են ներկայացնում ըստ պլանավորման:

Նախորդ հավատարմագրումներից հետո՝ գլխավորապես 2022 թվականից սկսած մշակվել, լրամշակվել են բոլոր ստորաբաժանումների մի շարք կանոնակարգող փաստաթղթեր: Փաստաթղթերի ուսումնասիրությունից ու փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի ստորաբաժանումները հիմնականում գտնվում են իրականացման փուլում, իսկ նորաստեղծ ստորաբաժանումները՝ դեռևս պլանավորման: Որակի ապահովման շրջափուլը դեռևս ավարտված չէ:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

ՄԳՀ տարբեր գործընթացների իրականացման արդյունավետության վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման հիմնական մեխանիզմը հարցումներն են:

Յուրաքանչյուր կիսամյակից հետո ֆակուլտետի դեկանը կամ ուսումնական բաժնի և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը քննական նստաշրջանի արդյունքների մասին հաշվետվություն է ներկայացնում ՄԳՀ-ի գիտխորհուրդ: Բուհը կարևորում է նաև պետական ատեստավորման արդյունքները և պետական ատեստավորման հանձնաժողովի նախագահների կարծիքները, որոնք լրացնում են ՄԿԾ-ի վիճակի պատկերը, բացահայտում են դրանց թույլ կողմերը և հնարավորություն են տալիս փոփոխություններ կատարել ՄԿԾ-ի իրականացման պայմանների և բովանդակության մեջ:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

ՄԳՀ-ն, ըստ ինքնավերլուծության, իրականացվող ծրագրերի և դրանց համապատասխան շնորհվող որակավորումների մասին, տեղեկատվության տարածման և թափանցիկության ապահովման հիմնական միջոց են համարում համալսարանի պաշտոնական կայքէջը, սոցիալական ցանցերը:

Սակայն պետք է նշել, որ համալսարանի կայքէջում տեղադրված մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը շատ մակերեսային է, ոչ լիարժեք, բացակայում են ուսումնական պլանները, դասընթացների փաթեթները և այլն: Իրականում կայքէջը ներկայումս լիարժեք չի գործում, ինֆորմացիան դրանում չի թարմացվում, ուստի այն թարմացված տեղեկատվության հրապարակման միջոց համարվել չի կարող:

Կայքէջը գտնվում է վերագործարկման փուլում և կրթական ծրագրերի մասին տեղեկատվությունը լիարեք չի ներկայացված:

Սոցիալական ցանցերում բուհի ներկայացվածությունը ինքնավերլուծության համաձայն, թույլ է տալիս ներգրավել շահագրգիռ կողմերի բավարար քանակ, ինչը, ըստ բուհի, դառնում է բոլոր շահագրգիռ կողմերին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման երաշխիք: ՄՈՒՀ-ը իրականացնում է սոցիալական էջերի հետևորդների՝ հատկապես արտերկրի, և էջի դիտողականության մոնիթորինգ:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ հավատարմագրման ժամանակ տրված խորհրդատվությունների հիման վրա ՄԳՀ-ն բարելավումներ է կատարել կառավարման համակարգում, որոնք կնպաստեն վարչարարության կանոնակարգմանը, տարբեր ստորաբաժանումների գործառույթների հստակեցմանը և ռազմավարական կառավարման լավարկմանը: Համալսարանում իրականացվել է կառուցվածքային փոփոխություններ այն հաշվով, որ ճիշտ բաշխվեն ՄԳՀ կառուցվածքային ստորաբաժանումների միջև լիազորությունները, գործառույթներն ու պատասխանա-տվությունը: Այդ իմաստով մշակվել կամ վերանայվել են բոլոր հաստիքների պաշտոնների անձնագրերը՝ աշխատանքի նկարագրերը:

Չնայած արդեն իսկ իրականացված կառուցվածքային փոփոխություններին, ՄԳՀ ղեկավարությունը կարծում է, որ Բուհի կառուցվածքային գծապատկերը մոտ ապագայում վերանայման կարիք ունի, քանի որ այս առումով ՄՈՒՀ-ը դեռևս գտնվում է զարգացման փուլում:

Ամբիոնների գործունեությունը նույնպես իրականացվում է երկու հասցեներում՝ մեկ անձի ղեկավարության ներքո: Այս փաստը ունի իր և դրական կողմը՝ վարչական աշխատակազմի օպտիմալացման տեսանկյունից, այնպես էլ բացասական՝ խզվում է ամբիոնի վարիչ դասախոս անմիջական կապը: Մյուս կողմից առկա չեն այլ պատասխանատուներ, վերոնշյալը հանգեցնում է նրան, որ նվազում է ամբիոնի դերակատարությունը որպես ՄԿԾ-ն իրականացնող կամ սպասարկող օղակ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ներքին շահակիցների ակտիվ մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին, որը կատարվում է հաստատված էթիկայի կանոններին համապատասխան: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ արտաքին շահակիցների առավել շատ (հատկապես ոչ համատեղությամբ դասավանդողների) ներգրավումը որոշումների կայացմանը, և նրանց կարիքների կանոնակարգված և պարբերաբար վերհանումը կնպաստեն արտաքին գործոնների ուսումնասիրմանը և դրանց հիման վրա որոշումների կայացմանը: Համալսարանի կանոնակարգող ու նորմատիվային փաստաթղթերի ամբողջությունը, ինչպես նաև փորձագիտական այցի արդյունքները համոզմունք են ձևավորում, որ կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին լիարժեք մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը: Աշխատանքներ են տարվում նաև արտաքին

շահակիցների ակտիվությունը բարձրացնելու, նրանց ներգրավվածությունը մեծացնելու ուղղությամբ, սակայն մեխանիզմները դեռևս կանոնակարգված չեն:

Կառավարման և վարչարարության համակարգում ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական իրականացումը դեռևս ամբողջությամբ ներդրված չէ, ինչը կարող է հարցականի տակ դնել դրանց հետագա բարեփոխումների ընթացքը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում համալսարանի ռազմավարական պլանավորման մշակույթի ներդրմանն ուղղված ջանքերը: Բոլոր ստորաբաժանումների ըստ ռազմավարական ծրագրի պլանավորումը կնպաստի սահմանված առաջնահերթությունների ձեռքբերմանը և այդ ճանապարհին առկա խնդիրների դուրս բերմանն ու դրանց լուծմանը: Դրական է, որ համալսարանը կատարել է ներքին աուդիտ, որի արդյունքում դուրս են բերվել բուհի առաջ ծառացած վտանգները: Փորձագիտական խումբը նշում է, որ ներքին աուդիտի արդյունքների հիման վրա ռազմավարական պլանավորումը կնպաստի համալսարանի տարբեր գործընթացների բարելավմանը:

Դրական է, որ ՄԳՀ-ում ակտիվացել են տվյալների հավաքագրման գործընթացները, միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ արտաքին շահակիցների հետ համատեղ արտաքին գործոնների մեծածավալ ուսումնասիրությունը կօգնի առկա ռիսկերի հիման վրա պլանավորումների իրականացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ շնորհվող որակավորումների որակի մասին համալսարանը տեղեկատվությունը շահակիցներին հասանելի դարձնելու միջոցը տեսնում է իր պաշտոնական կայքէջը, սոցիալական կայքերը, յութուբյան տեսահոլովակները: Սակայն կայքէջի ներկայիս վիճակը բավարար չէ այդ տեղեկատվության համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն հանգամանքները, որ ՄԳՀ-ն ունի կառավարման օպտիմալացված համակարգ, ընդհանուր առմամբ արդյունավետ գործառույթ ունեցող վարչական կառույցներ, ինչպես նաև այն, որ համալսարանի կառավարման համակարգը ապահովում է էթիկայի կանոններին համապատասխան մասնակցային որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց, ունի ռազմավարական նպատակների իրականացման համար անհրաժեշտ կառուցվածք, մարդկային, նյութական և ֆինանսական բավարար ռեսուրսներ, փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանը բավարարում է չափանիշ 2-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՄԳՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

«Մխիթար Գոշ» համալսարանում իրականացվում են հետևյալ կրթական ծրագրերը՝ «Իրավագիտություն», «Կառավարում», «Տարրական մանկավարժություն և մեթոդներ», «Բուժական գործ» (միայն անգլերեն) և «Ստոմատոլոգիա»: «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» ՄԿԾ-ներն

իրականացվում են առկա ուսուցման ձևով, մյուսները՝ հեռակա: Շնորհվող որակավորումները համապատասխանում են ՀՀ որակավորումների ազգային շրջանակի 6-7-րդ մակարդակներին:

Կրթական ծրագրերն ունեն իրենց ձևակերպված առաքելությունը, նպատակները և խնդիրները, համակարգված են և ձևակերպված են առանձին փաստաթղթով՝ հավելվածներով: «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» կրթական ծրագրերը տեղադրված են բուհի պաշտոնական կայքում, սակայն կայքում ներկայացված չեն հավելվածները:

Համալսարանում ներդրվել է ՄԿԾ-ների և ուսումնական պլանների մշակման և հաստատման կարգերը (2022թ.), ըստ որի՝ 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում վերանայվել են առկա համակարգի՝ «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» կրթական ծրագրերը: 2023թ. մեկնարկել է հեռակա համակարգի կրթական ծրագրերի լավարկման գործընթացը, վերանայվել է նաև «Իրավագիտություն» կրթական ծրագիրը, առարկայական ծրագրերը մշակման փուլում են: ՄԿԾ-ների մասնագրերում ներկայացված են շրջանավարտի մասնագիտական գործունեության առաքելությունը, նպատակը և խնդիրները, ոլորտը և գործունեության տեսակները և վերջնարդյունքները: Սահմանված են ծրագրերի աշխատատարությունը, ՊԴ կազմին և նյութատեխնիկական սարքավորումներին ներկայացվող պահանջները, համառոտ նկարագրված է պետական ամփոփիչ ատեստավորման կարգը: Ծրագրերի հավելվածներն են ուսումնական պլանը, ակնկալվող վերջնարդյունքների քարտեզագրումը, որտեղ հստակ երևում է թե, որ առարկաներից է ձևավորվում այս կամ այն վերջնարդյունքը, առարկաների և պրակտիկաների աշխատանքային ծրագրերը:

Հարկ է նշել, որ բուհում հաստատված ձևաչափով մշակված են բժշկական մասնագիտությունների առարկաների աշխատանքային ծրագրերը, որտեղ նշված են ուսումնառության ակնկալվող արդյունքների բնութագրիչները՝ թե ինչ պետք է գիտենա, ինչ կարողանա և ինչին տիրապետի ուսանողը, սակայն դրանց ներկայացման մեջ առկա են կրկնություններ և որոշակի անհամապատասխանություն: Ուսումնական պլանում ընդգրկված են բոլոր անհրաժեշտ առարկաները և պրակտիկաները, ներառյալ ընտրովի առարկաները:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

ՄԿԾ-ներում առկա են ընտրովի առարկաներ, ինչն արտացոլում է ՄՈՒՀ-ում ուսանողակենտրոն ուսուցման առկայությունը: Ուսանողները նաև հնարավորություն ունեն ներկայացնել իրենց առաջարկները՝ կապված կրթական ծրագրի կառուցվածքի հետ՝ դիմելով Ուսանողական խորհրդին, ֆակուլտետի դեկանին, պրոռեկտորին, ինչպես նաև իրենց գոհունակության գնահատման հարցումների ժամանակ:

Իրավագիտության կրթական ծրագրում ներկայացված է ՄԿԾ-ի ակնկալվող վերջնարդյունքների քարտեզագրումը ուսումնառության արդյունքների, դասավանդման և ուսումնառության մեթոդների հետ, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կան դեպքեր երբ դասավանդման մեթոդը չի համապատասխանում ակնկալվող վերջնարդյունքին, օրինակ՝ ՈւԱ 6 տիրապետում է օրենսդրության պահպանումը իրավունքի սուբյեկտների կողմից ապահովելու հմտությունների, ընտրված մեթոդը՝ խոսքային մեթոդներ (դասախոսություն, քննարկում, ցուցադրում):

Բժշկական մասնագիտությունների առարկաների աշխատանքային ծրագրերում կան բաժիններ՝ նվիրված դասավանդման, ուսուցման և գնահատման մեթոդների համառոտ նկարագրությանը, սակայն չկան այդ մեթոդների կոնկրետ հրահանգներ և թվարկումներ:

Աշխատանքային ծրագրերը գնահատելիս պարզվեց, որ չեն հիշատակվում ուսանողակենտրոն դասավանդման ժամանակակից մեթոդները, ինչպիսիք են համագործակցային / թիմային ուսուցման (TBL), խնդրակենտրոն ուսուցման (PBL), արդյունքահեն ուսուցման (RBL) մեթոդները, սակայն ամբիոնների ղեկավարների և դասախոսների հետ հանդիպումների ժամանակ կոնկրետ օրինակներով հաստատվեց դրանց կիրառումը մասնավորապես՝ փոքր խմբերի մեթոդներ, նախադեպային քեյս-մեթոդ և խնդրակենտրոն ուսուցման մեթոդներ:

Իրավագիտություն կրթական ծրագրում ուսանողներին հանձնարարվում են կիրառական խնդիրներ և առաջադրանքներ, օրինակ՝ հայցադիմումների, բողոքների, վճիռների, պայմանագրերի և այլ բնույթի իրավաբանական փաստաթղթերի շարադրումը և կազմումը:

Այնուամենայնիվ, ՄՈՒՀ-ը լուրջ ուշադրություն է դարձնում դասախոսների վերապատրաստմանը դասավանդման և գնահատման մեթոդների շրջանակներում: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ վերապատրաստում անցած դասախոսները սկսում են ակտիվ օգտագործել դասավանդման նոր մեթոդներն իրենց գործունեության մեջ, փորձում են արձագանքել ուսանողներին, եթե նրանք դժվարանում են յուրացնել նյութը և օգնել նրանց հասկանալ, թե որտեղ և ինչու են սխալ թույլ տվել իրենց եզրակացություններում և պատասխաններում:

3.3 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

ՄՈՒՀ-ը մշակել և կիրառում է «ՄԳՀ ուսանողների ուսումնառության արդյունքների ստուգման և գնահատման կարգը»: Այս փաստաթղթում գնահատման բաղադրիչները մանրամասն և թափանցիկ ներկայացված են, ուսանողները ծանոթ են այս փաստաթղթին, ինչը հաստատվեց ուսանողների հետ հանդիպման ժամանակ: Համալսարանն ունի 20 միավորանոց գնահատման համակարգ, ներառյալ միավորներ հաճախումների և ակտիվության համար: Դասախոսների հետ զրույցի ընթացքում պարզվեց, որ դասախոսական կազմը կիրառում է ոչ միայն ամփոփիչ, այլ նաև ձևավորող գնահատում՝ օգնելով ուսանողներին հաղթահարել նյութը յուրացնելու դժվարությունները:

Մշակվել է ՄԳՀ-ի ստուգարքների և քննությունների անցկացման, հանձնման և դրանց արդյունքների բողոքարկման կանոնակարգը: Բուհում գործում է նաև «Շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման և դրանց արդյունքների բողոքարկման կարգը», որը սահմանում է բողոքարկման ընթացակարգը, եթե շրջանավարտը համաձայն չէ գնահատման հետ: Օրինակ՝ 2021-2022 ուստարվա շրջանավարտներից մեկի բողոքարկման արդյունքում կայացվել է դրական որոշում հօգուտ ուսանողի:

«Բուժական գործ» մասնագիտության ձևավորված վերջնարդյունքների գնահատման օբյեկտիվությունը բարձրացնելու նպատակով ՄՈՒՀ-ն 2023թ.-ից ներդրել է եռափուլ պետական ամփոփիչ ատեստավորում՝ համակարգչային թեստավորում, մանեկենների վրա գործնական հմտությունների ձևավորման գնահատում՝ ըստ ստուգաթերթերի, և բանավոր հարցազրույց: Միջազգային ստանդարտների և պահանջների համաձայն գործնական հմտությունների ատեստավորումն անցկացվում է Օբյեկտիվ կառուցվածքային կլինիկական քննության ձևաչափով (OSCE- Objective Structural Clinical Exams)՝ հմտությունների ցուցադրում սիմուլյացիոն մանեկենների վրա:

ՄՈՒՀ-ում մշակված ակադեմիական ազնվության քաղաքականություն: Ինքնավերլուծության համաձայն, ինչը հաստատվեց նաև փորձագիտական այցի ընթացքում, գնահատման գործընթացում ակադեմիական ազնվությունը պահպանելու և գրագողության դեմ պայքարելու նպատակով քննություններն ու լուծարքներն անցկացվում են հանձնաժողովներով, ավարտական

աշխատանքները և մագիստրոսական թեզերը պարտադիր գրախոսվում են և գրագողության հայտնաբերման դեպքում ուսանողի աշխատանքը չի ընդունվում, ամփոփիչ ատեստավորման քննությունները տեսաձայնագրվում են: Ակադեմիական ազնվությունն ապահովվում է նաև էթիկայի, բժշկական դեոնտոլոգիայի, ակադեմիական ազնվության և կոռուպցիոն ռիսկերի հանձնաժողովի կողմից, որը գործում է 2022թ հաստատված կանոնակարգի համաձայն:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը, միջազգայնացմանը:

ՄՈՒՀ-ը հաստատել է ՈԱՀ փաստաթուղթը՝ «ՄՈՒՀ-ի բենչմարքինգի քաղաքականությունը և ընթացակարգը»: Իրականացվող կրթական ծրագրերը համեմատվել են (բենչմարքինգ) Հայաստանի և արտասահմանյան այլ բուհերի նմանատիպ ծրագրերի հետ: Օրինակ՝ «Բուժական գործ» ՄԿԾ-ն համեմատվել է ռուսական չորս, մեկ վրացական և մեկ հայկական բուհերի, իսկ «Ստոմատոլոգիա» ՄԿԾ-ն՝ չորս ռուսական և մեկ հայկական բուհերի նմանատիպ մասնագիտությունների կրթական ծրագրերի հետ: Համեմատական վերլուծության արդյունքում զգալի փոփոխություններ/ վերանայումներ են կատարվել կրթական ծրագրերում, որոնք վերահաստատվել են 2022 թ. օգոստոսին («Բուժական գործ») և 2023 թ. մայիսին («Ստոմատոլոգիա»): «Բուժական գործ» ծրագիրը ներկայումս հասանելի է միայն օտարերկրյա քաղաքացիների համար, հիմնականում հնդկաստանից: ՄԳՀ-ի ռեկտորը, լինելով բժշկական համալսարանի շրջանավարտ և իմանալով Հնդկաստանի Բժշկական խորհրդի կողմից բժշկի որակավորմանը ներկայացվող պահանջները, ՄԿԾ-ների մշակման գործընթացում ակտիվորեն ներգրավում է օտարերկրյա մասնագետների, որոնք հեռավար և առկա դասախոսություններ են անցկացնում ուսանողների համար՝ Օտարերկրյա բժշկական շրջանավարտների (FMGE) ներքին հավատարմագրման քննությանը նախապատրաստվելու նպատակով:

Համեմատական վերլուծության արդյունքում Իրավագիտության կրթական ծրագիրը նույնպես բավական լուրջ վերափոխման է ենթարկվել և համալրվել կամընտրական առարկաներով, կարևորվել է ուսանողների գիտագործնական հմտությունների և պրակտիկ որակների զարգացումը:

ՄՈՒՀ-ը մշակել է «ՄԳՀ-ի ուսանողների ակադեմիական շարժունության կանոնակարգ»: ՄԿԾ-ների համահնչեցումը արտասահմանյան բուհերի նմանատիպ կրթական ծրագրերին նպաստել է ուսանողների և դասախոսների շարժունությանը: Բժշկական մասնագիտությունների ուսանողները հնարավորություն ունեն ամառային պրակտիկան անցնել Հնդկաստանում, իսկ փորձագիտական այցի ընթացքում առաջին անգամ Պերմի պետական բժշկական համալսարանի ուսանողները պրակտիկա էին անցնում Երևանի հիվանդանոցներում՝ ՄՈՒՀ-ի կլինիկական բազաներում:

Նախորդ տարի եղել է նաև դասախոսների շարժունության ծրագիր: Շարժունության ծրագրի շրջանակներում Օրենբուրգի բժշկական համալսարանի մասնագետը դասախոսություններ է կարդացել ՄՈՒՀ-ի ուսանողների համար, ինչպես նաև ընդգրկվել է ավարտական ամփոփիչ քննության հանձնաժողովի կազմում, հետագայում նաև աշխատանքի հրավեր է ստացել ՄԳՀ-ից ռազմավարական զարգացման գծով պրոռեկտորի պաշտոնում: Բացի այդ, հնդկաստանից դասախոսներ մի քանի դասախոսություններ են կարդացել ՄՈՒՀ-ի ուսանողների համար:

3.5 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ՄՈՒՀ-ը մշակել է կրթական ծրագրերի մշակման, մշտադիտարկման, վերանայման գործընթացները կարգավորող փաստաթուղթ՝ «Ուսումնական գործընթացի արդյունավետության

գնահատման, մշտադիտարկման և ՄԿԾ-ների վերանայման մեխանիզմներ և ընթացակարգ»: Արդյունավետության գնահատման հիմնական մեխանիզմը շահակիցների բավարարվածության վերաբերյալ հարցումներն են: Ստացված տվյալների հիման վրա նախատեսվում է փոփոխություններ կատարել կրթական ծրագրերում: Սակայն այս պահին ՄՈՒՀ-ը չունի կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման չափելի ցուցիչներ, որի հիման վրա բուհը կարող է շարունակաբար վերահսկել և գնահատել իրականացվող ՄԿԾ-ների արդյունավետությունը: Այս պահին դժվար է գնահատել ՄԿԾ-ների օպտիմալացման արդյունավետությունը, քանի որ նորացված ծրագրերը նոր են սկսել իրականացվել:

Այցի և գործատուների հետ հանդիպումների ընթացքում պարզվեց նրանց ցածր ներգրավվածությունը ՄԿԾ-ների մշակման և կատարելագործման գործընթացում:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ «Մխիթար Գոշ» համալսարանի կրթական ծրագրերը համապատասխանում են բուհի առաքելությանը, շնորհված որակավորումները համապատասխանում են ՀՀ ՈԱՇ-ին: Բուհը ապահովված է ՄԿԾ իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներով:

Կարևոր է, որ համալսարանը վեր հանված խնդիրների հիման վրա վերանայել են կրթական ծրագրերի մշակումը, մշտադիտարկումը և արդյունավետության գնահատումը կանոնակարգող փաստաթղթերը:

Համեմատական վերլուծության արդյունքում վերանայվել են կրթական ծրագրերը: ՄԿԾ-ների համեմատական վերլուծության համար ընտրվել են այն բուհերի ծրագրերը, որոնք արդեն ունեն իրականացման որոշակի փորձ և իրենց երկրում շրջանավարտների կողմից որակավորման հաստատման դրական արդյունքներ, ուստի փորձագիտական խումբը արդարացված է համարում այս ծրագրերի ընտրությունը: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ այս գործընթացներում արտաքին շահակիցները ներգրավված չեն:

ՄՈՒՀ-ը ՄԿԾ-ները վերանայելիս կարևորել է սովորողների գործնական հմտությունների և կարողությունների ձեռքբերումը, ավելացվել են ընտրովի առարկաները, որոնք արտացոլում են համալսարանի ուսանողակենտրոն մոտեցումը:

«Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների կրթական ծրագրերը ինչպես նաև ավարտական ամփոփիչ քննությունների անցկացման ընթացակարգը, հատկապես գործնական հմտությունների ձեռքբերման գնահատումը համապատասխանեցվել են միջազգային չափանիշներին և պահանջներին, ինչն ավելի է մոտեցրել ՄԿԾ-ները արտասահմանյան համարժեք ծրագրերին և կնպաստի ուսանողների ակադեմիական շարժունության բարձրացմանը: Ուսանողների ակադեմիական փոխանակման առաջին արդյունքներն արձանագրվել են փորձագիտական այցի ընթացքում:

Ուսումնական ծրագրերի բաղկացուցիչ մաս կազմող առարկաների աշխատանքային ծրագրերը կազմված են մեկ ձևանմուշով՝ անհրաժեշտ բովանդակությամբ, սակայն կիրառվող դասավանդման և ուսուցման մեթոդները թույլ են արտահայտված, ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների նկարագրիչները թերի են, ինչը կարող է դժվարացնել դրանց համարժեք գնահատումը:

Դրական է գնահատվում դասավանդման ժամանակակից մեթոդներով խորացված վերապատրաստում անցած դասախոսների թվի զգալի աճը վերջին ուսումնական տարում և դասախոսների կողմից ձեռք բերված գիտելիքի ակտիվ կիրառումը:

Գնահատման համակարգը հստակ ձևակերպված է, թափանցիկ, մատչելի և հասկանալի ուսանողների համար, փորձագետների խումբը հաստատել է ուսանողների ազատ կողմնորոշումը գնահատման չափանիշներում: Փաստաթղթավորված է նաև գնահատման հետ անհամաձայնության դեպքում բողոքարկման ընթացակարգը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ ՄՈՒՀ-ը սկսել է վերանայել նաև հեռակա համակարգի ՄԿԾ-ները, համապատասխանեցնելով դրանք ժամանակի պահանջներին: Այսուհանդերձ փորձագիտական խումբը լիահույս է, որ բարելավման գործընթացներում ՄՈՒՀ-ը հաշվի կառնի հեռակա համակարգի ուսանողների կարիքները, մասնավորապես քննություններին նախապատրաստվելու համար օպտիմալ ժամանակի հատկացումը, ուսուցման սեղմ ժամանակահատվածում դասընթացների արդյունավետ կազմակերպումը, վերջնարդյունքահեն գնահատման համակարգի ապահովումը:

ՄՈՒՀ-ը կարևորում է ակադեմիական ազնվության քաղաքականությունը, միևնույն ժամանակ բուհը գիտակցում է ակադեմիական ազնվության գործիքակազմի շարունակական բարելավման անհրաժեշտությունը և վերանայված գնահատման կարգով չի խրախուսվում բանավոր քննությունները, անցում է կատարվում գրավոր և թեստային քննություններին, նախատեսում է նաև ներդնել գրագողության դեմ ավտոմատացման համակարգ:

ՄԿԾ-ների մշտադիտարկման քաղաքականությունը մշակված է, սակայն ՄԿԾ-ների արդյունավետությունը գնահատելու չափելի ցուցանիշներ չկան, ինչը կդժվարացնի օբյեկտիվ եզրակացություններ անելը: Նման ցուցանիշներ կարող են լինել ուսումն ավարտելուց հետո առաջին տարվա ընթացքում աշխատանքի ընդունված շրջանավարտների տոկոսը, միջանկյալ ատեստավորման միջին միավորը, ավարտական ատեստավորումը, վատ առաջադիմության պատճառով հեռացվածների տոկոսը, առաջին փորձից որակավորման քննություն հանձնած օտարերկրյա քաղաքացիների տոկոսը, և այլն: Սա հնարավորություն կտա ապացույցների վրա հիմնված որոշումներ կայացնել և ՄԿԾ-ների որակը շարունակաբար բարելավել:

Ընդհանուր առմամբ, բուհի հիմնարար կարգավորող փաստաթղթեր, մշակվել են և հաստատվել են 2022թ., և դրանց իրականացման արդյունքներն դեռևս ոչ բոլոր գործընթացներում են լիարժեք տեսանելի, բայց համալսարանը գիտակցում է իր զարգացման ռազմավարության կարևորությունը և ձգտում է հետևել դրան:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերը համապատասխանում են համալսարանի առաքելությանը, ավարտվում են ՀՀ ՈԱԾ-ին համապատասխան որակավորումների շնորհմամբ, ինչպես նաև այն, որ վերանայվել են բոլոր փաստաթղթերը, ՄԿԾ-ները համապատասխանեցվել են ՀՀ և արտասահմանյան առաջատար բուհերի նմանատիպ կրթական ծրագրերին, իրականացվել է վերջնարդյունքների քարտեզագրում, առկա է ակադեմիական շարժունություն, ներդրվում են ակադեմիական ազնվության ապահովման մեխանիզմները, փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանը բավարարում է չափանիշի 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՄԳՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է բավարար:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

Մխիթար Գոշ հայ-ռուսական համալսարանում ներդրված են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության կանոնակարգեր, գործում են հստակ մեխանիզմներ:

Տեղացի ուսանողների հավաքագրման նպատակով ՄԳՀ-ն համագործակցում է Երևանի և Վանաձորի ավագ դպրոցների, ինչպես նաև մի շարք միջին մասնագիտական հաստատությունների հետ իրականացնելով մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման աշխատանքներ, անցկացնում են բաց դռների օրեր: Համալսարանի ներկայացուցիչները մասնակցում են նաև Երևանում անցկացվող «Կրթություն և կարիերա» EXPO-ին:

ՄԳՀ-ը քոլեջի ուսանողները իրենց կրթությունը շարունակում են համալսարանում, հիմնականում հեռակա բաժնում:

Օտարերկրացի ուսանողների ընդունելությունն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N700-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի» և ՄԳՀ օտարերկրյա դիմորդների ընդունելության կանոնակարգին համաձայն:

«Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ օտարերկրացի դիմորդների հավաքագրման աշխատանքները համակարգվում են Մարքեթինգի և հասարակության հետ կապերի բաժնի կողմից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բաժինը համագործակցում է տարբեր երկրներում՝ մասնավորապես հնդկաստանում բժշկական մասնագիտությունների համար դիմորդներ հավաքագրող ընկերությունների հետ: Բաժինը զբաղված է նաև միջազգային կրթական տարածքներում Համալսարանի մասին իրազեկվածության բարձրացման ուղղությամբ, որի համար սոցիալական էջերում իրականացնում է գովազդային արշավներ: Բաժնի աշխատանքներն առավելապես ուղղված են արտերկրից ուսանողների ներգրավմանը, որը ներկա փուլում բուհն իր զարգացման հիմնական վեկտորն է համարում:

Դիմորդները հնարավորություն ունեն փաստաթղթերը ներկայացնել նաև առցանց՝ բուհի պաշտոնական էլ. Փոստին, իսկ փաստաթղթերի ներկայացման հետ կապված իրենց հուզող հարցերով կարող են դիմել ՄՈՒՀ-ում շուրջօրյա գործող աջակցության թեժ գծին:

ՄԳՀ ուսանողների ընդունելության քննություններն անցկացվում են համալսարանի ներքին կանոնակարգերի, ինչպես նաև օտարերկրյա դիմորդների ընդունելության կանոնակարգի («Մխիթար Գոշ» համալսարան օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում աշխատող դիվանագետների ընտանիքների անդամների ընդունելության կարգը) համաձայն: Բժշկական ֆակուլտետի ուսանողները անցնում են ներբուհական թեստավորում երկու առարկայից: Հնդկաստանից դիմորդները պետք է անցնեն NEET (national eligibility cum entrance test) քննությունը, որը բժշկական ուսումնական հաստատություններում սովորելու պարտադիր նախապայման է:

Այլ համալսարաններից՝ այդ թվում նաև արտերկրից ուսումը շարունակելու նպատակով ուսանողների տեղափոխումը համակարգվում է ՄԳՀ-ի «Ուսանողների ակադեմիական շարժունության մասին կանոնակարգով»: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերջին տարիներին տեղափոխված ուսանողների մեծամասնությունը օտարերկրացիներ են «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ, վերջիններս նախընտրում են ՄԳՀ-ն համեմատաբար մատչելի ուսման վարձավճարի համար, ինչպես նաև այլ ուսանողների/շրջանավարտների խորհրդի հիման վրա:

ՄԳՀ-ում սահմանվել են անվճար ուսուցման տեղեր, կրթաթոշակներ և մի շարք զեղչեր և արտոնություններ՝ դիմորդների ներհոսքն ապահովելու նպատակով: Համաձայն ՄԳՀ ինքնավերլուծության տվյալների՝ վերջին երեք տարիների ընթացքում ուսանողների թվաքանակը եղել է համեմատաբար կայուն մոտ 900, որոնցից կեսից ավելին բժշկական ֆակուլտետի օտարերկրացի ուսանողներ են, միևնույն ժամանակ պետք է նշել, որ հեռակա համակարգով իրականացվող մյուս մասնագիտություններով ուսանողների թվաքանակը այնուամենայնիվ մնում է փոքր:

4.2 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Ուսանողների կարիքների վերհանումը ՄԳՀ-ում իրականացվում է տարբեր մարմինների կողմից: ՄԳՀ-ի ուսանողների ներկայացուցիչները մշտապես ընդգրկված են ՄԳՀ-ի ռեկտորատում և գիտական խորհրդում: Մասնավորապես՝ Գիտական խորհրդի անդամների 25%-ը ուսանողներ են: ՄԳՀ ուսումնական գործընթացի հետ կապված բոլոր քննարկումներում ընդգրկված են ուսանողների ներկայացուցիչները:

Փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ կոլեգիալ մարմիններում ընդգրկված ուսանողները անհրաժեշտության դեպքում բարձրաձայնում են առկա խնդիրները:

ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կարիքների վերհանման հետևյալ մեխանիզմները, օրինակ՝ իրականացնում է անանուն հարցումներ ուսանողների շրջանում, ռեսուրսների, դասախոսների կողմից կիրառվող մեթոդների, դասընթացների, բուհի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այդ հարցումների արդյունքում վեր հանված խնդիրները մեծ մասամբ ստանում են լուծումներ՝ բուհը կարճ ժամկետում կառուցել է ճաշարան, կարգավորվել է Wifi ինտերնետային ծառայության որակը: Պարզ դարձավ նաև, որ ուսանողների առաջարկությամբ 2022-2023 թվականների նոր ուսումնական պլաններում ավելացվել են հիմնական և կլինիկական առարկաների գործնական պարապմունքների ժամերը: Եղել է դեպք, որ դասախոսը լավ չի տիրապետել անգլերեն լեզվին և ուսանողների բողոքի արդյունքում դասախոսը փոխվել է:

ՄԳՀ-ում ստեղծվել է նաև ուսանողների հոգեբանական և սոցիալական աջակցության կենտրոն, որտեղ ցանկացած ուսանող կարող է անվճար խորհրդատվություն ստանալ:

Այսպիսով, փորձագիտական խմբի այցելությունից պարզ դարձավ, որ վերջին մեկ տարվա ընթացքում ուսանողների կողմից բուհի ղեկավարությանը ուղղված դիմում-բողոքների թիվը նվազել էր:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

ՄՈՒՀ-ում գործում է «Ակադեմիական պարտքերի լրացման կարգ» որի համաձայն մինչև 100 ժամ բացակայություններ ունեցող և անբավարար գնահատված ուսանողների համար կազմակերպվում են լրացուցիչ դասընթացներ, ինչը օգնում է հաջողությամբ հանձնել քննությունները: Ուսանողները դասընթացներին մասնակցում են իրենց ցանկությամբ: Դասընթացները կազմակերպվում են հստակ ժամանակացույցով մինչև կիսամյակային քննաշրջանի սկիզբը:

Համալսարանը իրականացնում է նաև ակադեմիական խորհրդատվություններ, ինչը հատկապես պահանջված է հեռակա բաժնի ուսանողների համար:

Առաջին կուրսի ուսանողների համար անցկացվում է «Կողմնորոշման օր», որի ժամանակ ուսանողական խորհրդի անդամները, ինչպես նաև համալսարանի աշխատակիցները առաջին կուրսի ուսանողներին ծանոթացնում են բուհի հիմնական կանոններին:

Համալսարանը հնարավորություն է տալիս ուսանողների ինքնակազմակերպվել իրենց մշակութային և սպորտային հետաքրքրությունների շրջանակներում, որի համար տրամադրում է ռեսուրսներ:

ՄՈՒՀ-ը մշակել է «Երիտասարդ լիդերների պատրաստման քաղաքականություն» (2022թ.), որը համակարգում է համալսարանի ռազմավարական զարգացման գծով պրոռեկտորը: Քաղաքականության ներդրման գլխավոր նպատակներից է Շրջանավարտների կարիերայի և աշխատանքի տեղավորման կենտրոնին կից ստեղծել «Երիտասարդ լիդերների» ակումբ խթանելով ուսանողների մոտ առաջնորդության և կառավարման ունակությունների ձևավորումը, զուգակցելով ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությունը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ակումբը դեռևս ձևավորման փուլում է:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

ՄԳՀ-ում ուսանողները վարչական անձնակազմին և կառավարման մարմիններին կարող են դիմել աշխատանքային ժամերին:

Փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, ուսանողները մշտապես ունեն հնարավորություն տարբեր հարցերով դիմելու ամբիոնի վարիչներին, դեկաններին, ուսումնական և դաստիարակչական գծով պրոռեկտորին, ռեկտորին, գործում են հետադարձ կապի մեխանիզմներ և միջոցներ, որոնցից է օրինակ՝ «Թեժ գիծ»-ը, որը գործում է ամեն օր, 24 ժամ շարունակ: Ուսանողները լիովին տեղեկացված են ծառայության մասին, իսկ հեռախոսահամարը գրանցված է բոլորի մոտ: Այցի ընթացքում նաև հաստատվեց այն փաստը, որ համալսարանի ղեկավարությունն առնվազն ամիսը մեկ անգամ կազմակերպում է հանդիպումներ ուսանողների և նրանց ակտիվի հետ, իսկ կուրսերի ավագների միջոցով ուսանողները հնարավորություն ունեն անմիջական հաղորդակցվելու նաև ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հետ:

Ուսանողները ժամանակին իրազեկվում են ուսման վարձավճարի զեղչերի համար դիմելու ժամկետների վերաբերյալ, որոնք տրամադրվում են ՄՈՒՀ-ում գործող «Ուսանողներին նյութական օգնություն (նպաստի, կրթաթոշակի) տրամադրման կարգի» (2022թ.) համաձայն, այն սահմանում է նյութական օգնության տրամադրման դեպքերը և նորմերը: Այցի ընթացքում պարզաբանվեց նաև, որ բացի պարտադիր զեղչերից ՄՈՒՀ-ը աջակցություն է ցուցաբերում բարձր առաջադիմությամբ կարիքավոր ուսանողներին, ՄԳՀ-ի կողմից կրթաթոշակ է տրամադրում պատերազմի մասնակից ուսանողներին, օգնություն է տրամադրում բազմազավակ ընտանիքների ուսանողներին, ինչպես նաև հայտարարում է որոշակի ժամանակահատված, որի ընթացքում ուսման վարձը վճարած ուսանողներին տրվում է 10 տոկոս զեղչ:

ՄՈՒՀ-ը ունի անձնագրային և վիզաների հաշվառման բաժին, որը օտարերկրացի ուսանողներին իրազեկում է վիզաների ժամկետների լրանալու մասին և աջակցում է կեցության փաստաթղթերի ձևակերպման հարցերում:

Ընդհանուր առմամբ ուսանողների մեծ մասը գոհ է վարչական աշխատակիցների աշխատանքից:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

ՄՈՒՀ-ում ուսանողների կարիերային աջակցության նպատակով ստեղծվել է «Շրջանավարտների կարիերայի և աշխատանքի տեղավորման» կենտրոնը: Կարիերայի կենտրոնը ուսանողների հետ իրականացնում է աշխատանքներ՝ ինքնակենսագրական գրելու հմտությունների ձևավորմանը, գործատուների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման ուղղությամբ: Կարիերայի կենտրոնը նպաստում է ՄՈՒՀ-ի շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովմանը, ստեղծվել է շրջանավարտների ասոցիացիա, ովքեր իրար հետ շփվում են WhatsApp խմբով:

ՄՈՒՀ-ը ունի նաև գործատուների ռեգիստր, որտեղ ներգրվված են պոտենցիալ գործատուները, այս աշխատանքները իրականացվում են ռեկտորի անմիջական վերահսկողությամբ: Կազմակերպվում են աշխատանքի ամենամյա տոնավաճառներ:

ՄԳՀ-ում ուսանողների կարիերային նպաստող գործընթացներում անուղղակիորեն մասնակցում են մի շարք ստորաբաժանումներ:

Հաշվի առնելով, որ հնդիկ ուսանողները բուհը ավարտելուց հետո աշխատանքի են անցնում հիմնականում իրենց երկրում, պարտադիր ներքին քննություն հանձնելու դեպքում, ՄՈՒՀ-ը իրականացնում է նախապատրաստական դասընթացներ հնդկաստանից մասնագետների ներգրավմամբ:

ՄԳՀ-ի շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստում են նաև հնդկաստանում կազմակերպված ամառային ուսումնական պրակտիկաները, որպես ուսանող-գործատու շփման առաջնային օղակ:

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

ՄԳՀ-ում գործում է Ուսանողական գիտական ընկերությունը (ՈՒԳԸ), փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ձևավորված են օտարերկրացի և տեղացի ուսանողների գիտական ընկերություններ, որի հիմնական պատճառը լեզվահմացության խոչընդոտն է:

Ամբիոնները իրականացնում են հետազոտական նախագծեր, որտեղ ներգրավված են դասախոսներ և ուսանողներ:

Ուսանողները ընդգրկված են նաև գիտական խմբակներում, որոնք միավորված են որևիցէ հետազոտական թեմայի կատարման շուրջ: Ուսանողների մասնակցությամբ պարբերաբար իրականացնում է կոնֆերանսներ, գիտաժողովներ, ինչպես նաև տարբեր սեմինարներ, օրինակ՝ ՄԳՀ-ի ամենամյա ուսանողական գիտաժողովը նվիրված հազվագյուտ հիվանդությունների օրվան:

ՄԳՀ ուսանողները մասնակցում են ինչպես հանրապետական, այնպես էլ միջազգային գիտաժողովների, կոնֆերանսների, օրինակ՝ փորձագիտական այցի օրերին ՄԳՀ ուսանողուհին զեկուցումով մասնակցում էր Վրաստանում կազմակերպված միջազգային կոնֆերանսին, արժանացել է մրցանակի: Ընդհանուր առմամբ 2022-2023թթ. դրությամբ տպագրվել է ուսանողների 6 գիտական հոդված (3-ը՝ 2022 թվականին, 3-ը՝ 2023 թվականին):

ՄԳՀ-ն փորձում է փոխկապակցել հետազոտությունը ուսումնառության հետ, ինչպես ուսանողներին ներգրավելով հետազոտական նախագծերում այնպես էլ նպաստելով վերլուծական հետազոտական բաղադրիչի ապահովմանը կրթական ծրագրերում, ներդրվել են նաև հետազոտական կարողությունները զարգացնող առարկաներ (օրինակ՝ հետազոտության մեթոդաբանություն, բժշկագիտության արդի խնդիրներ), կատարվում են կուրսային և ավարտական աշխատանքներ: Բժշկական մասնագիտությունների համար կիրառվում են իրավիճակային հանձնարարականներ, պրակտիկ հետազոտական հմտությունների ձևավորում կլինիկական առարկաների ուսուցման ընթացքում:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

Ուսանողները իրենց պարտականությունների և իրավունքների մասին ծանոթանում են Ուսանողի ուղեցույցից, որը մշակված է հայերեն և անգլերեն լեզվով, ուղեցույցը նաև տեղադրված է ՄՈՒՀ-ի կայքեջում: Ուսանողների հետ կնքվող պայմանագրերում նույնպես նշված են իրենց իրավունքները և պարտականությունները:

ՄԳՀ-ում ուսանողների իրավունքների պաշտպանությունը իրականացնող հիմնական պատասխանատու մարմինը ՄԳՀ Ուսանողական խորհուրդն է, այն գործում է իր կանոնադրության համաձայն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում փաստացի գործում է երկու ՈՒԽ՝ տեղացի և օտարերկրյա ուսանողների: Տեղացի ուսխորհրդում ընդգրկված են նաև հեռակա բաժնի ուսանողներ:

Երկու ուսանողական խորհուրդներից կոլեգիալ մարմիններում կան ընդգրկված ուսանողներ: Ուսանողների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ կոլեգիալ մարմիններում թեկնածուների առաջադրումը և ընտրությունը իրականացվում է համաձայն սահմանված ՈՒԽ կանոնակարգի, ինչպես նաև այն, որ ուսումնադաստիարակչական գծով պրոռեկտորը հարցազրույց է ունենում ընտրված թեկնածուի հետ և տալիս իր համաձայնությունը:

ՈՒԽ-ները հիմնականում իրականացնում են իրենց տարեկան պլանով նախանշված մշակութային, սպորտային և ժամանցային բնույթի միջոցառումները, պարզվեց, որ երկու ՈՒԽ-ները այս հարցերում իրար հետ չեն կարողանում համագործակցել հիմնականում լեզվահիմացության պատճառով:

ՈՒԽ նախագահությունում ձևավորված են մի շարք հանձաժողովներ՝ իրավական, արտաքին կապերի, լրատվության և հասարակայնության հետ կապերի, գիտակրթական, մշակույթի, սոցիալական հարցերի և սպորտի, ֆինանսատնտեսական, կարող են ստեղծվել նաև ժամանակավոր հանձնաժողովներ:

Ուսանողները իրավունք ունեն համապատասխան իրավիճակի դեպքում դիմում ներկայացնել էթիկայի հանձնաժողով:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

ՄՈՒՀ-ը Որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացվում են հարցումներ ուսանողների շրջանում՝ ռեսուրսներից ու ենթակառուցվածքներից ուսանողների բավարարվածության ուսումնասիրության, վարչական կազմի աշխատանքից բավարարվածության ուսումնասիրության, պրակտիկայի արդյունքների ուսումնասիրության, կարիերայի կենտրոնի աշխատանքների գնահատման, դասախոսը՝ ուսանողի աչքերով, շրջանավարտների հետ հարցումներ՝ մատուցվող կրթական ծառայությունների որակի և արդյունավետության գնահատման վերաբերյալ:

Վերոնշյալ հարցումների պատասխանները ամփոփվել են ՄՈՒՀ-ի կողմից, սակայն հարցումների արդյունքների որակական վերլուծություն չի կատարվել:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ի դիմորդների հավաքագրման և ընդունելության քաղաքականությունը, որի իրականացման համար կիրառվում են մի շարք մեխանիզմներ, կարևոր է ընգծել այդ նպատակով ժամանակակից թվային գործիքակազմի կիրառությունը, որը հատկապես արդյունավետ է օտարերկրացի ուսանողների հավաքագրման

համար, ինչպես նաև կանոնակարգված են ուսանողների ընդունելության մեխանիզմները ապահովելով՝ թափանցիկություն և հասանելիություն բոլոր դիմորդների համար: Կարևոր է նաև, որ ՄՈՒՀ-ը իրականացվող կրթական ծրագրերի շարունակականությունը փոխկապակցում է աշխատաշուկայի վերլուծությունների և թողարկվող մասնագետների պահանջարկի հետ:

ՄՈՒՀ-ի առանձնահատկություններից է մի շարք կրթական ծրագրերով միայն հեռակա բաժնում ընդունելությունը, որը իր հերթին պահանջում է տարբերակված մոտեցումներ հեռակա ուսուցմամբ դիմորդների հավաքագրման համար, այս ուղղությամբ աշխատանքների իրականացումը թույլ կտա նաև բարելավել նաև հեռակա բաժնի ընդունելության թվերը: Հարկ է նշել, որ բժշկական մասնագիտությունների դիմորդների հավաքագրման աշխատանքները ավելի արդյունավետ են եղել օտարերկրացի ուսանողների հավաքագրման տեսանկյունից, ինչի մասին փաստում են ուսանողական համակազմի տվյալները: Փորձագիտական խումբը կարծում է, որ ՄՈՒՀ-ի կողմից ուսանողների հավաքագրման գործընթացում տարբերակված մեխանիզմների կիրառությունը կնպաստի դիմորդների թվի համամասնական աճին, ապահովելով կրթական ծրագրերի շարունակականությունը:

Փորձագիտական խումբը բարձր է գնահատում ՄՈՒՀ-ի ուսանողակենտրոն կրթական միջավայր ստեղծելու ջանքերը: Ուսանողների կարիքների վեր հանման գործընթացներում, հարկ է ընդգծել որ, ՄՈՒՀ-ն ունի իրենց տեսակետները ազատ արտահայտող, առկա խնդիրների մասին բարձրաձայնող և ակտիվ կրթական դիրքորոշում ունեցող և պահանջատեր ուսանողություն, ինչը նպաստում է բուհի զարգացմանը և վեր հանված խնդիրների արագ լուծմանը:

Դրական է, որ ՄՈՒՀ-ը սահմանելով ակադեմիական պարտքերի մարման ընթացակարգեր, ուսանողների համար հնարավորություն է ստեղծում կրկնել դասընթացը, եթե այն բավարար մակարդակով չի յուրացվել, կարևոր է նաև որ ուսանողները կարող են ստանալ անհրաժեշտ խորհրդատվություն կիսամյակային նախաքննական շրջանում, որը հատկապես կարևորվում է հեռակա բաժնի ուսանողների համար: Սակայն ուսանողների կարիքների հիման վրա բացահայտված կամ հետաքրքրություններից բխող լրացուցիչ դասընթացներ ՄՈՒՀ-ը դեռևս չի իրականացնում, օրինակ՝ անգլերեն լեզվի իմացության բարձրացումը տեղացի ուսանողների մոտ կարող է նպաստել բուհում միջմշակութային հաղորդակցմանը, ինչպես նաև բուհի ՌԾ-ով նախանշված մշակութային կենտրոն դառնալու հեռանկարի իրագործմանը:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում բուհում ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության մեկտեղման գաղափարը, որը ժամանակակից կրթության զարգացման միտումներից է, այսպիսով ՄՈՒՀ-ը նպատակ ունի «Երիտասարդ լիդերների» ակումբի միջոցով ուսանողների մոտ ձևավորել առաջնորդության և կառավարման հմտություններ, որը կարող է նպաստել ուսանողների հետագա կարիերայի առաջընթացին:

Փորձագիտական խումբը ընդգծում է, որ ՄԳՀ-ում ուսանողներ վարչական աշխատակազմ հաղորդակցությունը գտնվում է շատ բարձր մակարդակում, այս ուղղությամբ բուհի ղեկավարությունը վերջին տարիներին կատարել է տեսանելի քայլեր՝ մշտապես հասանելի լինելով ուսանողների համար, ինչպես նաև առարկայական լուծումներ տալով նրանց թե՛ կրթական, թե՛ սոցիալական խնդիրներին: ՄԳՀ-ի ղեկավարությունը պատրաստակամ է կրթությունը գրավիչ դարձնել ինչպես տեղացի այնպես էլ օտարերկրացի ուսանողների համար, առաջնային համարելով կրթության որակի ապահովումը և ուսանողակենտրոն մոտեցումները:

Ներկա փուլում վարչական աշխատակազմին դիմելու հստակ ժամանակացույցի բացակայությունը չի խոչընդոտում ուսանողներին ցանկացած պահի դիմել իրենց հուզող հարցերով, սակայն ուսանողների հետ հանդիպումների կանոնակարգումը անհրաժեշտ է նաև բուհի

կառավարման արդյունավետության բարձրացման տեսանկյունից, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ բուհը ուղղորդված աշխատանքներ է իրականացնում ուսանողների քանակակազմի ավելացման ուղղությամբ։

Դրական է, որ ՄՈՒՀ-ը ունի կարիերայի և աշխատանքի տեղավորման կենտրոն, որի աշխատանքները հիմնականում ուղղված են տեղացի ուսանողների կարերային, քանի որ օտարերկրացի ուսանողները աշխատանքի են անցնում իրենց երկրներում։ Դրական է, որ ՄՈՒՀ-ը անուղղակիորեն նպաստում է նաև օտարերկրյա ուսանողների հետագա մասնագիտական առաջընթացին, ամառային պրակտիկաները կազմակերպելով իրենց երկրներում և նախապատրաստելով իրենց երկրում NEET քննությանը։ Այդուհանդերձ, կենտրոնի աշխատանքների վերաբերյալ վերլուծություններ ՄՈՒՀ-ը դեռևս չի իրականացրել, որը հնարավորություն կտա գնահատելու մատուցվող ծառայությունների արդյունավետությունը, օրինակ՝ քանի ուսանողի են աջակցել աշխատանքի տեղավորման հարցում։ Շրջանավարտների ասոցիացիայի ստեղծումը անշուշտ դրական քայլ է, սակայն ասոցիացիայի կողմից իրականացված քայլեր դեռևս տեսանելի չեն։

ՄՈՒՀ-ը նպատակային աշխատանքներ է իրականացրել հետազոտության ոլորտում ուսանողների ներգրավման ուղղությամբ։ Հետազոտությունը սահմանելով որպես ռազմավարական առաջնահերթություններից մեկը՝ ստեղծել է համապատասխան օղակներ, որտեղ ուսանողները կարող են մասնակից դառնալ ՄՈՒՀ-ի հետազոտական գործունեությունը, մի կողմից խթանելով դասախոսների և ուսանողների համագործակցությանը հետազոտության ոլորտում, մյուս կողմից ամրապնդելով ուսումնառություն հետազոտություն կապը։ Այսուհանդերձ, հետազոտական գործունեության ակտիվությունը դեռևս գտնվում է սաղմնային փուլում, փորձագիտական խումբը ընդգծում է, որ անհրաժեշտ է բարելավել դասախոսների և ուսանողների հետազոտական գործունեության խրախուսման մեխանիզմները, իսկ այս ուղղությամբ շարունակական աշխատանքները կնպաստեն ՄՈՒՀ-ի ՌԾ-ով նպատակների հաջող իրագործմանը։

Փորձագիտական խումբը կարևորում է ՄԳՀ ՈՒԽ-ի դերակատարությունը ՄՈՒՀ-ի շարունակական զարգացման գործընթացներում, դրական է, որ ՈՒԽ-ը կայացած մարմին է, որը ապահովում է ուսանողների միասնականությունը և համախմբում է նրանց ազգային, մշակութային, սպորտային և այլ կրթական հետաքրքրությունների շուրջ։ Ուշագրավ է երկու ՈՒԽ-ների առկայությունը, պայմանավորված օտարերկրացի և տեղացի ուսանողների հաղորդակցման բարդություններով, սակայն որպես միջազգային համալսարան, ՄԳՀ-ը կարողունակ է ստեղծել անհարժեշտ միջավայր ՈՒԽ-ների համատեղ ծրագրերի իրականացման համար, ինչպես նաև ստեղծելու անհրաժեշտ պայմաններ միջմշակութային հաղորդակցման համար։

Դրական է, որ համալսարանի ՈԱԲ-ի կողմից տարբեր հարցումներ են իրականացվում ուսանողների տրվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման համար, սակայն հարկ է նշել, որ ինստիտուցիոնալ մակարդակում գործընթացների գնահատման գործիքակազմը դեռևս կայացման փուլում է։

Եզրահանգում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՄՈՒՀ-ն ունի ուսանողների հավաքագրման հստակ մեխանիզմներ, գործում են ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմներ, ՄՈՒՀ-ի կողմից ուսանողների համար կազմակերպվում են լրացուցիչ պարապմունքներ և խորհրդատվություններ, գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության մարմին, ուսանողները ներգրավված են իրենց վերաբերող որոշումների կայացման գործընթացում փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանը բավարարում է 4-րդ չափանիշի պահանջներին։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՄԳՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Համաձայն բուհի ԻՎ-ի պրոֆեսորադասախոսական կազմի որակական ցուցանիշների ապահովումը համարվում է բուհի հետագա զարգացման կարևորագույն պայմաններից մեկը, որը 2021-2025թ. ՌԾ-ում սահմանվել է որպես նպատակ՝ ապահովել բարձրակարգ ՊԴ կազմով համալսարանի ամբիոնների համալրումը (նպ. 3)։ ՄՈՒՀ-ը կադրային քաղաքականությունը իրականացնում է կադրերի բաժնի միջոցով՝ որի գործունեության նպատակն է ժամանակին ապահովել անհրաժեշտ աշխատակիցներով համալրումը ըստ պահանջվող մասնագիտացումների և որակավորումների (ըստ կադրերի բաժնի կանոնակարգի)։

Պրոֆեսորադասախոսական կազմի ընտրությունը և համալրումը իրականացվում է ներքին կանոնակարգերի համաձայն (ՄԳՀ ՊԴ կազմի ձևավորման կանոնակարգ, 2022թ.), համալսարանում գործում են դասախոս, ասիստենտ, դոցենտ, պրոֆեսոր տարակարգերը։ ՊԴ կազմի համալրումը իրականացվում է մրցույթային կարգով, յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում հաստատվում են թափուր մրցույթային տեղերը՝ պայմանագրերի ժամկետների ավարտվելու և նոր ուսումնական տարվա համար նախատեսված հաստիքացուցակով պայմանավորված։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ օտարալեզու կրթական ծրագրերի (բուժական գործ և ստոմատոլոգիա) իրականացման համար ներգրավվում են օտար լեզվի իմացությամբ դասավանդողներ, սակայն օտար լեզվի (անգլերեն) իմացության մակարդակի համար հստակ պահանջներ ՄՈՒՀ-ում սահմանված չեն, հաշվի են առնվում լեզվի իմացությունը հաստատող վկայագրեր (այդ թվում ասպիրանտուրայի քննություն, և այլն), իսկ թեկնածուների հետ հարցազրույցը իրականացվում է անգլերեն լեզվով։ Մյուս կրթական ծրագրերում անգլերեն լեզվի իմացության պարտադիր պահանջ սահմանված չէ։ Բուհը բժշկական մասնագիտությունների գծով դասավանդողների հիմնականում ներգրավում է պրակտիկ ոլորտից (համատեղությամբ), թափուր տեղերի առաջացման ժամանակ նախ և առաջ մրցույթ հայտարարվում է բուհի հետ պայմանագիր ունեցող կլինիկական բազաների աշխատակիցների համար, հաշվի են առնվում մրցույթին մասնակցող դասախոսների մասնագիտական որակների համապատասխանությունը կրթական ծրագրերի պահանջներին։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՊԴ կազմը համալրվում է նաև բուհի շրջանավարտներով՝ ինչպես բժշկական, այնպես էլ միացյալ ֆակուլտետում ընդգրկված մասնագիտությունների համար։ ԱՊՀ (ՌԴ) այլ համալսարաններից և Հնդկաստանի Հանրապետությունից նույնպես կան ներգրավված դասախոսներ։

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

ՄԳՀ-ի կրթական ծրագրերում հաշվի է առնվում դասախոսի մասնագիտական ուղղվածությունը և դասավանդվող առարկային համապատասխան որակավորման առկայությունը, հաշվի են առնվում նաև առնվազն 5 տարին մեկ անգամ մասնագիտական զարգացման վկայականները: ՄԳՀ-ն մշակել է դասախոսի պաշտոնի անձնագիր:

ՄՈՒՀ-ի Մասնագիտական կրթական ծրագրերում (մասնագրերում) սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները՝ օրինակ «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ բժշկա-կենսաբանական, կլինիկական և հատուկ մասնագիտական առարկաներ դասավանդողները, որպես կանոն պետք է ունենան գիտական աստիճան (50 % գիտությունների թեկնածուներ և 10% գիտությունների դոկտորներ, ինչպես նաև տվյալ ոլորտում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ), պրակտիկ փորձառություն կամ օրդինատուրա՝ ուսուցանվող առարկայի նեղ շրջանակով: Իրավագիտություն ՄԿԾ-ի իրականացումն պետք է ապահովվի գիտամանկավարժական կադրերով, որոնք ունեն դասընթացների դասավանդման ուղղվածությանը համապատասխան բազային և հետբուհական կրթություն, հետևողականորեն զբաղվում են հետազոտական և գիտամեթոդական գործունեությամբ: Սահմանված ընթացակարգերին համաձայն բոլոր ՄԿԾ-ների համար ՄՈՒՀ-ը ներգրավում է պրակտիկ ոլորտի փորձառու մասնագետների, ինչպես նաև գործատուների:

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

ՄԳՀ-ում ՊԴ կազմի պարբերաբար գնահատումն իրականացվում է դասալասումների (ՄԳՀ դասալսումների անցկացման կարգ, 2022թ.) միջոցով, որի համար սահմանված է դասալսման ժամանակացույց, առկա է մշակված ձևաթերթ: Ըստ դասալսումների անցկացման կարգի դասալսման նպատակներից է ՊԴ կազմի մասնագիտական և մանկավարժական առաջընթացի ապահովումը, լավագույն փորձի բացահայտումն ու տարածումը: Դասալսումներն իրականացվում են պլանային (դասախոսները նախապես իրազեկվում են) և ոչ պլանային: Դասալսումների արձանագրությունների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ առավելապես ուշադրություն է հատկացվել դասավանդման մեթոդների կիրառությանը, ուսումնական նյութի մատուցման տեխնոլոգիաներին, վեր են հանվել դասավանդման բարելավման կողմերը՝ առաջարկությունների ձևով: Դասալսումների արդյունքները քննարկվում են դասախոսների հետ:

ՊԴ կազմի պարբերաբար գնահատումն իրականացվում է նաև ՈԱԿ հարցումների միջոցով՝ ուսանողների կողմից ՊԴ կազմի գնահատումը՝ դասախոսների աշխատանքի որակից և ուսումնական գործընթացից ուսանողների բավարարվածությունը: Հարցումների արդյունքներով ընդհանուր առմամբ ուսանողները իրենց գոհունակությունն են հայտնել ՊԴ կազմից: ՊԴ կազմի գնահատման կամ ինքնագնահատման հարցումներ, որոնք միտված են նրանց կարիքների բացահայտմանը ՄՈՒՀ-ը չի կիրառում:

ԻՎ զեկույցում նշվում է, որ դասախոսները կազմում են անհատական պլան՝ հաշվի առնելով սեփական կրթական, գիտական գործունեությունը, հասարակական, դաստիարակչական աշխատանքը և որակավորման բարձրացումը, այսուհանդերձ փորձագիտական այցից պարզ դարձավ, որ անհատական պլանները և դրանց կատարողական հաշվետվությունները դեռևս չեն դիտարկվում որպես դասախոսների գնահատման ձև:

ՊԴ կազմի պարբերաբար գնահատման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՄՈՒՀ-ը մշակել է «ՊԴ կազմի տարեկան գործունեության գնահատման և վարկանիշավորման կարգ», սակայն տվյալ կարգը գործածության մեջ չի դրվել: Փաստաթղթի ուսումնասիրությունից պարզ

դարձավ, որ օրինակ՝ հետազոտական գործունեության շրջանակներում գիտական հոդվածների տպագրության համար նախատեսվող վարկանիշային միավորները գրեթե հավասար են ՀՀ ԲՈԿ ցանկի ամսագրերի (3 միավոր) և Scopus, Web of Science ամսագրերի (4 միավոր) համար: Փորձագիտական այցի ընթացքում շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ վարկանիշավորման կարգի նախագիծը նախատեսվում է վերանայել, քանի որ լիարժեք չի արտահայտում դասախոսի գործունեության բոլոր կողմերի օբյեկտիվ գնահատականը:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

ՄԳՀ կադրերի բաժինը սահմանում է աշխատակիցների՝ վարչական, ուսումնաօժանդակ և պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման ժամանակացույցը, որի պարբերականությունը սահմանված է առնվազն երեք տարին մեկ անգամ: ՄՈՒՀ-ը ֆինանսական միջոցներ է հատկացնում մանկավարժական և մասնագիտական վերապատրաստումների համար:

Ամբիոնների վարիչների, ֆակուլտետների դեկանների և պրոռեկտորների կողմից իրականացված դասալսումների արդյունքում վեր են հանվել դասախոսների կողմից դասավանդման մեթոդների վերաբերյալ մանկավարժական վերապատրաստման կարիքը: ՊԴ կազմի Կարիքների վեր հանման գնահատում դեռևս չի իրականացվել, օրինակ ներգրավելով օտար լեզվի իմացությամբ դասավանդողներ, ՄՈՒՀ-ը դեռևս հստակ տվյալներ չունի թե ընդհանուր դասավանդողների քանի տոկոսն է տիրապետում օտար լեզվի (ռուսերեն և անգլերեն) և ինչ մակարդակով, այդ թվում առկա չեն նաև հայերեն լեզվով իրականացվող կրթական ծրագրերում դասավանդողների օտար լեզվի իմացության մասին տվյալները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բժշկա-կենսաբանական ցիկլի առարկաների դասավանդողները հատկապես կարևորում էին դասավանդման ժամանակակից մեթոդների ուղղությամբ կազմակերպված վերապատրաստումները, որոնք կրել են փուլային բնույթ: ՄԳՀ ՈԱԿ-ը 2022-2023 ուստարվա մեկնարկից առաջ իրականացրել է ՊԴ կազմի սեմինար-վերապատրաստումներ, իսկ նույն ուստարում մանկավարժական վերապատրաստում է կազմակերպվել ԵՊՀ-ում, որին մասնակցել են 40 դասախոս: ՊԴ կազմի համար մանկավարժական առցանց վերապատրաստումներ են կազմակերպվել նաև Չեխիայի Պրահայի Միջազգային կրթության IC ինստիտուտի և Բրյուսելի Բելգիական կրթական հարթակի (պորտալի) հետ կնքված հուշագրի շրջանակներում մասնակցել են 5 դասախոս:

Բացի վերը նշվածից ՊԴ կազմը սեփական նախաձեռնությամբ տարբեր վերապատրաստումներ է անցել վերջին տարիներին ինչպես փափուկ հմտությունների, այնպես էլ մասնագիտական կատարելագործմանը ուղղված:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ ՊԴ կազմի ապահովվածության կայունությունը գտնվում է ՄԳՀ-ի ղեկավարության ուշադրության ներքո: Ներկա փուլում բուհի ՊԴ կազմի ընդհանուր թիվը կազմում է 118 հոգի, որից 57-ը հիմնական աշխատողներ են, մյուսները՝ համատեղությամբ և ժամավճարով: Հիմնական աշխատողների մեծամասնությունը ունեն ոլորտային բազմամյա աշխատանքային փորձ (10-ից 50 տարի): Բուհում ՊԴ կազմի հետ կնքվում են տարբեր տեսակի աշխատանքային պայմանագրեր՝ հիմնական, ներքին և արտաքին համատեղությամբ, լրիվ/կես դրույքով, ինչպես նաև ծառայությունների մատուցման պայմանագրեր՝ ժամավճարային

համակարգով, որը թույլ է տալիս համալրել ՊԴ կազմը նեղ մասնագիտացում և գործնական հմտություններ ունեցող մասնագետներով: Այս տեսանկյունից բուհը իրականացնում է որակյալ կադրերի ներգրավման քաղաքականություն, վեց ամիս փորձաշրջանից հետո կնքվում են աշխատանքային պայմանագրեր 3-5 տարի ժամկետով: Հիմնական աշխատակիցների հետ պայմանագրերը կնքվում են անժամկետ:

Հարկ է նշել, որ առանձին մասնագիտական ծրագրերի համար ՄՈՒՀ-ը չի վերլուծել ՊԴ կազմի միջին տարիքը, հիմնական և համատեղությամբ աշխատակիցների քանակը ըստ ամբիոնների, որը թույլ կտա հստակ պատկերացումներ կազմել ՄՈՒՀ-ի երիտասարդ կադրերի ներգրավման քաղաքականության վերաբերյալ, ինչպես նաև գնահատել ներկա իրավիճակը: Այդուհանդերձ բուհը փաստում է, որ վերջին տարիներին ՊԴ կազմի թվաքանակը աճել է:

ՄՈՒՀ-ը կարևորում է նաև ՀՀ այլ պետական բուհերի հետ համեմատականում մրցակցային աշխատավարձի ապահովումը (բյուջեի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին աշխատավարձերին հատկացվող հոդվածը/ ֆոնդը դրական դինամիկա ունի, իսկ 2020թ.-ից և 2022թ. համեմատականում այն կրկնապատկվել է, ըստ բուհի կատարած հարցման տվյալների աշխատակիցների 67% գոհ է աշխատավարձից: Բուհում գործում է նաև վարչական ՈՒՕ և ՊԴ կազմի ընթացիկ խրախուսման քաղաքականություն, «լավ» աշխատանքի դիմաց տրվող պարգևավճարների միջոցով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՊԴ կազմի տարեկան վարկանիշավորման կարգի ներդրմանը զուգընթաց նախատեսվում է տարբերակված աշխատավարձերի համակարգի կիրառումը:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՄՈՒՀ-ը մշակել է «Մխիթար Գոշ» համալսարանի երիտասարդ դասախոսի դպրոցի կանոնակարգ, որը համակարգում է երիտասարդ դասախոսների մենթորությունը և սահմանում է աշխատելու փորձ չունեցող դասախոսին (մինչև 5 տարվա աշխատանքային փորձ ունեցողներին) բուհական աշխատանքում գրագետ ներգրավելու ընթացակարգերը: Երիտասարդ դասախոսի դպրոցի անմիջական ղեկավարը համարվում է ուսումնամեթոդական բաժնի ղեկավարը, իսկ աշխատանքները վերահսկվում են ՄԳՀ «Կենտրոնական մեթոդական խորհրդի» կողմից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մենթորության տարրերը արդեն իսկ ներդրված են համալսարանում՝ ուսումնամեթոդական բաժնի կողմից տրվում են անհատական խորհրդատվություններ ուսումնական գործընթացի կազմակերպման, գործող գնահատման համակարգի և այլ հարցերի վերաբերյալ:

ՊԴ կազմի մասնագիտական առաջընթացի ապահովմանն է ուղղված նաև հետազոտական գործունեության խթանման քաղաքականությունը, օրինակ՝ վարկանիշավորման կարգում արժևորվել է դասախոսի գիտահետազոտական գործունեությունը, ստեղծվել է գիտահետազոտական կենտրոն, որի նպատակն է ՊԴ կազմին և ուսանողներին ներգրավել համատեղ գիտահետազոտական նախագծերում:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

ՄԳՀ-ը վերջին կառուցվածքային փոփոխություններից հետո ստեղծել է ռազմավարական նպատակների իրականացման համար անհրաժեշտ ստորաբաժանումներ, օրինակ՝ Գիտահետազոտական կենտրոնը, Մարքեթինքի և հասարակության հետ կապերի բաժինը և այլն: Կառուցվածքային միավորները համալրվել են պահանջվող վարչական և ուսումնաօժանդակ կազմով,

մշակվել են համապատասխան պաշտոնների անձնագրերը և գործառույթների շրջանակը, այսուհանդերձ կան բաժիններ, որոնք դեռևս համալրված են մեկ աշխատակցով, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը իրականացնում է ռեսուրսախնայողության քաղաքականություն ըստ այդմ յուրաքանչյուր բաժին համալրվում է աշխատակիցներով ըստ ծագող անհրաժեշտության օրինակ՝ փաստաթղթաշրջանառության բաժինը Վանաձորի հասցեում նույնպես համալրվել է աշխատակցով, Երևանում բաժինը կարիք ունի երկրորդ աշխատակցի հաշվի առնելով օտարերկրացի ուսանողների թվաքանակի աճը, որը ՄՈՒՀ-ը նախատեսում է համալրել: Կարելի է նաև ընդգծել այն, որ ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար Վանաձորում և Երևանում գործում են առանձին ֆակուլտետներ, նշանակված են դեկաններ:

Փորձագիտական այցի պահին թափուր էր միջազգային գործունեության գծով պրոռեկտորի պաշտոնը (2022թ. օգոստոսից), այցի ընթացքում պարզ դարձավ, որ տվյալ պրոռեկտորի գործառույթները հիմնականում կատարում է ռեկտորը՝ պրոռեկտորների աջակցությամբ:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը բարձր է գնահատում ՊԴ կազմի ընտրության ՄՈՒՀ-ի վարած կադրային քաղաքականությունը, ինչի շնորհիվ ներկա փուլում ակնհայտ է պրոֆեսորադասախոսական կազմի բարձր պրոֆեսիոնալիզմը: Հաշվի առնելով վերջին տարիների բուհի զարգացման ակտիվ տեմպերը և օտարերկրացի ուսանողների ներգրավմամբ պայմանավորված միջազգային վեկտորի շեշտադրումը՝ ՄՈՒՀ-ը կարևորում է օտար լեզվի իմացությամբ ՊԴ կազմի առկայությունը, մասնավորապես օտար լեզվով «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ մյուս կրթական ծրագրերում դասավանդող ՊԴ կազմի համար օտար լեզվի՝ մասնավորապես անգլերեն լեզվի իմացության մակարդակի բարձրացման խնդիրը մնում է արդիական: Փորձագիտական խումբը կարևորում է միասնական/ինստիտուցիոնալ մոտեցումների ապահովումը բոլոր կրթական ծրագրերի համար, որը թույլ կտա ապահովել ՊԴ կազմի կայունությունը և կրթական ծրագրերի իրականացման շարունակականությունը: Անգլերեն լեզվի իմացության բարձրացումը թույլ կտա մյուս (հայերեն լեզվով իրականացվող առկա/հեռակա) կրթական ծրագրերում նույնպես ապահովել ՊԴ կազմի և ուսանողների ակադեմիական շարժունությունը:

Փորձագիտական խումբը կարևորում է մասնագիտական կրթական ծրագրերի մասնագրում ՊԴ կազմի մասնագիտական որակներին և փորձառությանը ներկայացվող պահանջները, ինչը նպաստել է գործատուների հետ սերտ գործընկերային կապերի հաստատմանը և դասավանդման գործընթացում պրակտիկ ոլորտից փորձառու, գիտական կոչում և աստիճան ունեցող կադրերի ներգրավմանը:

Կլինիկական բազաների հետ կնքված պայմանագրերի շրջանակներում պրակտիկ բժիշկների ներգրավումը ամրապնդում է բուհ-պրակտիկ ոլորտ կապը, որն իր հերթին նպաստում է համատեղությամբ աշխատող ՊԴ կազմի կայունությանը: Փորձագիտական այցը ցույց տվեց, որ բուհի նախկին շրջանավարտները հետագայում աշխատանքի անցնելով մասնավոր սեկտորում (նաև դասախոսում են ՄԳՀ-ում)՝ հանդես են գալիս նաև գործատուներ ապագա շրջանավարտների համար, որը ընդգծում է ՄԳՀ-ի սոցիալական դերակատարությունը և ՄԿԾ-ների համահունչ լինելը բուհի առաքելությանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում ՊԴ կազմի գնահատման մեխանիզմների առկայությունը, որոնցից որպես գործուն մեխանիզմներ կարելի է առանձնացնել դասալսումները և ՈԱԿ հարցումները: Դասալսման արդյունքները և դրանց հետագա վերլուծությունները խթան են

հանդիսացել ՊԴ կազմի մանկավարժական վերպատրաստումների իրականացման համար: Թեև ՄՈՒՀ-ը իրականացրել է հարցումներ ՊԴ կազմի շրջանում, սակայն կարիքների բացահայտմանը նպաստող հարցաշարեր չեն կիրառվում, բացակայում են նաև ինքնագնահատման հարցումները, իսկ ուսանողների շրջանում անցկացված գնահատման հարցումները արտահայտում են միայն ուսանողների գոհունակության աստիճանը ՊԴ կազմից: Գնահատման բազմազանեցումը և օբյեկտիվ տեղեկատվության հավաքագրումը կարևոր է նաև ՄՈՒՀ-ի կողմից մշակված վարկանիշավորման կարգի ներդրման համար, որի արդյունքները կնպաստեն ՊԴ կազմի խրախուսմանը և մասնագիտական առաջընթացին: Այսուհանդերձ փորձագիտական խումբը նշում է, որ ՄՈՒՀ-ն ունի համապատասխան ներուժ բազմազանեցնելու ՊԴ կազմի գնահատման գործիքակազմը և բարձրացնելու գնահատման արդյունավետությունը:

Փորձագիտական խումբը դրական է համարում ՊԴ կազմի կարիքների վեր հանման քաղաքականության իրականացումը բուհում, որի արդյունքները արդեն իսկ տեսանելի են՝ մանկավարժական վերապատրաստումների իրականացման տեսանկյունից, այսուհանդերձ հարկ է նշել, որ ՊԴ կազմի մասնագիտական կատարելագործմանը ուղղված մեխանիզմները դեռևս ներդրման փուլում են: Այս համատեքստում կարևոր են ՊԴ կազմի բազմակողմանի գնահատման մեխանիզմների կիրառությունը, որը ՄՈՒՀ-ին թույլ կտա բացահայտել ընթացիկ կարիքները և գնահատման արդյունքները կիրառել վարկանիշավորման գործընթացում: Կարիքների վեր հանման մեխանիզմների լավարկումը կարևոր է նաև վերապատրաստումների բազմազանեցման համար, օրինակ անգլերեն լեզվի ուղղությամբ: Վերոնշյալ մեխանիզմների համալիր կիրառությունը կարող է նպաստել նաև խրախուսման մեխանիզմների կանոնակարգմանը, որը փորձագիտական խումբը կարևորում է ՊԴ կազմի կայունության շարունակական ապահովման տեսանկյունից:

Դրական է, որ դասավանդող անձնակազմի թվաքանակի աճ է նկատվում վերջին տարիներին, միևնույն ժամանակ ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր մասնագիտության գծով ՊԴ կազմի վերաբերյալ տվյալների հստակեցումը, (ինչպիսիք են միջին տարիքը, գիտական կոչում աստիճան, աշխատանքային ստաժը՝ ընդհանրապես և ՄԳՀ-ում) և դրանց մշակման գործիքների լավարկումը թույլ կտա ավելի հստակ պատկերացումներ ձևավորել ամբիոնների գործունեության և առանձին մասնագիտությունների համար կադրային համալրվածության վերաբերյալ: Վերոնշյալ տվյալների մշակումը թույլ կտա ՄՈՒՀ-ին իրականացնել նպատակաուղղված կադրային քաղաքականություն, ինչպես նաև նպաստել ՊԴ կազմի մասնագիտական աճին:

Դրական է նաև ՄՈՒՀ-ի վարած երիտասարդ կադրերի ներգրավման քաղաքականությունը, ինչպես նաև մենթորության կանոնակարգումը երիտասարդ դասախոսի դպրոցի միջոցով, որը կարևոր է նաև ՊԴ կազմի կայունության և սահուն սերնդափոխության ապահովման համար: Կարևոր է նաև, որ ՄՈՒՀ-ը դասավանդման գործընթացում ներգրավում է նաև իր շրջանավարտներին այսպիսով նպաստելով նրանց գիտամանկավարժական գործունեությանը: ՊԴ կազմի խրախուսման և մասնագիտական առաջընթացի ապահովման համար ՄՈՒՀ-ը հատկապես կարևորում է գիտահետազոտական գործունեությունը, սակայն այս ուղղությամբ արված քայլերը առավելապես անհատական նախաձեռնությունների արդյունք են: ՄՈՒՀ-ի նորաստեղծ ԳՀԿ-ի աշխատանքները պլանավորման փուլում են, կենտրոնի գործունեության արդյունքները հետագայում թույլ կտան հաջողությամբ փոխկապակցել և կրթությունը և հետազոտությունը ինստիտուցիոնալ մակարդակում:

Ընդհանուր առմամբ ՄՈՒՀ-ի վարած ռեսուրսախնայողության քաղաքականությունը նպաստում է նաև ռազմավարական նպատակների իրականացման համար անհարժեշտ քանակությամբ վարչական և ուսումնաօժանդակ կազմի համալրմանը, որը ներկա փուլում դրական է հաշվի առնելով ՄՈՒՀ-ի կողմից նախաձեռնած լայնածավալ փոփոխությունները վերջին շրջանում և

դրանով պայմանավորված նոր հաստիքների ձևավորումը: Կարևոր է, որ առաջիկայում ՄՈՒՀ-ը իրականացնի նաև վարչական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքների արդյունավետության մոնիթորինգ, որը թույլ կտա ամբողջովին գնահատել կատարված փոփոխությունների դրական դինամիկան:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ՊԴ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր, ՄԿԾ մասնագրերում սահմանված են ՊԴ կազմին ներկայացվող պահանջները, ներդրված են ՊԴ կազմի կայունությանը և մասնագիտական առաջընթացին նպաստող մեխանիզմներ, ՄՈՒՀ-ն ունի ռազմավարական ծրագրի իրականացման համար համապատասխան ՈՒՀ անձնակազմ և բարձր որակավորում և պրակտիկ աշխատանքային փորձ ունեցող ՊԴ կազմ, փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանը **բավարարում է** չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՄԳՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

ՄԳՀ զարգացման 2021-2025թթ. Ռազմավարական ծրագրի կարևորագույն ռազմավարական նպատակներից է սահմանվել խթանել համալսարանի հետազոտական-ստեղծագործական և նորարարական գործունեությունը, նպաստել ՀՀ և արտերկրի առաջավոր գիտական կենտրոնների հետ համագործակցային-գործընկերային կապերի ձևավորմանն ու զարգացմանը:

ՄԳՀ-ի ռազմավարական հետազոտական ծրագրի նպատակն է «իրականացնել համապատասխան գիտական հետազոտություններ, ինտեգրել գիտությունն ու կրթությունը, ստեղծել և արդյունավետորեն փոխանցել նոր գիտելիքներ և տեխնոլոգիաներ առողջապահության, իրավագիտության և ՄԳՀ-ի հետ կապված ուսուցման այլ ոլորտներում՝ դրանով իսկ ամեն տարի ավելի ու ավելի մեծ ուշադրություն դարձնելով ուսանողների գիտահետազոտական և նորարարական գործունեության բարելավմանը»:

ՄԳՀ հետազոտական գործունեության 2022-2025թթ ռազմավարական պլանով նախատեսվում են Համալսարանի հետազոտական ոլորտի հիմնական խնդիրները, մասնավորապես, գիտական և գործնական գիտաժողովների անցկացում և մասնակցություն, խրախուսման մեխանիզմների սահմանում առավել շնորհալի ուսանողների և երիտասարդ գիտնականների համար, ուսանողներին պատրաստել ուսումնական և հետազոտական գործունեությանը և այլն:

ՄԳՀ կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ձևավորվել է գիտահետազոտական կենտրոն, որը պետք է գործի իր կանոնակարգի համաձայն և որի նպատակներից է առաջիկա 5 տարիների համար ձևավորել տարբեր գիտական ոլորտների զարգացման հստակ ռազմավարություն: Ըստ բուհի կենտրոնը հնարավորություն կտա ակտիվացնել ուսանողական գիտական գործունեությունը, գիտական կոչումներ ստանալու հնարավորությունը, վերականգնել հրատարակչական գործունեությունը և մեծացնել դասախոսական կազմի և ուսանողների մասնակցությունը գիտաժողովներին, գիտագործնական այլ միջոցառումներին:

ՄԳՀ-ի աշխատակիցների դրամաշնորհային գործունեությունը զարգացնելու նպատակով 2022 թվականին համալսարանը գրանցվել է Erasmus+ ծրագրում, ինչը հնարավորություն կընձեռի մասնակցել տարբեր միջազգային դրամաշնորհային ծրագրերի:

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

ՄԳՀ ինքնավերլուծության համաձայն՝ հետազոտական ոլորտում բուհի երկարաժամկետ հետաքրքրություններն ու հավակնություններն արտացոլված են համալսարանի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագ-րում և ՄԳՀ-ի 2022-2025թթ. գիտահետազոտական գործունեության ռազմավարական պլանում: Վերջինիս հիման վրա մշակվել է ռազմավարական ծրագ-րից բխող միջո-ցա-ռումների ծրագիր, որն էլ իր հերթին հիմք է հանդիսացել ՄԳՀ կարճաժամկետ միջոցառումների ծրագրի մշակման համար: Համալսարանի ամ-բիոն-ները գիտական հետազոտություններն իրականացնում են իրենց մասնագիտական ուղղվածություններին համապատասխան և տարեվերջին ներկայացնում են հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ:

Փորձագիտական այցի արդյունքում պարզվեց, որ ՄԳՀ-ում կատարվող հետազոտությունների որակի բարձրացման, գիտահետազոտական և ուսումնական գործընթացների ինտեգրման, ուսանող-դասախոս համատեղ գիտահետազոտական գործունեության խրախուսման մեխանիզմները դեռևս մշակման փուլում են: Մշակման փուլում են նաև երի-տասարդ գիտնականների ներգրավման և գիտաշխատողի մասնագիտական առաջընթացի գրավչության բարձրացման մեխանիզմները:

ՄԳՀ գիտական, ուսումնական, ուսումնամեթոդական գրականության հրատարակման կարգում արտացոլված է համալսարանի մտադրությունը հետազոտական գործունեության համար հստակ ռազմավարություն մշակելու և կառուցելու անհրաժեշտության մասին:

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

ՄԳՀ ինքնավերլուծության համաձայն ՄԳՀ-ում հետազոտական աշխատանքները համապատասխանում է համալսարանի գիտահետազոտական ոլորտում զարգացման ռազմավարական ծրագրին:

Ուսանողների ներգրավվածությունը գիտական հետազոտություններում և նորարարական նախագծերում մեծացնելու նպատակով կազմավորվել է ՄԳՀ ուսա-նողական գիտական ընկերությունները (տեղացի և օտարերկացի ուսանողների համար), որոնց հիմնական նպատակն է նպաստել բուհում սովորողների, հետազոտողների գիտական, հետազոտական, ստեղծագոր-ծական զարգացմանը:

Ինքնավերլուծության ուսումնասիրությամբ և փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ հետազոտական աշխատանքների արդյունքները, նախագծերը քննարկվում են ֆակուլտետային խորհուրդների, ՈՒԳԸ խորհուրդների նիստերում: Նախնական վերանայումից հետո աշխատանքները ներկայացվում են տարբեր ուսանողական գիտահետազոտական կոնֆերանսներում և հրապարակվում են թեզիսներ այդ աշխատանքների վերաբերյալ:

Երիտասարդ գիտնականներին մոտիվացնելու նպատակով համալսարանը ստեղծել է դասախոսի վարկանիշավորման կանոնակարգ, որը նախատեսվում է իրականացնել 2023-2024 ուստարում: Նման քաղաքականության իրականացումը ենթադրում է գիտական գործունեությամբ

զբաղվող երիտասարդ մասնագետների խրախուսում, վարձատրության միջոցով մոտիվացիա և կարիերայի աճի առաջարկներ:

ՄԳՀ գիտահետազոտական կենտրոնի կանոնակարգի 6-րդ գլխի դրույթներով կանոնակարգվում է ամբիոնների գիտահետազոտական աշխատանքը:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՄԳՀ-ն դեռևս չունի հետազոտական աշխատանքի խրախուսման կայուն մեխանիզմ:

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

ՄԳՀ-ն իր հետազոտական գործունեության միջազգայնացման կարևորությունը տեսնում է 2021-2025 թթ. ռազմավարական ծրագրում ամրա-գրված՝ ռազմավարական նպատակների իրագործման խնդիրներում, որոնցից, մասնավորաբար, 7.11-ը ձևակերպված է՝ «Խրախուսել միջազգային գրախոսվող գիտական հանդեսներում ՊԴ կազմի անդամների հրապարակումները և օժանդակել արտասահմանյան գիտաժողովներին նրանց մասնակցությանը»: Ռազմավարական ծրագրի ռազմավարական նպատակներից 7-րդը ձևակերպված է՝ «խթանել համալսարանի հետազոտական-ստեղծագործական և նորարարական գործունեությունը, նպաստել ՀՀ և արտերկրի առաջավոր գիտական կենտրոնների հետ համագործակցային-գործընկերային կապերի ձևավորմանն ու զարգացմանը»:

Ինքնավերլուծության համաձայն՝ վերջին չորս տարիների ընթացքում տպագրել է 49 հոդված միջազգային գրախոսվող մասնագիտական տարբեր պարբերականներում:

Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ ՄԳՀ դասախոսները պարբերաբար մասնակցում են տեղական և միջազգային կոնֆերանսներին, հանդես են գալիս զեկուցումներով, իրականացնում են մեթոդական աշխատանքներ, տպագրում են ձեռնարկներ:

ՄԳՀ գիտահետազոտական կենտրոնի կանոնակարգի 4-րդ գլուխն ամբողջովին վերաբերվում է բուհի միջազգային համագործակցությանը, մատնաշված են միջազգային համագործակցության հիմնական ուղղությունները:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Ինքնավերլուծության ուսումնասիրությունից և փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ համալսարանի աշխատակիցների վերջին 5 տարիների համապատասխան հրապարակումները ներառված են դասավանդման որոշ ծրագրերում: Այսպես, օրինակ, ՄԳՀ-ի դասախոսների հրապարակումները արտացոլված են այնպիսի առարկաների գրականության ցանկում, ինչպիսիք են՝ ընդհանուր քիմիա, օրգանական քիմիա, հյուսվածքաբանություն, բջջաբանություն, սաղմնաբանություն, ճառագայթային ախտորոշում, ուռուցքաբանություն, արյունաբանություն, թերապիա, ռազմադաշտային բժշկություն: Գիտական աշխատանքների կատարման ընթացքում ձեռք բերված բոլոր տվյալները դասախոսների կողմից օգտագործվում են գործնական պարապմունքներ անցկացնելու և այդ առարկաների դասախոսության ժամանակ: Որոշ մշակումներ դարձել են բժշկական ուղեցույցներ, ինչպես օրինակ, «Ընտանեկան բժշկություն և պոլիկլինիկական բիզնես» առարկայի գործնական պարապմունքների ժամանակ:

Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ գիտական հետազոտությունների արդյունքները ներդրվում են ինչպես համալսարանական ամբիոնների ուսումնական գործընթացում, այնպես էլ բժշկական աշխատանքի մեջ: Դրանք հիմք են հանդիսանում ուսումնական նյութերի մշակման, ինչպես նաև տարբեր առարկաների ուսանողների ուսուցման գործընթացում օգտագործվող կլինիկական արձանագրությունների մշակման և օպտիմալացման համար:

ՄՈՒՀ-ը կարևորում է ուսանողների ներգրավվածությունը գիտահետազոտական աշխատանքներում: Ինքնավերլուծության համաձայն, որը հաստավեց նաև փորձագիտական այցի ժամանակ, որ ուսանողներին առաջին կուրսից ծանոթացնում են հետազոտության տարբեր մեթոդների օրինակ՝ գիտական գրականության տվյալների քննադատական գնահատման մեթոդաբանությանը: Ամբիոններին կից ստեղծվում են գիտական խմբակներ, որտեղ ուսանողները դասախոսների հետ հետազոտական աշխատանքներ են կատարում ընտրված թեմայի շուրջ:

Դասախոսները նշում էին, որ ուսանողների մոտ հետազոտական հմտությունները զարգացնելու համար կիրառում են իրավիճակային խնդիրներ, ծանոթացնում հետազոտության մեթոդաբանությանը իրենց առարկաների շրջանակներում: Ուսանողներին տրվող հանձնարարականները ներառում են հետազոտական տարրեր և նպաստում են ուսանողներ մոտ հետազոտական և վերլուծական մտածողության ձևավորմանը:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ՄԳՀ-ն կարևորում է համալսարանի գիտահետազոտական ուղղության զարգացումը, ըստ ձևավորված գերակայությունների և նպատակների: Դրական է նաև այն, որ նախորդ հավատարմագրումից հետո բուհն ըստ ներկայացված խորհրդատվությունների մշակել է բարելավման պլան և համապատասխան ժամանակացույց շտկելու հետազոտության ոլորտում առկա խնդիրները:

Փորձագիտական խումբը գնահատում է բուհի ջանքերն ուղղված հետազոտական ոլորտի զարգացմանը, որն էլ իր արտացոլումն է գտել 2021-2025 ռազմավարական ծրագրում: Բուհի գիտական գործունեության գործընթացների պլանավորումն արտահայտվում է ռազմավարական երկարաժամկետ և կարճաժամկետ պլաններով:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄԳՀ կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ձևավորվել է գիտահետազոտական կենտրոն, որը գործելու է իր կանոնակարգի համաձայն և որը հնարավորություն կտա ակտիվացնել ուսանողական գիտական գործունեությունը, գիտական կոչումներ ստանալու հնարավորությունը, վերականգնել հրատարակչական գործունեությունը և մեծացնել դասախոսական կազմի և ուսանողների մասնակցությունը գիտաժողովներին, գիտագործնական այլ միջոցառումներին:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ ՄԳՀ-ի աշխատակիցների դրամաշնորհային գործունեությունը զարգացնելու նպատակով 2022 թվականին Համալսարանը գրանցվել է Erasmus+ ծրագրում, որը հնարավորություն կընձեռի մասնակցել միջազգային տարբեր դրամաշնորհային ծրագրերի:

ՈՒԳԸ գործունեությունը կարևոր է ուսանողներին մոտիվացնելու և գիտահետազոտական գործընթացներում ներգրավվելու տեսանկյունից, մինչդեռ համալսարանում այս մասով ձևավորված հստակ պարբերական գործընթացներ դեռ առկա չեն, իսկ խրախուսման մեխանիզմները՝ բացակայում են: Սակայն դրական է, որ ՄԳՀ-ի ուսանողները մասնակցում են նաև այլ բուհերի կողմից կազմակերպված ուսանողական գիտաժողովների, կոնֆերանսների:

Դրական է այն հանգամանքը, որ համալսարանը գիտակցում է հետազոտությունների միջազգայնացման կարևորությունը, և այն, որ ՄԳՀ դասախոսները պարբերաբար մասնակցում են միջազգային կոնֆերանսներին, հանդես են գալիս զեկուցումներով:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհը քայլեր է իրականացնել հետազոտական և ուսումնական գործընթացի փոխկապակցման ուղղությամբ: Այս տեսանկյունից կարևոր է բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում հետազոտության համար նախատեսված կառուցամասերի առկայությունը, որոշ կրթական ծրագրերի («Բուժական գործ»,

«Ստոմատոլոգիա») ուսումնական պլաններում «Գիտական հետազոտությունների մեթոդոլոգիա» դասընթացի առկայությունը, սակայն մտահոգիչ է, որ այն կամընտրական բնույթ ունի, իսկ դասընթացի բովանդակությունը պետք է վերանայել, շեշտադրելով կիրառական հետազոտական կարողությունների ձևավորումը: Փորձագիտական խումբը կարևորում է տվյալ դասընթացի ներառումը նաև մյուս ՄԿԾ-ներում: Դիտարկված ավարտական, կուրսային աշխատանքներում և մագիստրոսական թեզերում հետազոտական, կիրառական և վերլուծական բաղադրիչի թույլ լինելը փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում: Այս ուղղությամբ պետք է իրականացնել հստակ աշխատանքներ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում դասընթացի գնահատման համակարգում առանձին հետազոտական բաղադրիչ պարունակող անհատական աշխատանքների առկայությունը, ինչի նպատակային ու համակարգված կիրառումը կնպաստի հետազոտության և ուսումնառության կապի ամրապնդմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ պրակտիկաների շրջանակում հետազոտությունների իրականացումը կարևոր կարող է լինել հետազոտական ուղղության զարգացման համար, ինչը սակայն դեռևս առկա չէ:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՄԳՀ-ն դեռևս չունի հետազոտական աշխատանքի խրախուսման կայուն մեխանիզմ, շատ դասախոսներ մոտիվացված չեն իրականացնելու հետազոտություն: Դասախոսների և ուսանողների համար խրախուսման հստակ պլանի և մեխանիզմների ներդրումը կնպաստեն հետազոտական ոլորտի զարգացմանը:

Դրական է, որ ՄԳՀ-ն փորձում է կանոնակարգել գիտահետազոտական գործունեությունը, իսկ հստակ ու չափելի ցուցիչների սահմանումը և դրանց հետևումը կնպաստի տվյալ ոլորտի զարգացմանը և հաջողությունների ձեռքբերմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ կարևորվում է համալսարանի գիտահետազոտական ուղղության զարգացումը, առկա են ձևավորված գերակայություններ և նպատակներ, որոնք արտացոլված է 2021-2025 ռազմավարական ծրագրում, ձևավորվել է գիտահետազոտական կենտրոն, համալսարանը գիտակցում է հետազոտությունների միջազգայնացման կարևորությունը, դասախոսները և ուսանողները ներգրավված են գիտահետազոտական աշխատանքներում, քայլեր են ձեռնարկվել ուսուցման և հետազոտության կապի ամրապնդման համար, փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանը **բավարարում է** չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՄԳՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 6-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

«Մխիթար Գոշ» համալսարանը գործում է երկու հասցեներով՝ օգտագործման իրավունքով ուսումնական հաստատության շենքային պայմանները (Վանաձորում՝ ընդհ. մակերեսը 2391.22 քմ,

Երևանում՝ ընդհ. մակերեսը՝ 2192 քմ) համապատասխանում են լիցենզավորման պահանջներին, օժանդակ տարածքներ համապատասխանաբար 2166 քմ և 2000քմ, առկա են 58 դասասենյակներ/լսարաններ, 11 լաբորատորիա, 9 առարկայական կաբինետ, 2 գրադարան, 2 ընթերցասրահ, 2 համակարգչային լսարան, 2 մարզադահլիճ, մարզահրապարակ, բուֆետ-ճաշարան: Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ բոլոր լսարանները հագեցված են պրոյեկտորով և համակարգչով, գրադարանում (18քմ) առկա է հայերեն լեզվով հիմնական մասնագիտական գրականությունը, իսկ անգլերեն լեզվով ուսումնառողների համար՝ բավարար չէ: Խնդրի լուծման համար ՄՈՒՀ-ը 2023թ.-ից համագործակցում է GEOTAR-Media «Խորհրդատու-ուսանող» էլեկտրոնային գրադարանային համակարգի (ELS) հետ: Երևանում և Վանաձորում ուսումնառողները ունեն անհատական «կաբինետներ» և կարող են ցանկացած պահի օգտվել էլեկտրոնային գրադարանից: Փորձագիտական այցի ընթացքում ներքին շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ ELS-ը թույլ է տալիս օգտվել վերջին հրատարակության մասնագիտական գրականությունից, ինչը կարևորվեց բժշկական մասնագիտություններով ուսումնառողների կողմից: Այս համատեքստում պետք է նշել, որ ՄՈՒՀ-ը կարևորություն է տալիս էլեկտրոնային գրադարանային ռեսուրսների համալրմանը: Ընթերցասրահը հագեցած է համակարգիչներով և հասանելի է ուսանողներին ինքնուրույն աշխատանքի համար, համալսարանը ապահովված է ինտերնետ կապով:

Համալսարանի լաբորատորիաները հագեցած են անհրաժեշտ նվազագույն սարքավորումներով, առարկայական կաբինետներում առկա են համապատասխան ցուցադրական նյութեր, մուլյաժներ: Համալսարանը ունի սիմուլյացիոն կենտրոն, որը 2022/2023 ուսումնական տարում վերազինվել է մանկաբարձության և գինեկոլոգիայի, օպերատիվ վիրաբուժության, ուռուցքաբանության, թերապևտիկ և վիրաբուժական հիվանդների խնամքի, ստոմատոլոգիայի սիմուլյատորներով, բազմաֆունկցիոնալ 3D անատոմիական սեղանով: Ամփոփիչ քննության երկրորդ փուլի՝ գործնական հմտությունների գնահատման համար բուհը ձեռք է բերել անհրաժեշտ քանակությամբ սարքավորումներ, սիմուլիացիոն մանեկեններ և այլն:

Համալսարանը նաև օգտվում է գործընկերային ռեսուրսներից՝ մասնավորապես կլինիկաների հետ համագործակցության շրջանակներում ապահովում է մի շարք նեղ մասնագիտական առարկաների դասավանդման համար անհրաժեշտ ռեսուրսները ինչպես Երևանում, այնպես էլ Վանաձորում:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

ՄԳՀ 2021-2025 ՌԾ նպատակներից է՝ «զարգացնել համալսարանի ռեսուրսային բազան, ձևավորել կրթական և հետազոտական գործունեության իրականացման արդիական պայմաններ», որի իրագործման համար սահմանվել են խնդիրները և առաջընթացի գնահատման ցուցիչները:

Համալսարանն իր ռազմավարության մեջ իրականացնում է դասավանդման համար անհրաժեշտ նյութերի և ռեսուրսների արդիականացման քաղաքականություն: Վերջին տարիների ֆինանսական հոսքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ՄԳՀ-ի եկամուտները տարեցտարի ավելանում են, որը փաստացի պայմանավորված է ուսանողների՝ առաջին հերթին օտարերկրյա ուսանողների թվի աճով: Հարկ է նշել, որ ըստ վերջին տարիների բյուջեի կատարողականի ՄՈՒՀ-ը ֆինանսական ներհոսքերի առաջընթացի հետ մեկտեղ ավելացրել է ինչպես համալսարանի բարեկարգմանը և նյութատեխնիկական բազայի արդիականացմանը ուղղված ծախսերը, այնպես էլ ֆինանսական միջոցներ է հատկացրել ՊԴ կազմի և վարչակառավարչական անձնակազմի վերապատրաստումների համար (2023թ.): ՄՈՒՀ-ը պատրաստակամ է միջոցներ հատկացնել

կլինիկական բազաներում անհրաժեշտ կրթական միջավայրի ապահովման համար՝ մուլտիմեդիա պրոյեկտորներ, ուսումնական վահանակներ, գրատախտակներ և կահույք (պրակտիկայի վայրեր)։ Այսուհանդերձ, ՄԳՀ բյուջեի կատարողականում ընդհանրացված են ներկայացված ծախսերը, որը թույլ չի տալիս գնահատել դրանց մասնաբաժինը ըստ ուղղությունների։

ՄԳՀ-ի ՈԱԿ հարցումների արդյունքները ցույց են տվել, որ ուսումնառողների և դասավանդողների մեծամասնությունը գոհ են ՄՈՒՀ-ի տրամադրած ռեսուրսներից։ Կարևոր է ընդգծել, որ ՄՈՒՀ-ը միջոցներ է տրամադրում շահակիցների կողմից վեր հանված խնդիրների լուծման համար, օրինակ ուսանողների կողմից բարձրաձայնված կարիքների հիման վրա, բարելավվել է ինտերնետ կապի որակը, սեղմ ժամկետներում կառուցվել է բուֆետ, իսկ օրինակ դասախոսի պահանջով միկրոբիոլոգիայի լաբորատորիան համալրվել է համապատասխան սարքավորումներով և այլն։ Բարելավման գործընթացները շարունակական են, առաջիկայում նախատեսվում է վերանորոգել նաև ֆիզկուլտուրայի դահլիճը և մարզահրապարակը, որի բարեկարգման անհրաժեշտության մասին նշեցին և՛ ուսանողները և՛ շրջանավարտները։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նյութատեխնիկական բազայի արդիականացումը (լաբորատորիաներ, սարքավորումներ դիդակտիկ պարագաներ, մուլյաժներ և այլն) առավելապես վերաբերվում են բժշկական մասնագիտություններին, որը պայմանավորված է տվյալ ՄԿԾ-ների առանձնահատկություններից բխող պահանջներով և ուսուցման ձևով (առկա/հեռակա), նաև պարզ դարձավ, որ առաջիկայում ՄՈՒՀ-ը ծրագրում է ստեղծել «Իրավաբանական կլինիկա», «Իրավագիտություն» մասնագիտությամբ ուսումնառողների համար։

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

ՄՈՒՀ-ը ունի ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն, բյուջեի նախագիծը կազմվում է համալսարանի տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից՝ ըստ նախատեսվող հաշվապահական հաշվառման ձեռնարկատիրական և բուհի ստորաբաժանումների կողմից յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում ներկայացված կարիքների։ Գիտխորհուրդն ամեն տարի քննարկում է բյուջեի կատարողականը, որոշում է անհրաժեշտ փոփոխությունները, պլանավորում հաջորդ օրացուցային տարվա եկամուտներն ու ծախսերը։

2022թ. ՄՈՒՀ-ը մշակել և ներդրել է «Ռեսուրսախնայողության և առկա միջոցների արդյունավետ օգտագործման քաղաքականությունը», որի հիմնական նպատակն է ապահովել համալսարանի ֆինանսական կայունությունը, ինչպես նաև ֆինանսական միջոցների ծախսերի փոխկապակցումը համալսարանի կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորման հետ։ Քաղաքականությունը սահմանում է նաև ՌԾ-ի ակնկալվող արդյունքների ծախսարդյունավետության գնահատումը, եկամուտների և ծախսերի քաղաքականությունը և դրանց իրականացման ուժեղ և թույլ կողմերը։

ՄՈՒՀ-ի հիմնական եկամուտները հիմնականում պայմանավորված ուսանողների վարձավճարներով, այս տեսակետից ՄԳՀ-ի կողմից եկամտաբեր կրթական ծրագրեր են դիտարկվում «Բուժական գործը» և «Ստոմատոլոգիան», մյուսները ծախսարդյունավետ չեն, քանի որ ուսանողների համակազմը համեմատաբար քիչ է, վերոնշյալը սակայն ըստ բուհի չի խոչընդոտում ծրագրերի շարունակական իրականացմանը։ Չնայած ներդրումային հնարավորությունների առկայությանը, ներկա փուլում ՄՈՒՀ-ի ֆինանսական ներոսքերը դիվերսիֆիկացված չեն։

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

ՄԳՀ-ում ուսումնական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների պլանավորումն իրականացվում է բուհի առանձին բաժինների վարչական անձնակազմի կողմից՝ հիմնվելով սեփական կարիքների բացահայտման վրա, այս գործընթացում նաև ներգրավված է ՈԱ բաժինը՝ իրականացվող հարցումների միջոցով:

ՄՈՒՀ-ը իր կրթական ծրագրերի իրականացման համար ապահովում է անհարժեշտ և արդիական նյութատեխնիկական բազա, ինչպես համալսարանում, այնպես էլ գործընկերների հետ համատեղ ռեսուրսների կիրառությամբ, որը կարևոր նախապայման է հատկապես բժշկական մասնագիտությունների համար: Պրակտիկաների և նեղ մասնագիտական կլինիկական առարկաների ուսուցման համար ՄՈՒՀ-ը համագործակցում է մի շարք բժշկական հաստատությունների հետ՝ «Արմենիա» բժշկական կենտրոն, «Քանաքեռ-Զեյթուն» Երևանի ծննդատուն, «Կարդիոմեդ», «CMS», «Մնջոյան», «Գենետիկա», «Իզմիրլյան», «Մեդլայն» բժշկական կենտրոններ, «Աղեգնակ» ստոմատոլոգիական կլինիկա, «Հոգեկան առողջության պահպանման ազգային կլինիկա», Երևանի «Մեդեսի» ատամնաբուժական կլինիկա, «Մկրտումյան Սուսաննա» ստոմատոլոգիական կլինիկա, թիվ 1 պետական պոլիկլինիկա, Վանաձորի բժշկական կենտրոն, օրգանական քիմիայի գիտահետազոտական ինստիտուտ: Մյուս մասնագիտությունների գծով համագործակցում է՝ «Տաթև» միջնակարգ դպրոց, Հայրենական ապրանքներ արտադրողների միություն, «Վանաձոր» քաղաքապետարան, հարկային տեսչություն, թիվ 27 հիմնական դպրոց, H&L Law Group իրավաբանական կլինիկա:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ հիմնադիրը նախատեսում է խոշոր ներդրումային ծրագրեր իրականացնել համալսարանի զարգացման համար, մասնավորապես առաջիկա 5 տարիներին պլանավորվում է կառուցել ուսանողական «Կանաչ-Կամպուս» (հանրակացարան և հարակից հանգստի գոտի), որը ներկա փուլում խիստ արդիական է օտարերկրացի ուսանողների կեցության ապահովման համար, ուսանողական հանրակացարանի անհրաժեշտության մասին փորձագիտական խմբի հետ հանդիպումների ընթացքում շեշտադրեցին նաև ուսանողները: Մեկ այլ ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՄԳՀ-ի բազմապրոֆիլ հիվանդանոցի կառուցումը, որը նաև կծառայի որպես կլինիկական բազա և բժշկական մասնագիտություններով ուսանողների համար: Նշված ծրագրերի համար արդեն իսկ կատարվել են նախագծանախահաշվային աշխատանքներ:

Կրթական ծրագրերին համապատասխան ռեսուրսների առկայությունը ՄՈՒՀ-ը պլանավորում է մշտադիտարկել տարեկան պարբերականությամբ, որի համար մշակել է ընթացակարգ:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

ՄՈՒՀ-ը փաստաթղթավորման գործընթացները արդյունավետ կառավարելու նպատակով ներդրել է փաստաթղթաշրջանառության բաժինը: ՄՈՒՀ-ը ընդունել է տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման կանոնակարգ, որը սահմանում է պատասխանատուների շրջանակը, հիմնական հասկացությունները և փաստաթղթավորման կազմակերպման սկզբունքները: Ստացվող փաստաթղթերի ընդունումը և առաջնային մշակումը իրականացնում է համալսարանի Ընդհանուր բաժինը: Փաստաթղթերի բնօրինակները պահպանվում

են ընդհանուր բաժնում, իսկ էլեկտրոնային օրինակները տեղադրվում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում (որոշումներ, հրամաններ, կանոնակարգեր և այլն)։

Փաստաթղթերի և տեղեկատվության էլեկտրոնային կառավարման համար ՄՈՒՀ-ը կիրառում է էլ. փոստը և ներքին ցանցը։ Կանոնակարգը սահմանում է նաև ներքին փաստաթղթերի մշակման ընթացակարգը և պատասխանատուները, փաստաթղթերի պահպանման և արխիվացման գործընթացները։

Փաստաթղթաշրջանառության բաժինը յուրաքանչյուր կիսամյակ իրականացնում է իր գործունեության հաշվառում և վերլուծություն, հաշվետվություն է ներկայացնում ռեկտորին։

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին։

ՄՈՒՀ-ը ապահովում է իր ենթակառուցվածքների անվտանգությունը, շենքում առկա են հակահրդեհային միջոցներ և տարհանման սխեմաներ։ 2021թ. ԱԻՆ-ի հետ համատեղ իրականացվել է շենքից տարհանման ուսումնական վարժանք։ Լաբորատորիաները գործում են ըստ լիցենզիայի/սերտիֆիկատի պահանջների, պահպանվում են լաբորատորիայից օգտվելու անվտանգության կանոնները։

Երևանի մասնաշենքում ՄՈՒՀ-ը չունի առանձնացված բուժկետ, սակայն յուրաքանչյուր հարկաբաժին ապահովված է բժշկական առաջին օգնության պարագաներով։

Մասնաշենքերը հարմարեցված չեն հատուկ կարիքներով ուսանողների համար, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այդպիսի ուսանողներ բուհը չունի։

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ։

Որակի կենտրոնի կողմից իրականացվել են շահագրգիռ կողմերի հարցումներ, համալսարանի նյութատեխնիկական բազայից ուսանողների և դասավանդողների բավարարվածության վերաբերյալ։ Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ռեսուրսների արդյունավետությունը գնահատող ուղղակի մեխանիզմներ ՄՈՒՀ-ը չունի, սակայն ոչ ֆորմալ ձևով շահակիցների գնահատականների արդյունքում տեղի են ունենում որոշակի բարելավման գործընթացներ, օրինակ ինտերնետ կապի որակի բարելավման, էլեկտրոնային գրադարանի ներդրման խնդիրները և այլն։

Դատողություններ։

Փորձագիտական խումբը բավարար է համարում ՄԳՀ-ի ռեսուրսային բազայի համալրվածությունը, հարկ է նշել, որ առկա շենքային պայմանները (Երևանում և Վանաձորում) լսարանների նյութատեխնիկական հագեցվածությունը, գործընկերային ռեսուրսների համատեղ կիրառությունը նպաստում են կրթական ծրագրերի շարունակական լավարկմանը և՛ ուսանողների, և՛ ՊԴ կազմի համար ապահովելով անհրաժեշտ ռեսուրսներ արդյունավետ ուսումնառության իրականացման համար։ Կարևոր է ընդգծել, որ այս ուղղությամբ աշխատանքները ունեն շարունակական բնույթ։ Նախատեսվող ՄԳՀ կլինիկական բազայի կառուցումը և «Կանաչ Կամպուս» ուսանողական գոտու ստեղծումը, որոնք կարևոր դերակատարություն կարող են ունենալ բուհի հետագա զարգացման գործում՝ իր առաքելության իրագործման ճանապարհին։

Փորձագիտական խումբը բարձր է գնահատում ՄԳՀ-ի հիմնադրի ջանքերը համալսարանում ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր ապահովելու ուղղությամբ, ըստ էության բացահայտված կարիքներին համապատասխան տրամադրվում են ֆինանսական

ռեսուրսներ ուսումնական միջավայրի բարեկարգման և նյութատեխնիկական սարքավորումներով համալրման, ՊԴ կազմի վերապատրաստումների և ՌԾ-ով նախատեսված այլ նպատակների իրականացման համար:

Շարունակականության ապահովման տեսանկյունից ՄՈՒՀ-ը տեսանելիորեն բարելավել է բժշկական մասնագիտությունների համար անհրաժեշտ հատուկ նյութատեխնիկական բազան, սակայն փորձագիտական խմբի համար սակավ տեսանելի էր մյուս մասնագիտությունների հատուկ կարիքների վեր հանման և վերազինման դինամիկան: Փորձագիտական խումբը կարևորում է ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների համաչափ զարգացումը:

Փորձագիտական խումբը դրական է համարում ՄՈՒՀ-ի ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականությունը, որը նպաստում է ռեսուրսախնայողությանը և առկա միջոցների արդյունավետ օգտագործմանը, կարևոր է, որ ֆինանսական ծախսերը փոխկապացվում են ՌԾ իրականացման կարճաժամկետ և երկարաժամկետ պլանների հետ: Դրական է նաև, որ ՄՈՒՀ-ը գնահատում է իր կրթական ծրագրերի ծախսարդյունավետությունը՝ ներդնելով անհրաժեշտ ռեսուրսներ առավել եկամտաբեր ՄԿԾ-ները զարգացնելու և դիմորդների ներհոսք ապահովելու համար: Միևնույն ժամանակ հարկ է ընդգծել, որ <<ոչ եկամտաբեր>> կրթական ծրագրերի շարունակականությունը կախված է բժշկական ուղղվածությամբ ՄԿԾ-ների <<եկամտաբերությունից>>: Այս տեսանկյունից ֆինանսական միջոցների դիվերսիֆիկացիան և այլընտրանքային աղբյուրների որոնումը թույլ կտան ապահովել ՄՈՒՀ-ի կայուն զարգացումը և բոլոր ՄԿԾ-ների շարունակականությունը, հիմնվելով ոչ միայն արտաքին վեկտորի (օտարերկրացի դիմորդներ) այլև ներքին ռեսուրսների վրա:

Փորձագիտական խումբը կարևորում է ՄՈՒՀ-ում փաստաթղթաշրջանառության համակարգումը համանուն բաժնի ներքո, որը ըստ էության կանոնակարգել է տեղեկատվության հավաքագրման և փոխանակման մեխանիզմները կառուցվածքային ստորաբաժանումների միջև, այս գործընթացներում կարևոր է միասնական մոտեցումների ապահովումը և երկու հասցեների միջև տեղեկատվության փոխանակման միջոցների շարունակական բարելավումը:

Դրական է նաև ՄՈՒՀ-ում անվտանգ միջավայրի առկայությունը, համապատասխան միջոցներով համալրվածությունը, այսուհանդերձ ՄՈՒՀ-ը չունի բուժկետ՝ համալրված համապատասխան մասնագետի հաստիքով, իսկ բուհի տարածքը հարմարեցված չէ հատուկ կարիքներ ունեցող անձանց համար: Փորձագիտական խումբը լիահույս է, որ ՄՈՒՀ-ն իր հնարավորությունների սահմաններում կարող է կանոնակարգել և ապահովել ուսումնական միջավայրի անվտանգությունը և ապահովությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ը ապահովում է ՄԿԾ իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր տրամադրելով անհրաժեշտ մարդկային նութական և ֆինանսական ռեսուրսներ, ներքին և արտաքին շահակիցների կարիքների հիման վրա իրականացնում է ռեսուրսների և նյութատեխնիկական բազայի շարունակական համալրում, իրականացնում է ռեսուրսախնայողության քաղաքականություն, ֆինանսական միջոցները բաշխվում են ըստ առաջնահերթությունների, ներդրել է փաստաթղթաշրջանառության կառավարման համակարգ, ապահովում է անվտանգ միջավայր, փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանը բավարարում է չափանիշ 7-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՄԳՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 7-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

ՄԳՀ-ն իր ռազմավարական ծրագրով սահմանում է արտաքին հաշվետվողականությունը, որտեղ կարևորում է հանրային պատասխանատվությունը, հաղորդակցության և տեղեկատվության թափանցիկության ընդլայնումը: ՄՈՒՀ-ն իր արտաքին հաշվետվողականության կարևոր բաղադրիչ է համարում հավատարմագրող կազմակերպությունների կողմից կատարված արտաքին գնահատումը: Համալսարանը իր ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունը տրամադրում է օրենսդրության համաձայն:

ՄՈՒՀ-ի հաշվետվողականության ուսումնասիրումը ցույց է տալիս, որ հիմնականում գործում է ներքևից վերև հաշվետվողականություն, իսկ կառավարման մարմինները ունեն ՌԾ կատարումը համակարգող և վերահսկող գործառույթներ: Ինքնավերլուծության համաձայն ՄՈՒՀ-ը իր հաշվետվողականության ապահովումը դիտարկում է որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի իրագործման միջոցով: ՈԱ քաղաքականությամբ սահմանված է համալսարանի կառավարման համակարգի կատարելագործումը՝ հետևողականորեն կիրառելով հաշվետվողականության և թափանցիկության մեխանիզմները: Պրոռեկտորների պաշտոնի նկարագրերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նրանք անմիջականորեն ենթարկվում են ռեկտորին, սակայն չի նշվում թե ում են հաշվետու, չի նշվում կոլեգիալ մարմիններում հաշվետվողականության մասին (ռեկտորատ, գիտխորհուրդ, մեթոդական խորհուրդ), միևնույն ժամանակ կոլեգիալ մարմինների (ԿԽ, ռեկտորատ) կանոնակարգերում չի նշվում հաշվետվողականության մասին: Հաշվետվություններ լսելու և գնահատելու գործառույթների մասին ընդհանրացված նշվում է միայն գիտական խորհրդի կանոնակարգում, որտեղ հաշվետվություն է ներկայացնում նաև ռեկտորը:

Փորձագիտական այցը ցույց տվեց, որ վարչական օղակները կարևորում են ներքին շահակիցների առջև հաշվետվողականությունը, ինչպես նաև հետամուտ են բարձրաձայնված խնդիրների լուծման ուղղությամբ քայլերի ձեռնարկմանը:

ՄԳՀ ստորաբաժանումները իրականացնում են կիսամյակային և տարեկան հաշվետվություններ: Ստորաբաժանումները իրենց հաշվետվությունները ներկայացնում են պլանավորման համաձայն, ըստ կառուցվածքային գծապատկերի վերադաս պրոռեկտորին՝ օրինակ գրադարանը բժշկական մասնագիտությունների և գիտության գծով պրոռեկտորին: Հաշվետվությունների բովանդակության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք նկարագրում են պլանավորված գործողությունների կատարման ընթացքը: Հարկ է նշել, որ վերլուծական բաղադրիչի կիրառությունը հատվածային է, առանձին ստորաբաժանումներ իրականացնում են տվյալների վերլուծություններ, որոնք ընդգրկվում են հաշվետվություններում, սակայն այս դեպքում բացակայում վերլուծված տվյալների որակական վերլուծությունը և պատճառահետևանքային կապերի արտահայտումը:

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:

ՄԳՀ-ն իր գործունեության հրապարակայնությունը ապահովելու նպատակով ստեղծել է մի շարք հարթակներ՝ mkhitargosh.am/am/ru, www.ariu.org, Facebook, Twitter, Instagram, Youtube, Google, WhatsApp, Viber սոցիալական հարթակները: Տեղեկատվական հարթակներից կայքէջի, ֆեյսբուքյան

և ինստագրամյան սոցիալական հարթակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հրապարակումների հաճախությունը ցածր է, իսկ գործընթացների լուսաբանումը հատվածային։ Փորձագիտական այցի պահին կայքէջի վերջին թարմացումը եղել է 2022թ., իսկ ֆեյսբուքյան էջինը՝ 2021թ.։ Կայքեջում տեղադրված տեղեկատվությունը դեռևս լիարժեք չէ օրինակ՝ հայալեզու էջում առկա է և ռուսերեն և անգլերեն տեղեկատվություն, տեղեկատվությունը համալրված չէ ըստ բաժինների։ Հաշվի առնելով ՄՈՒՀ-ում միջազգային ուսանողների առկայությունը, կայքեջի օտար լեզվով (անգլերեն) տարբերակը դեռևս բավարար տեղեկատվություն չի ապահովում համալսարանի գործունեության վերաբերյալ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերջին տարիներին մեկնարկած կառուցվածքային փոփոխությունների և փաստաթղթային հենքի բարելավմամբ պայմանավորված բազմաթիվ ներքին իրավական ակտեր հնարավոր չի եղել սեղմ ժամկետներում թարգմանել և տեղադրել հրապարակային, ըստ էության կայքի աշխատանքները վերագործարկման փուլում են։

ՄՈՒՀ-ը դեռևս չի իրականացրել իր տեղեկատվական էջերի դիտելիության մոնիթորինգ, միևնույն ժամանակ պետք է նշել, որ սոցիալական մարքեթինգը ՄՈՒՀ-ը կիրառում է օտարերկրացի դիմորդների ներգրավման համար իր մասին գովազդային նյութեր հրապարակելով թիրախավորված կրթական տարածքներում, օրինակ՝ հնդկաստանում, սակայն համարժեք աշխատանքներ հայկական տիրույթում չեն իրականացվել։ Օրինակ՝ www.ariu.org կայքէջը անգլերեն լեզվով հարթակ է օտարերկրյա դիմորդների համար, որտեղ ներկայացված են հնդկաստանից դիմորդների համար ՄԳՀ-ը ընդունելության առավելությունները, նշված են հակիրճ տեղեկություններ բուհի վերաբերյալ, ֆոտոշարքեր, որոշակի տեղեկատվություն պարունակող տեսանյութեր, Յութուբյան էջում նմանօրինակ տեսանյութեր են հրապարակվել վերջին երեք տարիների ընթացքում (բոլորը անգլերեն լեզվով)։ Բոլոր հրապարակումները հիմնականում վերաբերվում են բժշկական մասնագիտություններին, մյուս կրթական ծրագրերի ուղղությամբ աշխատանքները պասիվ են։

Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ բազմաթիվ փաստաթղթեր ստեղծվում են հայերեն և ռուսերեն լեզուներով։ Միևնույն ժամանակ պետք է ընդգծել, որ «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» կրթական ծրագրերը իրականացվում են անգլերեն լեզվով սակայն այս կրթական ծրագրերին վերաբերվող փաստաթղթերը՝ ՄԿԾ մասնագիրը և առարկայական նկարագրերը հիմնականում կատարված են հայերեն և ռուսերեն լեզուներով, անգլերեն տարբերակ մշակված չէ։ Եռալեզու տարբերակով ներկայացվում են միայն ուսումնական պլանները, իսկ ուսանողի հետ կնքվող պայմանագրերը, ուսանողի ուղեցույցը, երկլեզու են՝ հայերեն անգլերեն։

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ։

ՄՈՒՀ-ը հասարակության հետ կապերի ձևավորումը փոխկապակցում է կրթական գործընթացների կազմակերպման հետ։ ՄՈՒՀ-ը որպես հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ հիմնականում դիտարկում է սոցիալական հարթակների, կայքեջի և բուհի պաշտոնական էլ. փոստով հաղորդակցումը, ինչպես նաև ՈԱ հարցումները, որոնք իրականացվում են ինչպես ներքին այնպես էլ արտաքին շահակիցների շրջանում։

«Շրջանավարտների կարիերայի և աշխատանքի տեղավորման» կենտրոնը համագործակցում է բուհի կառուցվածքային ստորաբաժանումների հետ և հետադարձ կապ է ապահովում շրջանավարտների և գործատուների հետ, ուսումնասիրում նրանց գոհունակությունը համալսարանի կրթական ծառայություններից և դրանց արդյունքներից։ Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի կողմից հարցումներում ներգրավված գործատուները հիմնականում

համագործակցում են որպես պրակտիկաների բազաների ղեկավարներ կամ հանդիսանում են բուհի աշխատակիցներ:

Չնայած առկա են հետադարձ կապի ապահովման որոշակի օղակներ և գործիքակազմ, սակայն բուհը դեռևս չունի հստակ վերլուծություններ, թե նշված մեխանիզմներից որն է առավել արդյունավետ:

ՄՈՒՀ-ի նորաստեղծ մարքեթինգի և հասարակության հետ կապերի բաժնի գործառույթներն են հասարակության հետ կապերի ձևավորման բուհի հեղինակության բարձրացմանն ուղղված միջոցառումների կազմակերպումը, տվյալների վերլուծությունը և այլն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բաժնի մասնագետը աշխատում է առցանց Հնդկաստանից, սկզբնական փուլում բաժնի աշխատանքները հիմնականում ուղղված են եղել արտերկրում ՄՈՒՀ-ի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը՝ դիմորդներ հավաքագրելու նպատակով:

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

ՄԳՀ-ի ինքնավերլուծության ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ «Մարքեթինգի և հասարակայնության հետ կապերի բաժինը», «Շրջանավարտների կարիերայի և աշխատանքի տեղավորման կենտրոնը» Որակի ապահովման կենտրոնը, ՈՒԳԸ-ն, Ուսանողական խորհուրդը, ֆակուլտետները և այլ բաժիններ իրականացնում են տարաբնույթ միջոցառումներ, որոնք ունեն հասարակական նշանակություն:

Ուսանողական խորհուրդի մասնակցությամբ իրականացվում են համալսարանի մշակութային կյանքը ակտիվացնող միջոցառումներ, ազգային տոնակատարություններ, այց դեսպանատներ և հյուպատոսություններ, այց Ծիծեռնակաբերդ, սոցիալական միջոցառումներ օտարերկրյա ուսանողների և դասախոսների մասնակցությամբ շաբաթօրյակի կազմակերպում Հաղթանակի զբոսայգում (ապրիլ 2023) և այլն:

Վանաձորի միացյալ ֆակուլտետի ուսանողները իրականացրել են «Առողջ ատամ» միջոցառումը դպրոցականների համար: Իրավագիտության մասնագիտության ուսանողները պրակտիկայի շրջանակներում իրականացրել են իրավաբանական խորհրդատվություններ:

Համալսարանը նաև այցեր է ունենում միջին մասնագիտական հաստատություններ, դպրոցներ և աշխատանքներ է տանում աշակերտների և դիմորդների հետ՝ մատուցելով խորհրդատվական ծառայություններ նրանց մասնագիտական կողմնորոշման բնագավառում:

ՄԳՀ-ն կազմակերպում է տարաբնույթ հանդիպումներ, սեմինարներ, քննարկումներ: Նախատեսում են քննարկումներ, հանդիպումներ իրականացնել որոշ կազմակերպությունների հետ (Օրինակ՝ ՄԱԿ ՓԳՀ, Ամերիկյան իրավաբանների հայաստանյան ներկայացուցչություն (ABA/ROLI):

Փորձագիտական այցը ցույց տվեց, որ ՄՈՒՀ-ը բարձր է գնահատում հասարակական պատասխանատվությունը և այս համատեքստում նաև իրեն դիտարկում է, որպես սոցիալական պատասխանատվություն կրող կազմակերպություն, որի շրջանակներում նախատեսում է ակտիվացնել հանրօգուտ սոցիալական նշանակության միջոցառումները:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈՒՀ-ը կարևորում է իր հաշվետվողականության մեխանիզմների լիարժեք ապահովումը, այդ թվում գիտակցում է հանրային պատասխանատվության դերակատարությունը: ՄՈՒՀ-ի փաստաթղթային հենքը ամբողջովին ցույց չի տալիս ներքին և արտաքին հաշվետվողականության կարգը, վերևից ներքև հաշվետվողականությունը: Փորձագիտական խումբը լիահույս է, որ հաշվետվողականության կարգի հստակեցումը և համապատասխան փաստաթղթային հենքի կանոնակարգումը թույլ կտա ՄՈՒՀ-ին

բարելավել գործընթացների արդյունավետությունը և կառավարումը, իսկ հաշվետվությունների կատարման չափանիշների սահմանումը թույլ կտա գնահատել ընթացիկ արդյունքները:

Փորձագիտական խումբը կարևորում է ՄՈՒՀ-ի գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը հասարակությանը, որը հնարավոր է միայն շարունակական աշխատանքների իրականացման արդյունքում, այս գործընթացներում կարևոր է հստակ քաղաքականության վարումը, համապատասխան ենթակառուցվածքների ու ռեսուրսների ապահովումը և պատասխանատուների առկայությունը: Հարկ է նշել, որ ՄԳՀ-ն որպես հայ-ռուսական միջազգային համալսարան առանձնանում է իր կարգավիճակով, օտարալեզու կրթական ծրագրերի իրականացմամբ և բազմազգ վարչական, ուսանողական և դասախոսական համակազմով, որը պարտավորեցնում է բուհին ապահովել նախ և առաջ ներքին շահակիցների համար գործընթացների վերաբերյալ տեղեկատվության թափանցիկությունը և հասանելիությունը: Այս համատեքստում հարկ է ընդգծել մի շարք փաստաթղթեր, կանոնակարգեր, ընթացակարգեր տարբեր լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն) ներկայացնելու (հրապարակելու) անհրաժեշտությունը, որ թույլ կտա ՄՈՒՀ-ին ժամանակին ապահովել բոլոր ՄԿԾ-ների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը հասարակությանը, վարել հստակ քաղաքականություն և արդյունավետ կիրառել իր կողմից ստեղծված հասարակության հետ կապի օղակները, ինչպիսիք են կայքեջը, ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերը և այլն:

Փորձագիտական խումբը դրական է համարում վերջին տարիներին հասարակության հետ կապերի ձևավորմանը ուղղված ջանքերը, որի համար ՄՈՒՀ-ը աստիճանաբար ստեղծել է գործիքակազմ և հետադարձ կապի միջոցներ: Հարկ է նշել, որ հասարակության հետ հետադարձ կապը կարող է արդյունավետ և օգտակար լինել, միայն եթե ապահովված է գործընթացների մասին տեղեկատվության թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը: Տեղեկատվական հարթակների լիարժեք գործարկումը և շարունակական համալրումը ՄՈՒՀ-ին թույլ կտա բարձրացնել ՄՈՒՀ-ի տեսանելիությունը համացանցում, հասանելի լինել շահագրգիռ կողմերին, հետադարձ կապ ստանալ, ուսումնասիրել ձևավորված հասարակական կարծիքը: Հետադարձ կապի միջոցների բազմազանեցումը, անկողմնակալ սուբյեկտների ներգրավումը կարևոր է օբյեկտիվ տեղեկատվության հավաքագրման տեսանկյունից, որը ՄՈՒՀ-ը հետագայում կարող է կիրառել իր կայուն զարգացման համար:

ՄՈՒՀ-ի հասարակության հետ կապերի, հետադարձ կապի միջոցների և մեխանիզմների ուսումնասիրության արդյունքում կարելի ընդգծել, որ վերջին տարիներին բազմաթիվ քայլեր են իրականացվել այդ կապերը ամրապնդելու, ՄՈՒՀ-ի վարկանիշը բարձրացնելու ուղղությամբ, որ անշուշտ իր դրական ազդեցությունն է ունեցել: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը կարևորում է հասարակությանը գիտելիքների փոխանցման մեխանիզմների կայացումը և համակարգված/պլանավորված շարունակական միջոցառումների իրականացումը, որը տեսանելի կդարձնի ՄՈՒՀ-ի նպատակները և կձևավորի հստակ սոցիալական / կորպորատիվ / վարքագիծ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ի հաշվետվողականության համակարգը լիարժեք չի արտահայտում իրական գործառնական կապերը՝ ներքևից վերև, վերևից ներքև հաշվետվողականությունը, հաշվետվություններում վերլուծական բաղադրիչը թույլ է և գնահատման հիմք չեն հանդիսանում, լիարժեք ապահովված չէ տեղեկատվության հասանելիությունը հասարակությանը, հասարակության հետ հետադարձ կապի և գիտելիքների փոխանցման մեխանիզմները ձևավորման փուլում են, փորձագիտական խումբը գտնում է, համալսարանը **չի բավարարում** չափանիշ 8-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՄԳՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

Մխիթար Գոշ համալսարանը վերջին մեկ տարվա ընթացքում ենթարկվել է մի շարք լուրջ փոփոխությունների՝ բուհի կառուցվածքից մինչև ներքին կանոնակարգերի մշակումն ու հաստատումը: Այսպիսով, ՄՈՒՀ-ի ղեկավար կազմում ավելացվել է՝ միջազգային կապերի գծով պրոռեկտորի պաշտոնը, որոշվել են նրա գործառութային պարտականությունները: Համալսարանի առաքելությունն արտացոլում է աշխատանքի կենտրոնացումը ոչ միայն ներքին աշխատաշուկայի, այլ նաև արտասահմանյան երկրների վրա: 2021-2025 թթ. ռազմավարական զարգացման ծրագրում որպես առանձին կետ նշվում է բուհի միջազգային հարաբերությունների ընդլայնումն ու խորացումը, սահմանվում են նաև առաջընթացի գնահատման ցուցիչներ, օրինակ՝ «Արտասահմանից հրավիրված դասախոսների թվի աճ» ցուցիչը, որը սակայն ցույց չի տալիս, թե որքան կլինի աճը և ինչպիսին կլինի արդյունավետ իրականացումը: Միջազգային կապերի գծով պրոռեկտորի պաշտոնը փորձագիտական այցի պահին թափուր էր, նրա գործառույթները բաշխված են ռեկտորի և պրոռեկտորների միջև:

Համեմատաբար մեծ թվով օտարերկրյա ուսանողներ են սովորում ՄՈՒՀ-ում (ընդհանուր համակազմի կեսից ավելին), հիմնականում Հնդկաստանից: Համալսարանի լիցենզավորման պայմանները թույլ են տալիս ուսանողների թվաքանակը հասցնել մինչև 200 հոգու մեկ կուրսի համար: Փորձագիտական այցի ընթացքում ՄՈՒՀ-ի ղեկավարությունը ներկայացրեց իր առաջիկա տարիներին ուսանողների առավելագույն հնարավոր թվին հասնելու ծրագրերի մասին, այդ թվում՝ նպատակ ունենալով ընդլայնել երկրների աշխարհագրությունը (Եգիպտոս, Իրան):

ՄՈՒՀ-ը հաստատել է ուսանողների ակադեմիական շարժունության կանոնակարգը, փորձագիտական այցի ընթացքում Պերմի պետական բժշկական համալսարանի 4-րդ կուրսի երկու ուսանողներ ակադեմիական շարժունության ծրագրի շրջանակում սկսել են իրենց ամառային պրակտիկան:

Պրոֆեսորադասախոսական կազմի ակադեմիական փոխանակումը կարգավորող փաստաթուղթը դեռ հաստատված չէ, մինչդեռ Համալսարանն ունեցել է արտասահմանյան դասախոսներ ներգրավելու փորձ՝ դասախոսությունների ցիկլ կարդալու համար, իսկ դասախոսների արտագնա ակադեմիական շարժունությունը ներկայումս պլանավորման փուլում է:

Համալսարանը շեշտում է ուսանողների փոխանակման ERASMUS դրամաշնորհային ծրագրին միանալու իր մտադրությունը:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

ՄՈՒՀ-ում, ըստ կառուցվածքի, նախատեսվում է ստեղծել միջազգային բաժին, որը կգործի միջազգային գործունեության գծով պրոռեկտորի ենթակայություն տակ: Մինչ օրս օտարերկրյա ուսանողներին աջակցելու գործառույթները հիմնականում իրականացնում է Բժշկական ֆակուլտետի դեկանատը: Համալսարանում գործում է անձնագրային և վիզաների գրանցման բաժին, որը՝ ըստ ուսանողների, ակտիվ օգնում է նրանց համապատասխան փաստաթղթերը պատրաստելու հարցում:

Արտասահմանյան երկրներից ուսանողների թիվը մեծացնելու համար համալսարանը պայմանագրային հիմունքներով օգտվում է Հնդկաստանում գործող ուսունողներ հավաքագրող ընկերությունների ծառայություններից, ինչպես նաև համալսարանի ղեկավարությունը ինքնուրույն մասնակցում է արտերկրում անցկացվող տարբեր ցուցահանդեսների և կրթական տոնավաճառների:

Համալսարանի պաշտոնական կայքը կազմավորման և լրացման փուլում է, այդ թվում՝ ռուսերեն և անգլերեն տարբերակները:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

Համալսարանն ակտիվ համագործակցում է ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան գործընկերների հետ: Գործնական ուսուցման և արտադրական պրակտիկաների կազմակերպման նպատակով համալսարանը պայմանագրեր է կնքել հայաստանյան մի շարք բժշկական և իրավաբանական կազմակերպությունների հետ: Համագործակցության պայմանագրեր են կնքվել նաև Ռուսաստանի Դաշնության մի շարք բժշկական բուհերի՝ Պերմի և Օրենբուրգի պետական բժշկական համալսարանների հետ, համանման պայմանագիր է պատրաստվում Մարիի պետական համալսարանի բժշկական ինստիտուտի հետ: Համագործակցության հուշագրեր են ստորագրվել նաև Պրահայի՝ Չեխիա, «Միջազգային կրթության ինստիտուտի» և Բրյուսելի՝ Բելգիա, «Բելգիայի կրթական խորհրդի» հետ:

«Բուժական գործ» ՄԿԾ-ի ուսանողների ամառային պրակտիկայի անցկացման համար համագործակցության պայմանագրեր են կնքվել «Վեդ» բազմապրոֆիլ հիվանդանոցի, Ահմեդաբադի, Գուջրաթի և Սրինգար Ջամուի և Քաշմիրի ժամանակակից հիվանդանոցների հետ, պայմանագրերը արդեն գործում են:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների օտարերկրյա ուսանողների ուսուցումն իրականացվում է անգլերեն լեզվով, ՄՈՒՀ-ին հարկավոր է դասավանդման համար անհրաժեշտ մակարդակի անգլերենին տիրապետող անձնակազմ: Դասախոսների և բուհի ղեկավարության հետ հանդիպումների ընթացքում պարզվել է, որ որոշ աշխատակիցներ հաստատել են իրենց օտար լեզվի իմացությունը թեկնածուական ատենախոսության պաշտպանությանը նախապատրաստվելիս (թեկնածուական մինիմում՝ համապատասխան վկայականի տրամադրմամբ), որոշ աշխատակիցներ ինքնուրույն անցել են տարբեր դասընթացներ, այդ թվում՝ առցանց՝ իմացության աստիճանի ոչ պաշտոնական գնահատմամբ, մի շարք աշխատակիցներ անցել են վերապատրաստման դասընթացներ կամ սովորել արտերկրում: Անգլերենի միջազգային գնահատման համակարգերի վկայականներ չեն ներկայացվել: Համալսարանն ուշադրություն է դարձնում անգլերեն լեզվի իմացության մակարդակին և համապատասխան որակավորմամբ կադրերի ռեզերվի համալրմանը: Նախատեսվում է անցկացնել

«Բժշկական անգլերեն» խորացված վերապատրաստման դասընթաց համալսարանի հիմքի վրա բուհի 6 դասախոսների համար:

Դատողություններ:

Փորձագետների խումբը դրական կողմ է նշում, որ երկարաժամկետ պլանավորման փաստաթղթերում արտաքին կապերն ու միջազգայնացումը նշվում են որպես բուհի զարգացման կարևորագույն ուղղություններ: Այն փաստը, որ համալսարանի կառուցվածքում ավելացվել է միջազգային գործունեության գծով պրոռեկտորի հաստիքը և միջազգային աշխատանքների բաժինը, հաստատում է, ղեկավարության կողմից կարևորվում է, ոլորտի զարգացումը:

Արտաքին հարաբերությունների զարգացման անհրաժեշտության վրա ազդող ամենակարևոր գործոնը օտարերկրյա քաղաքացիների համար անգլերենով իրականացվող կրթական ծրագրերի առկայությունն է: ՄՈՒՀ-ը մտադիր է ավելացնել օտարերկրյա ուսանողների թվաքանակը, այդ թվում՝ մասնակից երկրների աշխարհագրության ընդլայնման միջոցով:

Դրական է նաև, որ համալսարանը կարևորում է դասախոսների անգլերենի իմացության մակարդակի բարձրացումը, ինչի մասին է վկայում բժշկական անգլերենով դասախոսների խորացված վերապատրաստման հաստատված պլանը: Մյուս մասնագիտությունների գծով ակադեմիական շարժունությունը ապահովման համար փորձագիտական խումբը անհրաժեշտ է համարում նաև այդ մասնագիտությունների ուսանողների և դասախոսների օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացումը:

Արտաքին կապերի և միջազգայնացման ոլորտի զարգացման մասին վկայում է նաև պետությունների (Ռուսաստան, Երոպական երկրներ) ու օտարերկրյա կառույցների հետ համագործակցության պայմանագրերի և գործընկերության հուշագրերի կնքման գործընթացի ակտիվացումը: Այս պայմանավորվածությունների արդյունքը դարձավ ուսանողների ակադեմիական շարժունության սկիզբը: Փորձագիտական խումբը անհրաժեշտ է համարում նաև դասախոսների արտագնա ակադեմիական շարժունության իրականացումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ը Ռազմավարական զարգացման ծրագրում սահմանված են արտաքին կապերի և միջազգայնացման ոլորտի հավակնությունները և նպատակները, ստեղծվել է համապատասխան ենթակառուցվածք և միջազգային գործունեության գծով պրոռեկտորի հաստիքը, կնքել է պայմանագրեր և համագործակցության հուշագրեր ներքին և արտաքին կազմակերպությունների հետ, մեկնարկել են ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունության գործընթացներ, փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանը բավարարում է չափանիշի 9-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՄԳՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին գնահատվում է բավարար:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՄԳՀ-ի ռազմավարական ծրագրում «Որակը» համալսարանի հիմնարար արժեքներից մեկն է, որը համալսարանը ընկալում է որպես շահագրգիռ կողմերին մատուցված ծառայությունների որակի գնահատում:

Բուհը մշակել է «Որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր» փաստաթուղթը (2022թ.), որում սահմանված են որակի ապահովման նպատակները կառավարման, կրթության, հետազոտության և մյուս ռազմավարական ուղղությունների համար:

Բուհը մշակել է նաև որակի ապահովման ներքին համակարգի ձեռնարկ (2023թ.), որը, ըստ ինքնավերլուծության, բոլոր շահակիցների համար պարունակում է անհրաժեշտ տեղեկատվություն և պետք է նպաստի նրանց իրազեկվածության բարձրացմանը որակի ապահովման հարցերի մասին, ինչպես նաև բուհում որակի մշակույթի ձևավորմանը: Ըստ էության ձեռնարկը բուհի արդեն իսկ ունեցած կանոնակարգող փաստաթղթերի ամբողջություն է:

Բուհն ունի որակի ապահովման կենտրոն, որը կառուցվածքային փոփոխությունների արդյունքում այժմ գտնվում է Ռազմավարական զարգացման պրոռեկտորի ենթակայության ներքո:

Այսպիսով, Համալսարանում գործող որակի քաղաքականությունն ուղղված է ՄԳՀ-ի գործունեության հիմնական ոլորտներում որակի ապահովմանը և վերահսկմանը:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՄԳՀ ինքնավերլուծության համաձայն Որակի ապահովման կենտրոնը բաղկացած է ղեկավարից և երկու մասնագետից, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ղեկավարից բացի միայն մեկ մասնագետ է աշխատում՝ շահագրգիռ կողմերի կարիքներն ուսումնասիրող և դրանց արդյունքները վերլուծող մասնագետը, իսկ կրթական գործընթացի կառավարման և որակի բարձրացման մասնագետի հաստիքը թափուր էր, որը նախատեսվում է լրացնել մոտ ապագայում: Այդ կազմով կենտրոնը գործում է 2022թ. ապրիլ ամսից: Բուհում մշակված է բաժնի ղեկավարի և մասնագետի պաշտոնի անձնագրերը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈԱԿ-ն ապահովված է ամենօրյա աշխատանքի համար անհրաժեշտ նյութական բոլոր ռեսուրսներով: Որակի ապահովման զարգացման համար բացի մասնագետների աշխատավարձից, բյուջեում առանձին հոդվածով ֆինանսներ հատկացված չեն:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում

Համաձայն ինքնավերլուծության՝ կենտրոնը կարևորում է շահակիցների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում: Ներքին շահակիցները ընդգրկված են կրթության որակի գնահատման գործընթացներում՝ մասնակցելով ուսանողական ու դասախոսական պարբերական հարցումներին, իսկ արտաքին շահակիցները՝ շրջանավարտներից բավարարվածության հարցումներին:

ՈԱԿ-ը բացի հարցումներից տեղեկատվություն է ստանում նաև սոցիալական ցանցերի և տարբեր նմանատիպ հարթակների, ՄԳՀ-ի ղեկավարության հետ ամենօրյա ուղիղ կապի միջոցով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսներն ու ուսանողները ՈԱ գործընթացներում ընդգրկվում են կամավորության սկզբունքով, այս հարցը դեռևս կանոնակարգված չէ: ՈԱԿ-ը նախատեսում է ստեղծել որակի կառույցներ, պատասխանատուներ ստորաբաժանումներում: Այդ կապակցությամբ նախատեսվում է ստեղծել մեթոդական ձեռնարկ՝ որակի պատասխանատուների գործառույթների վերաբերյալ:

Բացի այն, որ արտաքին և ներքին շահակիցները ներգրավվում են որակի ապահովման գործընթացներում հարցումների միջոցով, ըստ կանոնադրությունների ունեն ներկայացվածություն ՄԳՀ-ի կառավարման մարմիններում, հաշվի է առնվում նրանց կարծիքը՝ ՄԳՀ-ի կանոնադրությունը,

Ռազմավարական ծրագիրը, կրթական ծրագրերը և այլ փաստաթղթեր մշակելիս, իրականացնելիս, գնահատելիս և վերանայելիս:

Սակայն բուհը դեռ չունի ձևավորված գործատուների և շրջանավարտների բազաներ, որոնք մոտ ապագայում նախատեսվում է ստեղծել:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

ՄԳՀ-ն ունի հաստատված փաստաթղթեր, որոնք կարգավորում են որակի կառավարման համակարգի ձևավորումը: Կարգավորող ներքին նորմատիվային գրեթե բոլոր փաստաթղթերը վերանայվել են ոչ այնքան վաղուց՝ 2022 թվականից սկսած: Այդ փաստաթղթերով նախատեսվում է նաև որակի ներքին ապահովման համակարգի պարբերական վերանայում և գնահատում: Բացի այդ, համալսարանը պարբերաբար իրականացրել է որակի արտաքին գնահատում հավատարմագրման գործակալությունների և ներքին աուդիտի միջոցով: ՄԳՀ-ն ձգտում է որակի ապահովումն իրագործել «պլանավորում–իրականացում–գնահատում-բարելավում» շրջափուլով, այնուամենայնիվ նախորդ հավատարմագրման ժամանակ վերհանված խնդիրների լուծման համար նախատեսված գործողությունների մեծ մասը դեռ պլանավորման ու իրականացման փուլում էին:

ՈԱԿ-ը դեռևս չունի գնահատման հստակ մեխանիզմներ՝ հասկանալու, թե հասե՞լ են, արդյոք, իրենց նպատակին, թե՝ ոչ: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ՈԱԿ-ի հաշվետվողականությունը նոր է ձևավորվում:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Բուհը մշակել է «ՄԳՀ ուսումնական գործընթացի որակի մշտադիտարկման փորձագիտական հանձնաժողովի գործունեության կանոնակարգ», որը նախատեսում է ստեղծել ուսումնական գործընթացների աուդիտի փորձագիտական հանձնաժողով: Կանոնակարգը նախատեսում է փորձագիտական խմբի ձևավորում՝ կոնկրետ խնդրի կամ մի շարք խնդիրների լուծման համար:

ՄՈՒՀ-ը տվյալների հավաքագրման գլխավոր մեխանիզմ է դիտարկում ՈԱ հարցումները: ՈԱ հարցարանների դիտարկումը ցույց տվեց, որ դրանք ոչ միշտ են բացահայտում շահակիցների կարիքները, հիմնականում ներառված են այո և ոչ պատասխաններ, մյուս կողմից հարցումների տվյալները ենթարկվում են միայն քանակական վերլուծությունների: Ինքնավերլուծության զեկույցում ներառված հարցումների արդյունքների ուսումնասիրությունը նույնպես հաստատում է, որ վերլուծությունները խորությամբ չեն իրականացվել, օրինակ՝ ներկայացված է, որ ուսանողների 93%-ը լիովին կամ գրեթե ամբողջությամբ գոհ են ՊԴ կազմի հետ փոխգործակցությունից, սակայն այլ կարծիքները ներկայացված չեն:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ հարցումների արդյունքների վերլուծություն, խնդիրների քննարկում և բարելավման գործողությունների պլանավորում չի եղել, բացակայում էին նաև տարբեր ստորաբաժանումների վերլուծությունները և հաշվետվությունները, նոր ձևավորման կամ վերակազմավորման պատճառով:

Հարկ է նաև նշել, որ ինքնավերլուծության զեկույցը ոչ միշտ էր պարունակում վերլուծական տեղեկատվություն, չափորոշիչների լիարժեք վերլուծություններ, առկա էին բազմաթիվ կրկնություններ, չափանիշների SWOT վերլուծությունները հաճախ հստակ պատկեր չէին ապահովում չափանիշի վերաբերյալ, ինքնավերլուծության խումբը ճիշտ չի կիրառվել SWOT վերլուծության մեթոդը:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Ինքնավերլուծության համաձայն՝ տարբեր մակարդակների ղեկավարները պարբերաբար հաշվետվություն են ներկայացնում կառավարման կոլեգիալ մարմիններին, որոնք ներառում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցներ:

Ըստ ինքնավերլուծության՝ մշտադիտարկման, սոցիոլոգիական հարցումների արդյունքները հետադարձ փոխանցվում են ուսանողներին, դասախոսներին և ՄԳՀ-ի ղեկավար կազմին՝ տեղադրելով ՄԳՀ-ի կայքում, կազմակերպելով հանդիպումներ և քննարկումներ շահագրգիռ կողմերի հետ: Սակայն փորձագիտական խմբի այցից պարզ դարձավ, որ հարցումների վերաբերյալ վերլուծությունները մասամբ են տրամադրվում շահակիցներին, իսկ պաշտոնական կայքէջը վերագործարկման փուլում է և հաճախ չի թարմացվում:

Բուհը կարևոր է համարում նաև ամփոփիչ ատեստավորման արդյունքները և ատեստավորման հանձնաժողովի նախագահների հաշվետվությունները: Մի քանի հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք ավելի շատ ունեն նկարագրական, քանակական վերլուծական բնույթ, իսկ բարելավման վերաբերյալ առաջարկությունները գրեթե բացակայում են, ավելին՝ կրկնվում են նույնությամբ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄԳՀ-ի ջանքերը՝ ուղղված որակի ապահովման համակարգի զարգացմանը: ՄԳՀ ղեկավարությունը կարևորում է տվյալների հավաքագրման մեխանիզմների բազմազանեցումը և տվյալների վրա հիմնված որոշումների կայացումը:

Դրական է, որ համալսարանը որակի ներքին ապահովման գործընթացների համար տրամադրում է մարդկային և նյութական ռեսուրսներ, Փաստաթղթային տեսակետից կան որոշակի ընթացակարգեր, որոնք կարող են նպաստել որակի քաղաքականության իրականացմանը: Սակայն որակի ներքին ապահովման համակարգը բարելավման կարիք ունի:

Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ նախորդ հավատարմագրման գործընթացի ժամանակ տրված որոշ խորհրդատվություններ լիարժեք չեն իրականացվել և 2022 թ. ներքին աուդիտի արդյունքում կրկին վեր են հանվել: Ինչը ցույց է տալիս, որ որակի ապահովման քաղաքականությունը լիարժեք ներդրված չէ, քանի որ խորհրդատվությունները չեն ծառայել համալսարանի զարգացմանը: Փոխվել են կառավարիչները, ինչը բերել է դրական փոփոխությունների:

Որակի մշակույթի տարածման նպատակով փորձագիտական խումբը կարևոր է համարում արտաքին և հատկապես ներքին շահակիցների մոտիվացված, ակտիվ և լայնածավալ ներգրավումը՝ նպաստելով շահակիցների շրջանում առկա խնդիրների դուրսբերմանը: Այնուամենայնիվ, ՈԱ հարցումները թիրախային չեն, իսկ ընդգրկված հարցադրումները չեն վեր հանում անհարժեշտ տեղեկատվությունը:

Փորձագիտական խումբը տեղեկատվության հավաքագրման համար անհրաժեշտ է համարում մեխանիզմների բազմազանեցումը և հարցումների հավաստիության մեծացումը, արդյունքների ոչ միայն քանակական, այլ նաև որակական վերլուծությունների իրականացումը, որոնք հիմք կհանդիսանան որոշումների կայացման համար, նպաստելով բուհի տարբեր ոլորտների շարունակական զարգացմանը:

ՄՈՒՀ-ում որակի մշակույթը շարունակում է լինել ձևավորման փուլում: Փորձագիտական խմբի կարծիքով բոլոր ստորաբաժանումներում՝ այդ թվում Վանաձորում, որակի պատասխանատուների լինելը, ուսանողների և դասախոսների ակտիվ մասնակցությունը որակի գործընթացներում կնպաստի ՄՈՒՀ-ում որակի մշակույթի տարածմանը և զարգացմանը:

Բուհի կառավարման որակի գնահատման տեսանկյունից, փորձագիտական խումբը նպատակահարմար է գտնում, որ ՈԱԿ-ը գործի կառավարման խորհրդի ենթակայությամբ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄԳՀ-ի որակի ապահովման ներքին համակարգը և որակի մշակույթը ձևավորման փուլում են, որակի ներքին ապահովման գործընթացները հիմնականում գտնվում են պլանավորման և իրականացման փուլում, դեռևս չունեն տվյալների հավաքագրման և գնահատման հստակ մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄԳՀ-ն **չի բավարարում** չափանիշ 10-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՄԳՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Բավարարում է
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Չի բավարարում
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Ասյա Սիմոնյան

Փորձագիտական խմբի ղեկավարի
22 սեպտեմբերի 2023թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Ասյա Սիմոնյան՝ 2013թ-ին ավարտել է Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի «ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտության մագիստրոսական ծրագիրը: 2017թ.-ին ավարտել է ՇՊՀ «Դասավանդման և դաստիարակության մեթոդիա (ֆիզիկական կուլտուրա)» մասնագիտության ասպիրանտուրան: Մանկավարժական գիտությունների թեկնածու է: 2005-2007թթ. աշխատել է «Գյումրու մարմնամարզիկ» ՓԲԸ-ում՝ որպես գեղարվեստական մարմնամարզության մարզիչ, 2007-ից աշխատում է Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոցում, որպես մարզիչ-մանկավարժ, 2013-ից մինչ օրս աշխատում է Շիրակի պետական համալսարանում՝ ներկայումս Սպորտի և արվեստի ամբիոնի ասիստենտ է: 2017 թվականից հանդիսանում է գեղարվեստական մարմնամարզության անհատական և խմբակային ձևերի միջազգային կարգի մրցավար: 2021թ-ից անդամակցում է ՀՀ մարմնամարզության ֆեդերացիայի գեղարվեստական մարմնամարզության մրցավարական խորհրդին: Հրատարակել է 13 գիտական հոդվածներ հանրապետական և միջազգային նշանակության պարբերականներում: 2004թ. -ին ստացել է ՀՀ գեղարվեստական մարմնամարզության սպորտի վարպետի կոչում: Գեղարվեստական մարմնամարզության հանրապետական և միջազգային առաջնությունների բազմակի հաղթող և մրցանակակիր է: 2008թ. Աշխարհի գավաթի, 2010թ. Աշխարհի առաջնության և 2012թ. Աշխարհի ակումբային առաջնության մասնակից է: 2013թ. -ին Մագիստրոսի կրթական ծրագրով ճանաչվել է հանրապետական «Լավագույն ուսանող» մրցույթի մրցանակակիր (սպորտի ոլորտում): 2015թ. ստացել է «Պատվոգիր» ՀԱՕԿ-ի կողմից՝ ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառում ունեցած մեծ ավանդի, գեղարվեստական մարմնամարզությունը և օլիմպիական գաղափարախոսությունը մասսայականացնելու համար:

Ալեքսեյ Կրյուկով՝ Կուրսկի պետական բժշկական համալսարանի ուսումնական գծով փոխտնօրեն, դոցենտ, բժշկական գիտությունների թեկնածու: 1996-2002թթ. ավարտել է Կուրսկի պետական բժշկական համալսարանը՝ ընդհանուր բժշկություն մասնագիտությամբ: 2002-2005թթ. ավարտել է Կուրսկի պետական բժշկական համալսարանը՝ ախտաֆիզիոլոգիայի ամբիոնի ասպիրանտուրան: 2006թ. -ին ստացել է բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2009 թ. -ից եղել է Կուրսկի պետական բժշկական համալսարանի որակի կառավարման համակարգում՝ որպես ախտաֆիզիոլոգիայի ամբիոնի որակի պատասխանատու: 2014 թ.-ից եղել է «Ռուսաստանի բժշկական լիգա» համառուսական հասարակական կազմակերպության փորձագետ: 2020-2022թթ. ներքին աուդիտ իրականացնելիս եղել է բաժնի կազմակերպչական, ուսումնական, մեթոդական, գիտական և կրթական գործունեության խմբի ղեկավար: 2015-2021թթ. մասնակցություն է ունեցել հավատարմագրման գործընթացների (ընդհանուր 10 գործընթաց) ՝ որպես փորձագետ (օրդինատուրաի, ասպիրանտուրայի մակարդակներում): 2019թ.-ից եղել է Կուրսկի պետական բժշկական համալսարանի ինքնավերլուծության հանձնաժողովի անդամ: 2020-2021թթ. եղել է Կուրսկի պետական բժշկական համալսարանի ինքնավերլուծության հանձնաժողովի խմբի ղեկավար՝ միջազգային հավատարմագրման նպատակով (ծրագրի հավատարմագրում «Ընդհանուր բժշկություն»):

Գուրգեն Հովհաննիսյան՝ 1983թ.-ին ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը՝ ստանալով աշխարհագրության ուսուցչի որակավորում: 1991թ.-ին ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրան: 2006 թ.-ին ստացել է Աշխարհագրության գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ «Դպրոցական աշխարհագրության բովանդակության հիմնախնդիրը ՀՀ-ում», 2007 թ.-ին՝ դոցենտի գիտական կոչում: Հետազոտություններն ընդգրկում են կրթության, կրթության կառավարման ոլորտները: 2006-2021 թթ-ին զբաղեցրել է ԵՊՀ Ուսումնամեթոդական վարչության բակալավրիատի բաժնի վարիչի պաշտոնը: 2008-2010թթ.-ին եղել է ԲՈԿ Աշխարհագրության 005 մասնագիտական խորհրդի գիտքարտուղար: 1994-ից դասավանդում է ԵՊՀ Աշխարհագրության ֆակուլտետում: 2014թ.-ից ԵՊՀ ԻՄ տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատարն է: 2022թ. մայիսից մինչ օրս ԵՊՀ Գիտական քաղաքականության վարչության առաջատար մասնագետ է:

Վահե Թորոսյան՝ 2005-2008թթ. սովորել է Անանիա Շիրակացու անվան ճեմարանում: 2012թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի Միջազգային հարաբերություններ ֆակուլտետի Հանրային կառավարում բաժինը: 2018թ.-ից իրավաբանական գիտությունների թեկնածու է, 2022թ.-ից՝ դոցենտ:

2013-2014թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես սնանկության գործերով դատավորի օգնական: 2015թ. մինչ օրս Եվրոպական համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս է: 2019թ.-ից աշխատում է Եվրոպական համալսարանում որպես իրավաբանական դեպարտամենտի ղեկավար, 2021թ.-ից Եվրոպական համալսարանի գիտական խորհրդի քարտուղարն է:

2020թ.-ից համակարգում է լրացուցիչ կրթության հարթակ «Ժողովրդավարության հայկական դպրոցը»: 2023թ.-ից դասավանդում է Հայ-Ռուսական համալսարանում:

Հեղինակ է մի շարք իրավագիտական, հայագիտական, քաղաքագիտական հրապարակումների: Մասնացել է բազմաթիվ գիտաժողովների և կոնֆերանսների՝ հանդես եկել զեկույցներով:

Էդգար Մանուչարյան՝ 2016-2020թթ.-ին սովորել է ՀԱՊՀ քոլեջի <<Կապի ցանցեր և հաղորդակցման համակարգեր>> ֆակուլտետում գերազանց առաջադիմությամբ: 2020 թվականից սովորում է Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ֆակուլտետում: Մասնակցել է մի շարք ոչ ֆորմալ ծրագրերի, դասընթացների, ակադեմիաների:

Հայաստանի Հանրապետության <<Լավագույն ուսանող 2022>> հանրապետական մրցույթի երկրորդ անվանակարգ:

Մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին:

Հեղինակ է՝ միջազգային իրավունքի վերաբերյալ մեկ գիտական հոդվածի:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Յ Ց Ի Ց

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խմբի այցի

	04.07.2023 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Համալսարանի ռեսուրսների և ենթակառուցվածքների դիտարկում, այցելություն կլինիկաներ և քննությունների դիտարկում	11:00	14:00	180 րոպե

	05.07.2023 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում համալսարանի ռեկտորի հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում պրոռեկտորների հետ	10:40	11:40	60 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծության խմբի անդամների հետ	11:50	12:35	45 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:50	13:50	60 րոպե
5	Հանդիպում կառավարման խորհրդի հետ	14:00	14:50	50 րոպե
6	Հանդիպում արտասահմանյան շրջանավարտների հետ	15:00	15:40	40 րոպե
7	Հանդիպում տեղացի շրջանավարտների հետ	15:50	16:30	40 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	18:00	19:00	60 րոպե

	06.07.2023 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում դեկանների հետ	09:30	10:20	50 րոպե
2	Հանդիպում ամբիոնների վարիչների և կրթական ծրագրերի պատասխանատուների հետ	10:30	11:30	60 րոպե
3	Հանդիպում պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների (8-10 հոգի) հետ	11:50	12:50	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5	Հանդիպում ուսանողների (8-10 հոգի) հետ	14:10	15:10	60 րոպե
6	Հանդիպում ստորաբաժանումների (Ուսումնամեթոդական մաս, Շրջանավարտների	15:20	16:20	60 րոպե

	կարիերայի և աշխատանքի տեղավորման, հետազոտական կենտրոններ, պրակտիկայի բաժին) ղեկավարների հետ			
7	Հանդիպում ստորաբաժանումների (Փաստաթղթաշրջանառության, կադրերի, տնտեսական, մարքեթինգի և հանրային կապերի բաժիններ, հաշվապահություն, գրադարան, կրթական տեղեկատվական տեխնոլոգիաների, սիմուլյացիոն տեխնոլոգիաների կենտրոններ, «Մխիթար Գոշ» ամսագրի հրատարակչական կենտրոն) ղեկավարների հետ	16:30	17:20	50 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:30	19:00	90 րոպե

	07.07.2023թ.		*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	Հանդիպում «Իրավագիտություն» կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» կրթական ծրագրի դասախոսների հետ	Հանդիպում «Իրավագիտություն» կրթական ծրագրի դասախոսների հետ	10:45	11:45	60 րոպե
3	Հանդիպում «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» կրթական ծրագրի ուսանողների հետ	Հանդիպում «Իրավագիտություն» կրթական ծրագրի ուսանողների հետ	12:00	13:00	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ		13:10	14:10	60 րոպե
5	Հանդիպում ՈւԽ և ՈւԳԸ ներկայացուցիչների հետ		14:20	15:00	40 րոպե
6	Հանդիպում տեղացի և միջազգային գործատուների հետ		15:10	16:10	60 րոպե

7	Բաց հանդիպում	16:20	17:00	40 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:10	19:10	120 րոպե

	08.07.2023 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում Որակի ապահովման կենտրոնի աշխատակիցների հետ	09:30	10:30	60 րոպե
2	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի քննարկում	11:00	13:00	120 րոպե
3	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
4	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	14:10	16:10	120 րոպե
5	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:20	17:20	60 րոպե
6	Հանդիպում համալսարանի ղեկավար կազմի հետ	17:30	18:00	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	«Մխիթար Գոշ» համալսարանի զարգացման 2023թ. տարեկան պլանի հայերեն տարբերակը	1
2.	ՄԳՀ գիտահետազոտական գործունեության ռազմավարական պլաններ /2022-25թթ/ երկարաժամկետ, կարճաժամկետ	1, 6
3.	Բժշկական ֆակուլտետի զարգացման 2022-2025թթ. ռազմավարական ծրագիր	1, 3
4.	ՍՊԸ կանոնադրությունը	1, 2
5.	Համալսարանի կանոնադրություն	1, 2
6.	Ռեկտորատի և գիտական խորհուրդի աշխատանքային պլաններ, արձանագրություններ	2
7.	Ռեկտորի, պրոռեկտորների, դեկանների, որակի ապահովման կենտրոնի հաշվետվություններ, արձանագություններ	2
8.	Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքային պլաններ և հաշվետվություններ	2
9.	ՄԳՀ-ի ֆինանսական ծրագիր 2023/2024 թթ և ֆինանսական գործունեության պլան, 2021/2023թթ. ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվություն	2, 7
10.	СК-00/23 Положение об управлении информацией и документооборотом в университете «Мхитар Гош»	2, 8
11.	СК-02/08 Положение о планировании, реализации, мониторинга, оценке и улучшении деятельности подразделений УМГ	2
12.	Մարքեթինգային հետազոտության վերլուծության օրինակ	2
13.	Ակադեմիական խորհրդատվությունների ժամանակացույց	2, 4
14.	ԻՎ իրականացրած խմբի հրաման	2
15.	Ակադեմիական խորհրդատվությունների հիմնավորումներ, հաշվետվություններ	2
16.	Պաշտոնների անձնագրեր	2, 5
17.	Աշխատանքային պայմանագրերի օրինակներ / դասախոսներ և ուսանողներ/	2
18.	Դասախոսների վարձատրության նոր տարբերակված համակարգի նախագիծ	2
19.	Բուժական գործ, Ստոմատոլոգիա և Իրավագիտություն ՄԿԾ-ների բենչմարքինգի նմուշներ, վերանայված առարկաների ուսումնական ծրագրեր և աշխատանքային նախագծեր	3, 10
20.	ՄԿԾ-ի դասընթացների տրամաբանական հաջորդականության հարցի քննարկմանը առնչվող արձանագրություններ /ամբիոններ/	3
21.	Ինքնավերլուծությունում ներկայացված 3 ՄԿԾ-ների ամբողջական փաթեթները, բոլոր բաղադրիչներով՝ ուսումնական պլաններ, առարկայական ծրագրեր և հանձնարարականներ/ առաջադրանքներ:	3
22.	Իրավիճակային առաջադրանքների նմուշներ տարբեր մասանգիտությունների համար	3

23.	Ատեստավորման հանձնաժողովի նախագահների կարծիքներ	3
24.	Ռուսաստանի Դաշնության պետական կրթական չափորոշիչ	3
25.	Մագիտրոսական ՄԿԾ	3
26.	Կառավարում ՄԿԾ	3
27.	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ	3
28.	Պրակտիկայի օրագրեր, ղեկավարների կարծիքներ	3
29.	Արտերկրում պրակտիկայի մասին տեղեկատվություն	3
30.	Մոնիթորինգի արդյունքներ, հանդիպումների, քննարկումների վերաբերյալ նյութեր	3, 10
31.	«Գիտական հետազոտությունների մեթոդիկա» առարկայի ծրագիրը	3
32.	ՈՒսանողների գիտական խմբակների աշխատանքային, թեմատիկ պլաններ	4, 6
33.	Ուսանողների կատարած ռեֆերատների, անհատական, կուրսային, դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի օրինակներ, կարծիքներ, գրախոսականներ և դրանց կատարման կարգերը,	3, 4
34.	Ներբուհական ուսանողական կոնֆերանսների, օլիմպիադաների, սեմինարների, կլոր սեղանների անցկացման վկայություններ	4, 6
35.	Ուսանողի ուղեցույց/անգլերեն, հայերեն/	4
36.	ՈւԽ և ՈՒԳ կանոնադրությունները և նիստերի արձանագրությունները՝ պլանային և ոչ պլանային	4
37.	Ուսանողական գիտական խմբակների արձանագրություններ	4, 6
38.	Կարիերայի կենտրոնի հաշվետվություն /2022-2023 թվական/, գործատուների շրջանում իրականացրած հարցումներ	4
39.	Դասախոսի վարկանիշավորման կանոնակարգի նախագիծը /Վարկանիշավորման օրինակներ/	5
40.	Գիտական և գործնական կոնֆերանսների նյութեր, հրապարակումների օրինակներ /դասախոսներ, ուսանողներ/	5,6
41.	Դասախոսների, երիտասարդ գիտնականների և ուսանողների գիտական աշխատանքները տպագրության ներկայացնելու մեթոդաբանությունը և կարգը	5
42.	ՊԴԿ-ի և վարչակառավարչական անձնակազմի վերապատրաստումների, /որակավորման բարձրացման դասընթացների աշխատանքային պլաններ, ծրագրեր և ժամանակացույց; План обучения 40 сотрудников на 2023 год.	5

43.	Դասալսման արձանագրություններ, դասալսման ժամանակացույց, ձևաթերթ	2, 5,10
44.	Դասախոսի անհատական պլան կամ պլանի ձևաթուղթ	5
45.	Միջազգային հարաբերությունների բաժնի կանոնադրությունը	9
46.	Համագործակցության պայմանագրեր ՀՀ և արտերկրի համալսարանների, գիտահետազոտական ինստիտուտների, հիվանդանոցների, կլինիկաների, ուսումնական բազաների հետ	9
47.	ՈԱԿ պլանավորման փաստաթղթեր	10
48.	ՈԱԿ կանոնադրություն	10
49.	Հարցումների անցկացման կարգ	10
50.	ՈԱԿ բոլոր գործող հարցաթերթիկները	10
51.	ՈԱԿ-ի կողմից ԻՎ-ում ներկայացված և իրականացված հարցման վերլուծությունները / *դասախոսների, ուսանողների հետ հարցումների արդյունքները, կարիքների վերհանման հարցումների արդյուքները ըստ պատասխանների թվային և տոկոսներով արտահայտված,*/	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. «Մեդեսի» ատամնաբուժական կլինիկա
2. «Մեդլայն» կլինիկա
3. Լսարաններ
4. Առարկայական կաբինետներ,
5. Սիմուլյացոն կենտրոն
6. Լաբորատորիաներ (միկրոբիալոգիայի, անատոմիայի, բժշկական ֆիզիկայի, կենսաբանություն, հիստոլոգիա, համաճարակաբանության, իմունաբանության, նորմալ ֆիզիոլոգիա, քիմիայի, կենսաքիմիայի, մանրէաբանության)
7. էլեկտրոնային գրադարան
8. գրադարան
9. Ընթերցասրահ (համակարգիչներով)
10. բուֆետ-ճաշարան
11. Մարզադահլիճ և սպորտ հրապարակ

:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՄԳՀ- «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան
ՈԱԿ- ներքին որակի ապահովման կեհտրոն
ՄԿԾ- մասնագիտության կրթական ծրագիր
ՄՈՒՀ- մասնագիտական ուսումնական հաստատություն
ՈԱ- որակի ապահովում
ԻՎ- ինքնավերլուծություն
ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն
ՈԱՇ- որակավորումների ազգային շրջանակ
ՌԾ- ռազմավարական ծրագիր
ՈՒՕ- ուսումնաօժանդակ
ՈՒԴԱ- Ուսումնական և դաստիարակչական աշխատանքներ
ՊԻԳԲ – պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում
ՈՒԳԸ- ուսանողական գիտական ընկերություն
ՈՒԽ- ուսանողական խորհուրդ
АККОРК (Агентство по контролю качества образования и развитию карьеры РФ)- Ռուսաստանի դաշնության Կրթության և կարիերայի զարգացման որակի վերահսկման գործակալություն
OSCE (Objective Structural Clinical Exams) - Օբյեկտիվ կառուցվածքային կլինիկական քննություն
NEET (national eligibility cum entrance test) -որակավորման ազգային քննություն և ընդունելության թեստ
ELS-էլեկտրոնային գրադարանային համակարգի
TBL- համագործակցային/թիմային ուսուցում
PBL- խնդրակենտրոն ուսուցում
RBL - արդյունքահեն ուսուցում